Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ստ. Զորյան

ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔ

891.99
Զ-83

ՊԵՏՀՐԱՏ
1932

19 NOV 2011

ՀՍԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

Պետհրատի տպարան
Գլավլիտ 7574 (բ)
Հրատար. 2296
Պատվեր 2298
Տիրաժ 5000

891.99
Զ-83

ՍՏ. ԶՈՐՅԱՆ

ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔ

ՎԵՊ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1932

12 APR 2013
30139
ՀԱՅԿ. ՍՍՀ ՊԵՏ. ՀԱՆՐ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ИМ. А. МЯСНИКЯНА
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
8275-53

I

— Ախ, милая, էլ մի ասի: Ուղղակի ջարդվել եմ, էնքան փնտռել եմ... Յերեւակայիր, ինձ ասում են «Աննա Վասիլյան, Աննա Վասիլյան, բաղվեցի»: Ու նկարագրում են քեզ: Մտածում եմ՝ չլինի՞ սա մեր Աննան է... Յերբեք չէյի կարող յերեւակայել, վոր դու այս քաղաքումն ես: Ի՞նչ լավ եր հանդիպեցի: Շա՛տ ուրախ եմ, милая, շատ...

Խոսողը՝ մազերը կարած ջահել կին եր՝ շրջազգեստը ծնկներից հետ: Նա, խոսելով, գլխարկը վերցրեց գլխից անկյունի կլոր սեղանին, վերարկուն հանեց գցեց վիեննական աթոռի թիկունքին և ինքը, ամրան ձերմակ շորերով, նստեց մյուս աթոռին ու, մետաքսե ծաղավոր չալն ուսերին առնելով, աչքերը կուչ ածելով, լուսնտալ դիտեց սենյակը:—Հնաձև անսպակի բուֆետ-պահարան:—Ծայրերն ասղանկար սրբիչ: Գրադարակ՝ անկազմ գրքերով:—Ելի պահարան՝ մի զույգ կիսաբաց:—Պատերին հնորածանոթ, ամեն տեղ տեսած պատկերներ: Իսկ սենյակի մեջտեղը սպիտակ սփռոցով ճաշասեղան, վորի մոտ նստել եր ինքը տանտիրուհին՝ Աննան՝ պարզ հագնված, ուրախ, բայց և անակնկալ այցից փոքր ինչ շփոթված:

— Դե ասա տեսնեմ, милая, ի՞նչպես ես ապրում: Ի՞նչպես ես գլխավորում այդ խեղճ, տխուր քաղաքում: Վո՞նց սիրտդ չի ձաքում մեծ քաղաքներից հետո: Հը՞... Մի տեսնես ինչե՛ր են լինում Թիֆլիսում, Բաքվում,

Մոսկվայում: Թատրոն, օպերա, յերեկույթներ. հազար ու մի զվարճություն: Հենց փողոց դուրս գալն ուղղակի տոն է: Իսկ այստե՛ղ... Վորքան նկատեցի այս յերեք օրվա մեջ—մի կարգին կաֆե, մի կարգին զբոսարան չկա: Ժողովուրդն անճաշակ հագնված, խեղճ, անհամարձակ... Կարևորը—ժպիտ չկա, ժպի՛տ... Զարմանում եմ, վոր դու, մեծ քաղաքի կյանքի սովոր, կարողանում ես ապրել այստեղ: Յերևի մի կարգին հասարակություն էլ չկա, վոր հետը խոսես, հը՞: Հուսահատական է: Ասենք, միջավայրը, գույնը, քեզ դարձրել է անպահանջկոտ. պղծել է, յերևի, վրադ, հը՞... Ութ-ինը տարի յե, կարծեմ, չենք հանդիպել, այնպես չի՞: Վերջին անգամ քեզ տեսել եմ Բաքվում՝ 20 թվին: Հետո լսեցի, վոր ամուսնացել ես կոմունիստի հետ: Ու հետքդ կորցրի, понимаешь!... Ասում են՝ ամուսինդ կոմունալ տնտեսության վարիչն է, հա՞:

— Այո:

— Վոչինչ: Здорово! Դա մեծ քաղաքներում կոմիսարի պաշտոնի պես բան է: Լավ դիրք ունի, յերևի.. Իսկ Իլյասիս պաշտոնն այնպես է վոր—շարունակ Մոսկվա, Բաքու, Թիֆլիս: Յես էլ նրա հետ: Չեմ սիրում մի տեղ նստել: Բայց դու չասիր, թե ինչպես ես զգում քեզ...Վո՛չ լավ, վո՛չ վատ—այդպե՞ս հասկանամ ուսերիդ շարժումը: Ճիշտն ասած՝ աչքիս շատ ես փոխվել, գիտե՞ս: Մի քիչ, կարծես—չնեղանաս—պառավել ես: Հապա մի յերեսդ դեպի լույսն արա: Այո, դեմքդ էլ առաջվա փայլն ու թարմությունը չունի կարծես: Չլինի յերեխաներ ունես, հը՞: Յերկո՞ւսը: Քանի տարեկան են:

— Մեկը վեց, մյուսը՝ չորս:

— Հապա ո՞ւր են:

— Շուտով կգան: Աղախինը տարել է զբոսանքի:

— Ուրեմն յերկու յերեխայի մայր ես: Не ожидала! Իսկ յես յոթը տարի յե ամուսնացել եմ—դեռ յերեխա չունեմ: Այսինքն՝ չեմ ուզում ունենալ: Գլխացավանք է և, ինչպես հանգուցյալ մամաս կասեր՝ «վոտի կապանք»: Յերեխա ունեցողն, ասում են, շուտ է պառավում: Մամաս կասեր՝ «պատից մի քար էլ վոր հանես, տեսքը կփոխվի»: Յեվ դա ճիշտ է: Յես նախապաշարված չեմ, բայց պառավների ասածները շատ դեպքերում ճիշտ են դուրս գալիս:

Նա լռեց. նորից լոռնետը աչքերին դնելով՝ դիտեց սենյակի կահերն ու իրերը:

— Այդպես... Իսկ մարդդ ի՞նչպես է վերաբերվում քեզ: Այսինքն՝ սիրո՞ւմ է:

Աննան ամոթխած ժպտաց:

— Վոչինչ, հաշտ ենք ապրում,—ասաց նա, փոքր ինչ քաշվելով մեծ քաղաքներից յեկած ընկերուհուց, նրա նորաձև թանգ հագուստներից, ականջօղերից ու մետաքսե շալից:

— Հաշտը դեռ բավական չի: Սե՛ր եմ ասում: Կարգին սե՛ր: Այ, օրինակ, Իլյասս, կարող եմ ասել, ինձ շատ է սիրում: Չի թողնում մի բանի ձեռ տամ. «Մատներդ մի փչացնի: Թող աղախինն անի—դրա համար է փող ստանում»... Չի ուզում, օրինակ, յերեխա ունենամ: «Դա մեշչանական ցանկություն է, ասում է, յերեխա ունենալը»: Ճիշտն ասած՝ յես էլ գոհ եմ... Դու յերեխաներից չե՞ս նեղվում...

— Ինչ խոսք: Իհարկե: Յերեխա պահելը հեշտ չի: Շարունակ զգում ես—չհիվանդանան, չվարակվեն, չընկնեն, չվնասվեն: Մի խոսքով՝ ահագին հոգս:

— Նրանց պատճառով չես կարող, յերևի, կինո

դնալ, թատրոն, համերգ: Իսկ յեթե հիվանդանան՝ վա՛յ քեզ: Այդպես չէ՞:

— Իհարկե:

— Յերևակայում եմ, խեղճ Աննա: Ուրեմն տանջվո՞ւմ ես ելի: Դա նկատելի յե, զգում... Ի միջի այլոց, սա՞ յե քո շիֆոնիերկան: Նո՞ւ: Что за чудовище Ասենք այսպիսի քաղաքում, յեթե սա յել գտնվում է—լավ է, Что-ж!... Իսկ դու, ի միջի այլոց, միշտ այդպե՞ս ես հագնվում: Այդպես պարզ, հասարակ: Յես կարծում եմ մարդդ բավական լավ ռոճիկ ստանա, ուրեմն կարող է քեզ ավելի լավ հագցնել: Այդպես չէ՞: Թե դու պահանջկոտ չես... Յես, ո՛... Բավական է Իլիասին ասեմ՝ «տես այդ կնոջ շորն ինչ լավ գույն ունի»— յերկրորդ օրն անմիջապես կբերի: Այդ կողմից Իլիասը մի հատ է. վորտեղից ել լինի՝ կճարի: Չասեմ ել—ինքն առնում է հավանած կտորը: Ի միջի այլոց, մի ծանոթ ունեմ՝ «կյանքը,—ասում է,—նոր շոր հագնելու և ճամփորդելու մեջ է»: Նոր շորն իսկապես մարդու տրամադրությունն բարձրացնում է, ջահելացնում: Հասկանո՞ւմ ես: Իսկ դու, բավական չէ այսպիսի քաղաքում ես ապրում, բավական չէ քեզ տվել ես յերեխաների հոգսին, հրաժարվել ես, յերևի, և քո լավ սովորությունից — ճաշակով հագնվելուց. հը՞... Հիշում եմ քեզ յերկնագույն շորերով—ինչ գեղեցկություն եր: Դու почти առաջինն եյիր մեր մեջ... Յես նախանձոտ չեմ. ասում եմ առանց թաքցնելու: Դու այնքան գրավիչ ու թարմ եյիր այն ժամանակ, վոր հիմա, անկեղծ, տարօրինակ է թվում, թե ինչպես մարդ կարող է փոխվել այդքան... Չգիտեմ, գուցե և փոխված չես, բայց այդպես ես թվում այդ շորերից մեջ... Հետո. հիշում եմ—ինչ լավ ականջօղեր ունեյիր, մարգա-

րիտներ, ճաշակով զարդեր: Դրանք մնո՞ւմ են, թե կորցրիք այս խառնակ տարիներում... Մանավանդ, ականջօղերդ քեզ շա՛տ եյին սազում, շա՛տ: Հիմի ել չե՞ս կախում: Ասենք՝ հա, մարդդ կոմունիստ է: Իսկ դու հո կոմունիստ չե՞ս դառել: Չե: Այդ լա՛վ է: Զգաստնաս, ամա՛ն: Բոլոր զգացումներդ կհանեն, քեզ տախտակ կդարձնեն: Մարքսիստնե՛ր... Այո, այն ժամանակ դու մի հատ եյիր, Աննա...

Յեվ ջահել կինը, աչքերը նորից կուչ ածելով, կըրկին նայեց Աննային ու գլուխն օրորեց մտախոհ.

— Այո, ջահելությունն ուրիշ բան է,—ասաց նա յերազուն:

Այս խոսքերը նա ասաց այնպես, վոր դրանք կարծես վերաբերում եյին և՛ իրեն, բայց Աննան այնպես հասկացավ, վոր դա պարզ ակնարկ է այն մասին, թե ինքը՝ Աննան արդեն թառամել է, ծերացել: Յեվ այդ բանը դիպավ Աննայի սրտին: Նա այն կարծիքի չեր, թե ինքն արդեն թարմությունը կորցրել է: Բայց ճիշտ եր այն, վոր առաջվա պես լավ չի հագնվում. իսկ այդ մասին նա մտածում եր այսպես.—Թող յերեխաները մի քիչ մեծանան, մանկապարտեզ կամ դպրոց գնան, մարդն ազատվի ամենօրյա ժողովներից, խորհրդակցություններից, ծրագիրներից,—այն ժամանակ ինքը նորից և՛ կհագնվի և՛ թատրոն ու կինո կերթա մարդու հետ... մի խոսքով՝ կապրի լիքը, հետաքրքրական կյանքով, ինչպես առաջ—աղջիկ ժամանակը, ու վոչ թե այնպես, ինչպես ապրում է հիմա—միշտ տանը, յերեխաների հոգսով տարված, շրջանից ու հասարակությունից կտրված, մեծ քաղաքներ գնալու հնարավորությունից զուրկ:

— Այո, ջահելությունը լավ բան է, Ռոզա,—

ասաց Աննան, նույնպես մտախոհ, ընկերուհու հագուստներին ու զարդերին նայելով:

Լռեցին: Ռոզան, շրջազգեստի փեշերը ծնկների վրա ուղղելով, աչքի պոչով նայեց բազկին կապած փոքրիկ վոսկե ժամացույցին:

— Ի՞նչ ես շտապում,—ասաց Աննան,— սպասիր դեռ թեյ պատրաստեմ, մի քիչ խոսենք: Շուտով յերեխաներս էլ կգան՝ կտեսնես: Գուցե Տիգրանն էլ գա— կծանոթանաս...

— Ի միջի այլոց,—խոսեց Ռոզան, վոտը ծնկանը դնելով,—յերեկոները մարդուդ հետ ո՞ւր եք գնում:

Աննան ժպտաց:

— Ի՛: Տիգրանն սկի ժամանակ ունի, վոր մի տեղ գնանք: Շարունակ մտածում է այս տունը շինի, այն տունն սկսի... Դու նստիր, Ռոզա. տաս րոպեյից թեյը պատրաստ կլինի:

Մինչ թեյը կեփեր—յերեխաներն աղախնի հետ մտան սեղանատուն և հետաքրքիր զարմանքով նայեցին անծանոթ «ծյոծյային»: Դրանք յերկու խարտյաշ գլուխներ եյին իրար նման, գարնան օդից թարմացած դեմքով ու աշխուժացած:

— Մամա, մենք շուն տեսանք,—ասաց փոքրը, դեպի մայրը գալով:— Նստած վոսկոր էր կրծում:

— Միս եր ուտում,—ուղղեց մեծը, ամաչկոտ նայվածքը հոնքերի տակից գցելով անծանոթ մորաքրոջ յերեսը:

Իսկ անծանոթ մորաքույրն իր հերթին, աչքերը կկոցելով, լոռնետով նայում եր նրանց ու ժպտում:

— Լավ յերեխաներ ունես, Աննա,—ասաց նա հիացումով:—Բայց բոլորովին քեզ նման չեն: Կապույտ աչքեր: Խարտյաշ մազեր: Չլինի՞ հորն են քաշել...

Հա՞: Я так и полагала! Սուրենն հա՞յրն էլ այսպես խարտյաշ մազեր ունի և կապույտ աչքեր...

Խոսեցին յերեխաների բնավորության մասին և, թեյ խմելով, հիշեցին անցյալը, հարց ու փորձեցին միմյանց ծնողների մասին, վոր ցրված եյին հիմա զանազան քաղաքներում, ու նորից Ռոզան զարմացավ իրենց անակնկալ հանդիպման վրա: Մանուկները, իրենց բաժին թեյը խմելով, աչքի տակով նայում եյին անծանոթ «ծոծյային» և աշխատում կարծես մի բան հասկանալ նրա ասածներից: Իսկ աղախինը Բուրաստանը՝ մի աչքը Ռոզայի շուրթերին, մյուսը յերեխաների կողմը՝ շտապեցնում եր նրանց. «խմե՛ք, շուտ, խմե՛ք. քնելու ժամանակն է»: Յեվ դարձյալ նայում է Ռոզային ու շուրթերը հուպ տալիս:

Բուրաստանին դուր չեր գալիս նրա խոսելու ձևը, կտրած մազերը և շուրթերի կարմիր ներկը:

Խոսակցությունը տևեց ժամից ավելի. յերեխաները քնեցին, և Աննան Բուրաստանին ճամբեց հանգստանալու:

— Դե, милая, իմ գնալու ժամանակն է,—ասաց Ռոզան՝ նորից բազկին կապած վոսկե յերկարուկ ժամացույցին նայելով:—Իլիասս կսպասի: Դուրս եմ յեկել մի ժամով, բայց արդեն յերեք ժամ է այստեղ եմ: Ե՛, շա՜տ ուրախ եմ: Դեռ այնքա՜ն կտեսնվենք: Ամառը մնալու յեմ: Յեկ մեզ մոտ: Տես ինչպես ենք ապրում հյուրանոցում: Մարդուդ հետ յեկ: Համար 12:

— Այդ իրեն կարգին,—ասաց Աննան, և խնդրեց, վոր նա էլ իրեն չմոռանա, այցելի, քանի այստեղ է: Ու հրավիրեց ճաշի: Հենց կիրակի օրը կարող են գալ:

— Այսոր ի՞նչ է:

— Հինգշաբթի:

— Հինգշաբթի՞: Կարելի չէ: Ինչո՞ւ չէ:

Ընկերուհիները համբուրվեցին, և Աննան ճամփու դրեց նրան մինչև մուտքի դուռը: Շեմքում կանգնած՝ մի անգամ էլ նայեց նրա «Վիկտորիա» գուլպաներին, կարճ չրջազգեստին, որ վերարկուի տակ հազիվ էր յերևում, և կարճ մազերին, որոնք նրան տալիս էին դպրոցական աղջկա տեսք:

«Թոզան կարծես ավելի ջահելացել է», մտածեց Աննան, և չգիտես ինչու, հոգոց քաշելով, աստիճաններով բարձրացավ վեր և գնաց ուղիղ ննջասենյակ, ուր յերեխաները հանգիստ քնել էին արդեն իրենց ցանցապատ մահճակալներում: Նայեց յերեխաներին, փոքրիկի գլուխն ուղղեց բարձի վրա, ապա կանգնեց հայելու առաջ:

«Մի՞թե իսկապես շատ եմ փոխվել», ասաց մտքում ու յերեսը մոտեցրեց հայելուն: «Մարդ իրեն փոխվելը դժվար է նկատում», —ավելացրեց, մատով աչքերի տակի մաշկը հարթելով, որը նրան թվաց թուլացած ու կուչ յեկած: «Յես կարծում եմ՝ Թոզան սխալվում է. հագուստը մարդու դեմքը շատ է փոխում. այս շորն ինձ միշտ հասակով է դարձնում». և Աննան զգաց, որ հագինը յերբեք իրեն չի սազել: Այ, տես կրեպ-դը-շինը ուրիշ է... «Հապա մի փորձենք», ասաց նա մտքում ու շուռ յեկավ դեպի պահարանը, հանեց սև կրեպ-դը-շինի չրջազգեստը և նախ բռնեց կրծքին, իրանը ծածկեց մինչև պարանոցը ու նայեց հայելուն: Դեմքն, իրոք, փոխվեց—ավելի ջահելացավ: «Իսկ յեթե հագնեմ, ավելի կփոխվեմ», ասաց նորից մտքում, և տանելն ու հագնելը մեկ արավ: Հագնելուց հետո՝ պուդրա քսեց. հոնքերը շտկեց, մազերի սանրվածքի ձևը

փոխեց փոքր ինչ ու նորից նայեց հայելուն: Նայեց ու ժպտաց:

«Թող Թոզան հիմա տեսնի», —ասաց նա ժպիտի միջից, և հիշեց ադամանդյա ականջօղերը, որ շատ էին սազում սևի հետ:

Նա կրկին գնաց դեպի պահարանը, և այս անգամ նրա ներքին աչքից հանեց՝ կարմիր փայտից շինած, կողերն ու կափարիչը փորագրած մի փոքրիկ արկղ (որը ամեն տեսակ փորձություններից ազատելով, մայրը պահել էր նրա համար) ու դրեց զարդի սեղանին: Յերբ կափարիչը բաց արավ, հանկարծ՝ սև թավիշի մեջ դրած մատանիներն ու քորոցները ելեքտրական լույսից շողշողացին այնպես, կարծես խավարում իրար գտնի հավաքված լուսատտիկների խումբ: Վաղուց Աննան չէր նայել դրանց (արկղը պահում էր մարդուց գրեթե ծածուկ).—Հրճվանք զգաց հանկարծ և մի ցանկություն՝ փորձել այդ բոլոր մի անգամ... և շողակն քորոցը խրեց կուրծքը: Սև փոնի վրա դա փայլեց շողարձակ աստղի նման:

Աննան շրջվեց, նայեց իրեն հայելու մեջ մի քանի կողմից ու նորից ժպտաց:

— Թոզան թող հիմա տեսնի, —կրկնեց մտքում, վերցնելով ականջօղերը:

Ու այդ բոլորից հետո, յերբ նորից նայեց հայելուն, Աննային այնպես թվաց, թե հայելու մեջ յերևացողը ոտար կին է: Ու զարմացավ—ի՛նչ ձիգ, սլացիկ հասակ. ի՛նչ կուրծք, ի՛նչ թարմություն ու փայլ... Նա ինքն իրեն չէր ճանաչում—այնքան փոխված էր իր աչքում ու թարմացած: Նայում էր իրեն ու ժպտում: Շրջվում էր ու դիտում տարբեր կողմերից, հետո փեշը հավաքում էր ու գնում մի յերկու քայլ, գլուխը յետ

շրջած, ինքն իրեն նայելով: Մի անգամ, յերբ հայելուց բավական հեռացավ՝ նկատեց, վոր գուլպաներն ու տուֆլիները սև շրջազգեստի հետ չեն սազում: Զգաց ինչ-վոր անախորժ աններդաշնակություն...Յեվ գուլպաներն ու տուֆլիները փոխելով՝ նորից կանգնեց հայելու առաջ:

Հիմա լավ եր: Հիմա բոլորը ներդաշնակում եյին իրար:

Այժմ նա իրեն դուր եր գալիս:

— Լավ է: Ինչ գեղեցիկ կին է,—ասում եր նա, յերրորդ դեմքով խոսելով, իրեն ուրիշի տեղ դնելով: Ու յերևակայում եր,—յեթե այս հագուստներով ու զարդերով յերևա մի որ հասարակության մեջ՝ ի՛նչպես կզարմանան մարդիկ:—Ո՞վ է այս գեղեցիկ կինը...

— Իսկապես վոր գեղեցիկ,—ասաց նա և ուզեց շրջվել նորից՝ մեջքը տեսնելու—հայացքն ընկավ մյուս սենյակը, և նա կանգ առավ արձանացած:

Մյուս սենյակի մեջտեղը կանգնած եր ամուսինը և զարմացած նայում եր իրեն:

II

— Սա ի՞նչ նորություն է,—ասաց ամուսինը տարակուսած ժպիտով, պորտֆելը թևի տակից վերցնելով ու ձեռքի հետ ցած կախելով:

Աննան շփոթված, հանկարծակիի յեկած, նույնպես ժպտաց ամաչկոտ ու ձեռը բնազդաբար դրեց կրծքի քորոցին, վորը վոչ թե փայլում, այլ ելեկտրական լույսի տակ, ճառագայթում եր ինչպես արևի կտոր: Ու այդպես՝ ձեռը կրծքին՝ ժպտալով առաջ յեկավ: Մի յերկու քայլից հետո, սակայն, ավելի շփոթվեց և նույնիսկ կարմրեց, յերբ զգաց ականջողերը, վոր անսովոր ծանրությամբ կախվել եյին ականջներից: Հետո զգաց զգեստը, նոր ձևի սանրվածքը—ու ձեռն ակամա վերցրեց քորոցից: Միևնույն է, յերկու ձեռով այդ բոլորը չի կարող ծածկել... Ու սթափվեց մեկ ել, մտածելով, թե ինչու յե ամաչում և առհասարակ քաշվում մարդուց... Յեվ նրա մեջ զարթնեց դիմադրելու մի ցանկություն, յեթե մարդը վորևե դիտողություն, նկատողություն անի...Մարդը նրան սիրում եր և յերբեք նկատողություն, հանդիմանություն չեր արած, բայց այժմ, չգիտես ինչու, Աննային թվում եր, թե Տիգրանը չի կարող անտարբեր լինել, մանավանդ ականջողերն ու կրծքի քորոցը տեսնելուց հետո, վորոնց գոյության մասին նա այն գիտեր միայն, վոր կինը «մի յերկու զարդ» ունի, բայց թե ինչ.—վորոշ

չգիտեր։ Յեվ Տիգրանն, իսկապես, զարմացած եր փոքր ինչ։

— Այո, անսպասելի նորություն,— ասաց նա նորից կնոջը դիտելով վոտից-գլուխ, ու գլխարկը ժպիտով պորտֆելը ծնկանը զարկեց։

Զգիտես ինչու, ամուսնու տոնը դուր չեկավ Աննային և նորից նրա մեջ բարձրացավ գլխադրելու ցանկությունը։ Այժմ արդեն նա այն կարծիքի յեր, վոր յեթե ինքը յետ է մնացել ընկերուհուց, կտրվել է մեծ քաղաքների կյանքից, մոռացել է լավ հագնվելն ու ճաշակով ապրելը—դրա պատճառն, անշուշտ, ինքը Տիգրանն է։

— Ի՞նչ է վոր,—ասաց Աննան, նորից յերկու քայլ առաջ գալով։— Դու ուզում ես ուրեմն, վոր աղախնի պես հագնվեմ և յերեխաների փեշը բռնեմ—նստե՞մ...

— Մի՞թե յես այդպես բան ասի,—զարմացավ Տիգրանը, նրա հանկարծական բռնկման պատճառը չհասկանալով։

— Հապա ի՞նչ. «նորություն է»... Ե՛հ, ուրիշների զարդարվելը սովորական է, իմը «նորություն»։ Նայում ես՝ ուրիշները ապրում, հագնում են ուզածի պես, իսկ յես այսպես տանը փակված...

Նա հուզվում եր, և հուզումն ու արցունքները հազիվ եր զսպում։.

Ու խոսում եր, վորպեսզի լաց չլինի։

— Գիտես ի՞նչ,—շարունակեց բեկբեկուն ձայնով,—յես այս քաղաքում խեղդվում եմ ձանձրույթից, մենակությունից...

Տիգրանն ավելի զարմացավ. կնոջ հուզումը նրա համար շատ ստարտի յեր։

— Յես այդ չգիտեյի,—ասաց նա հանդիստ։—

ինչո՞ւ յես ձանձրանում։ Ի՞նչ պատահեց հանկարծ, ինչո՞ւ նոր միայն զգացիր։

— Յես միշտ ել զգացել եմ, բայց առիթ չի յեղել ասելու։

— Ուրեմն ի՞նչ։ Հիմա առիթ կա՞։

— Առիթ... Քանի վոր դու հանդիմանում ես ինձ, թե «նորություն է», յես ել ուզում եմ ասել, վոր հերի՛ք է... Մենք ապրում ենք, վերջապես, տանջվելո՞ւ, կյանքի կողքով անցնելո՞ւ, թե՞ կյանքը վայելելու համար, ասա խնդրեմ...

Տիգրանը նայեց Աննային ու ժպտաց։

— Դու ինչ-վոր տարօրինակ ես այսոր։ Հանկարծ, չգիտես ինչո՞ւ, սկսել ես փիլիսոփայել։ Ավելի լավ է՝ թող այդ բոլորը, արի տես ինչ եմ ասում... դեռ հագնվելու ժամանակ կլինի։

Յեվ նա նստեց բազմոցին ու լիքը պորտֆելը դրավ ծնկներին։

— Այսոր, վերջապես, վորոշվեց, վոր քաղաքին հարկավոր է պլան. պետք է հիմնովին նորոգել քաղաքը...

Տիգրանը, վոր յերեկոները տուն գալիս սովորաբար հոգնած եր լինում, այսոր, ընդհակառակը, գվարթ եր և լավ տրամադրության մեջ։ Պատճառը հետևյալն եր։ Մի յերկու տարվա վեճերից հետո՝ այսոր քաղխորհուրդը վորոշել եր, վերջապես, վոր անհրաժեշտ է քաղաքը հիմնովին փոխել—փողոցները լայնացնել, հրապարակներ բանալ, բուլվարներ գցել, և ապա շինել նոր լուսավոր ու հարմար տներ։ Հենց սկզբից պաշտոնի կոչվելու որից, Տիգրանը պնդել եր, թե պետք է քաղաքը յենթարկել նոր պլանավորման և նոր տները շինել ըստ այդ պլանի—քաղխորհրդի նա-

8275-53

խաղաղությունը կարծես թե դեմ չէր դրան, բայց գտնում էր, թե տներ պիտի չլինեն առայժմ քաղաքի ազատ տեղերում, և թե քաղաքի միջոցները չեն ներում նոր հատակագծով կառուցումներ կատարել. պետք է առայժմ բավարարել բնակարանային կարիքը և պլանը թողնել մի կողմ. «Հրամայականը դա յէ,—պնդում էր միշտ նախագահը:—Պլանը հետո»... Իսկ Տիգրանը չէր ուզում ցրիվ կառուցումներ կատարել. դա և աննպատակահարմար էր գտնում և թանկ... Բացի դրանից, առանց հատակագծի, նրան թվում էր խարխափում է. իսկ հին քաղաքը իր հին հատակագծով բոլորովին չէր գոհացնում նրան: Վերջերս վերադաս մարմինները նույնպես անհրաժեշտ էյին գտել քաղաքի հատակագծումը... և այսօր, վերջապես, Տիգրանը կարողացել էր ընդունել տալ իր առաջարկը: Յեվ Տիգրանը, չնայած ընդհանրապես սովորույթ չուներ իր բոլոր գործերի մասին խոսել կնոջ հետ,—այսօր սակայն, ուրախությունն այնքան մեծ էր՝ ուզում էր պատմել այդ մասին, մասա՛մբ հաղթանակ տարած մարդկանց եգոիզմից դրդված (վոր չնայած տեղին ու պայմաններին, ուզում են անպատճառ խոսել իրենց ուրախության պատճառող խնդրի մասին), մասա՛մբ էլ գուցե կնոջ հուզումը մեղմելու համար:

— Ու թե նա, թե նախագահության անդամները,—շարունակեց Տիգրանը ձեռները շփելով,—յեկան, վերջապես, այն համոզման, վոր առանց պլանի... Դու ինձ չե՞ս լսում, Աննա...

— Ինձ համար միևնույնն է պլանով եք կառուցում թե առանց պլանի... օգուտն ինչ...

— Ի՞նչպես թե...

— Ի հարկե: Կառուցում եք, չինում, ուրիշներն

ապրում են այդ արևոտ սենյակներում, իսկ մենք, յես մնում եմ միշտ այս տխուր, անարև տանը: Կարող ես մի քիչ էլ ընտանիքիդ մասին մտածել,—ասաց Աննան չոր ու անմիջապես շարունակեց հեգնանքով:—Կարծեմ սոցիալիզմը դեմ չի լինի, յեթե յերեխաներիդ ու կնոջդ մի յերկու ժամ նվիրես որական:

Տիգրանը լրջացավ:

— Քո կարծիքով ուրեմն յես չե՞մ սիրում քեզ ու յերեխաներիս:

— Ապացույց չեմ տեսնում: Սիրողը գոնե մի որ տանը կնստի: Ժողո՛վ, ժողո՛վ. անվերջ ժողով ու խորհրդակցություն: Կյանքը կարծես միայն ժողովի մեջ է: Մարդիկ ապրում են, ուրախանում. իսկ դու—ժողով՝ խորհրդակցությո՛ւն, ժողով—խորհրդակցություն: Ո՛ւհ, ձանձրալի յե, հոգնել եմ արդեն: Յերեխաների ու տան հոգս. խոհանո՛ց... Չի կարելի այս հոգսերը կիսես ինձ հետ, իբրև սոցիալիստ...

— Այ, յերբ շուտով հիմնենք մեր խոհանոց-գործարանը՝ վոչ միայն քեզ հետ, այլև քաղաքի բոլոր կանանց հետ կկիսեմ այդ հոգսը,—կատակեց Տիգրանը, Աննայի վերջին խոսքերի մեջ զգալով և՛ հանդիմանություն և՛ դառն հեգնանք: Տիգրանն այդ զգաց ու մտածեց, թե ինքն, իսկապես, քիչ է ուշադրություն դարձնում ընտանիքին: Բայց ի՞նչպես ուշադիր լինի, յերբ ամեն րոպե, ամեն վայրկյան գործերը, ժողովները, կառուցվող տները կանչում են իրեն:

— Գիտե՛ս ինչ,—սկսեց Տիգրանը, բայց Աննան թույլ չտվեց նրան շարունակելու:

— Դու նայիր ուրիշներին, տես, ինչպես են ապրում. և՛ լավ հագնվում են, և՛ լավ ուտում, և՛ լավ ժամանակ անցնում: Իսկ դու—ծրագիրնե՛ր, ծրագիրնե՛ր. Գլուխդ

լցրել ես ծրագրերով ու պլաններով: Ուզում ես այս հազար տարվա մռայլ ավերակը դարձնել սպիտակ քաղաք... Իսկ այդ բոլորը ձանձրույթ է պատճառում ինձ:

Տիգրանն ավելի լրջացավ, կնոջը նայեց ավելի ուշադիր ու գլուխն օրորեց զարմացած:

— Ձանձրույթ... Քո ձանձրույթը և հուզումը առաջանում է, գիտե՞ս ինչից, Աննա,—ասաց Տիգրանը հանդարտ:

— Ինչի՞ց,—հարցրեց Աննան անհամբեր, գրգռված:—Ինչի՞ց:

— Պարապությունից: Յեթե դու էլ աշխատես, այսինքն՝ մասնակցես հասարակական գործերին, մեր ամենօրյա աշխատանքին, և՛ չես ձանձրանա և՛ այդպես չես խոսի:

— Վո՞րն է ձեր գործը... Սոցիալի՞զմը,—ասաց Աննան հեգնանքով, բայց խոսքը փոխեց իսկույն:—Յեվ դու էլ, վերջապես, ո՞ւմ համար ես այդպես մոռացել քեզ: Ո՞վ է գնահատելու, շնորհակալ լինելու, ասա խնդրեմ:

— Կուսակցությունը: Բանվոր դասակարգը: Վերջապես, յես ինքս բավարարված կզգամ, վոր...

Աննան քմծիծաղ տվեց: Իսկ Տիգրանը գլուխն օրորեց նորից:

— Զարմանալի յե, թե ինչո՞ւ հենց այսօր ես միայն այդ բանը հիշել: Ո՞վ է վիրավորել քեզ, ի՞նչ վատ վերաբերում են ունեցել դեպի քեզ, վոր վրդովվել ես այդպես... Կամ ի՞նչ է միտդ ընկել: Զարմանալի յե: Դու այսօր արտասովոր ես վո՛չ միայն արդուզարդով, այլև մտքերով,—նկատեց Տիգրանը կես-կատակ, կես-լուրջ և, մատը վոտին ցցելով, նայեց

կնոջը մտահոգ աչքերով:—Ասա խնդրեմ, ինչ է պատահել:

— Ի՞նչ... Վոչինչ: Միայն թե այս քաղաքում յես խեղդվում եմ ձանձրույթից, մենակությունից... Յեվ ո՞վ է մեղավորը: Դո՛ւ... Այո: Մի զարմանա: Դու ինձ կաշկանդել ես, դու ինձ դարձրել ես...

— Ի՞նչ: Ասա, ասա...

Աննան չփոթվեց Տիգրանի հանգիստ տոնից, չիմանալով ասելիքը, բայց շուտով հավաքեց իրեն ու շարունակեց արագ-արագ·

— Ամեն որ խոսում եք մարդկության ազատության, յերջանկության մասին և դու՝ կոմունիստդ ինձ պահում ես այսպես...

— Ի՞նչպես...

— Այսինք, դուք մերձավորի հետ գլուխ չունեք· դուք միշտ խոսում եք հեռավորի մասին: Ամեն բան անում եք հեռավորի համար...

— Քո կարծիքով վա՞տ ենք անում:

— Յես չեմ ասում վատ եք անում· այլ ուզում եմ ասել, վոր... մի որ ժամանակին տուն չես գալիս... և ամեն որ ստիպված ենք կերակուրը տաքացնել: Մի որ չես հարցնում՝ կինդ, յերեխաներդ ի՞նչպես են ապրում: Քեզ պահում ես, ինչպես... նո՛ւ, ինչպես ամուրի...

— Տարորինակ է,—գլուխը շարժեց Տիգրանը:—Դու այնպես ես խոսում, Աննա, կարծես դիտմամբ եմ անում...

— Ավելի լավ է, քան այսպես...—ընդհատեց Աննան մարդուն և հանկարծ... ձեռն յերեսին դնելով հեկեկաց:

Վորքան էլ Տիգրանն աշխատում էր կնոջ կցկտուր

խոսքերից մի բան հասկանալ, այսինքն իմանալ նրա հուզմունքի պատճառը—չէր կարողանում, տարակուսում էր յենթադրությունների մեջ. այժմ նրա հեկեկանքը տեսնելով՝ ավելի շփոթվեց: Բայց և այնպես անքալով յելավ ու բռնեց կնոջ ձեռը:

— Հանգստացիր, Աննա: Լա՛վ, հանգստացիր: յերեխա չես...

Ու հանգստացնող խոսքերով կնոջը տարավ ննջարան, ուր յերեխաները խաղաղ քնած էյին իրենց ցանցապատ մահճակալներում:

Աննան նստեց հայելու առջև՝ աթոռին, և թաշկինակն աչքերին, շարունակեց հեկեկալ: Գինդերը դողդողում էյին ականջներին, իսկ թիկունքի բարակ թիակները ցնցվում նուրբ զգեստի տակ: Յեվ առհասարակ նրա ուրախ արդուզարդի մեջ տարօրինակ էր թվում այդ հեկեկոցը: Թվում էր համառ է անում...այնպես չէր սազում լացը այդ հագուստին:

Բայց ամուսնու հորդորներն, ի վերջո, հանգստացրին նրան, և նա լռեց, յերեսը պատին դարձրած:

. . . .

Փոքր անց Տիգրանը դուրս յեկավ նրա մոտից, պորտֆելը վերցրեց սեղանատան բազմոցից և մտավ իր առանձնասենյակը: Կնոջ վարմունքն ու խոսքերը ծանր տպավորություն արին նրա վրա: Մտածում էր, վոր պետք է, իսկապես, Աննային հնարավորություն տալ կյանքից չկտրվելու. պետք է ուշադիր լինել:

«Ճիշտ է, յես տան-ընտանիքի վրա քիչ եմ ուշադրություն դարձնում», ասում էր Տիգրանը մտքում և գնում-գալիս սենյակի յերկայնքով: Միևնույն ժամանակ նրան բոլորովին անհասկանալի չէր թվում, թե ինչու յե կինը զուգվել-զարդարվել այդպես: Ի՞նչ է հի-

շել արդյոք... կամ ի՞նչ էր ուզում ասել իր անկապ խոսքերով... Ջղայնացե՞լ է իսկապես մենակությունից, թե՞ անցյալն է միտն ընկել...«Տարօրինակ է, տարօրինակ»,—կրկնում էր Տիգրանը մտքում, և վոչ մի բացատրություն չէր գտնում Աննայի վարմունքին: Լավ կլիներ հետը խոսել, իմանալ շարժառիթը... «Բայց այսօր չէ. հուզված է, ջղայնացած: Վա՛ղը: Վաղը հանգիստ կխոսենք ու կբացատրվենք», մտածեց Տիգրանը: «Ասում է՝ ինձ չես սիրում»...Ինչ դատարկ խոսքեր: «Բայց, մի բան ճիշտ է, վոր յես ժամանակ չեմ գտնում իմ սերն արտահայտելու. ավելի սիրելու... Այդ ճիշտ է. և Աննան իրավունք ունի դժգոհելու.... Բայց արդյոք ի՞նչ է պատահել հանկարծ. այդ է հետաքրքրական...

«Վաղը, վաղը կբացատրվենք»,—կրկնեց նա իրեն հանգստացնելով, և այդ ժամանակ նրա աչքն ընկավ պորտֆելին, վոր ուռած պառկել էր գրասեղանին: Հիշեց նորից իր զրույցը քաղխորհրդի նախագահի հետ, հիշեց տարած հաղթանակն ու ժպտաց:

«Հիմա վոր կարելի յե գործ տեսնել»,—ասաց մտքում, ու մոտեցավ պատին փակցրած քաղաքի հին հատակագծին, վոր նման էր վիթխարի կրիայի—վանդակավոր մեջք ու տարածված շոշափուկներ: Տիգրանն այդ հատակագիծը չէր սիրում, չէր սիրում մանավանդ հին քաղաքը... Վաղուց նկատել էր, վոր հին տների արանքում նորերը շինելով՝ դրանով քաղաքի տեսքը չի փոխվում բնավ: Հին, մռայլ, տձև քաղաքը մնում էր էլի նույնը, ու նոր տներն, ընդհակառակը, ավելի էյին ընդգծում նրա հնությունն ու գորշությունը: Այդ նկատեց նա, յերբ մի անգամ բարձրացավ մոտակա բլրի

գլուխը. ու այդտեղ ահա մտածեց, որ քաղաքը պետք է նորոգել հիմնովին և նոր ձև տալ նրան...

«Հիմա կարելի յե արդեն գործի անցնել»,—կրկնեց նա, ու պատկերացրեց քաղաքը իր ուզած ձևով կերպարանափոխված, զարգացած, տարածված... Այժմյան նեղ քուչաների տեղ—լայն, ընդարձակ փողոցներ, մռայլ, մի հարկանի տների փոխարեն—սպիտակ, բարձր տներ... Սպիտա՛կ, սպիտա՛կ տներ, որ հեռվից նայողին թվա ճերմակ մարմարից շինած քաղաք... Քանի մտածում՝ այնքան վորոշվում ու պայծառանում եր նոր քաղաքը նրա յերևակայության մեջ—սպիտակ, մեծ, լուսավոր տներ... Ամեն տան առաջ ծաղկանոցներ ու ծաղկող ծառեր... Հրապարակներ, բուլվարներ ու ծառուղիներ...

Հրապարակներում ու բուլվարներում արձաններ, շատրվաններ... Ասֆալտած փողոցներով սլլում են ավտոներ, ավտոբուսներ... Քաղաքը գրնգում է առավոտյան ու յերեկոյան շարժումից... Տոն օրերին ոդանավերը՝ բազեների պես ճախրում են քաղաքի գլխին, և մարդիկ վայելում են իրենց տոնորյա հանգիստը զբոսանքի մեջ...

Այստեղ նա հիշեց նորերս քաղաք յեկած ճարտարապետ Միրյանին, վորին մտադիր եր հանձնել քաղաքի հատակագիծը:

«Առավոտը պետք է գնալ նրա մոտ»,—ասաց Տիգրանը մտքում, ու նստեց ապակով ծածկված գրասեղանի առաջ, բայց հանկարծ հիշեց կրկին կնոջ հանդիմանական խոսքերը ու նորից մտածմունքի մեջ ընկավ....

III

Առավոտները Տիգրանը սովորաբար զարթնում եր յերեխաների աղմուկից.—ժամը վեցին, յոթին փոքրիկներն արթնանում եյին և սարյակների պես ճռվողում անվերջ. խաղում եյին մահճակալների վրա, յերգում ձեն-ձենի տված, կամ պահանջում, վոր մայրը հեքիաթ պատմի: Յեվ Աննան հանպատրաստից կամ գրքերից հեքիաթներ ու առակներ եր պատմում կենդանիների և թռչունների մասին: Մանուկները մի առժամանակ լսում եյին և հափշտակված լսում, ապա իրար յետևից հարցեր տեղում մոր գլխին, թե ինչո՞ւ, օրինակ, այնպես պատահեց, վոր գայլի պոչը պոկվեց—Հապա գայլն ի՞նչ պիտի անի առանց պոչի... Յեվ այդ պոկված պոչն այնպես եր վշտացնում մանուկներին, վոր քիչ եր մնում հեկեկան. ու մայրն ստիպված եր լինում մխիթարել նրանց, ասելով՝ թե գայլի պոչը նորից է դուրս գալիս: Բայց այդտեղից ծագում եր մի նոր հարց. «Ի՞նչպես է դուրս գալիս»: Նրանց բավարարելու համար մայրն ստիպված եր լինում այդ հարցին ել պատասխանել. «Դուրս է գալիս այնպես, ինչպես ձեր գլխի մազը խուզելուց հետո»... Յերեխաները բավարարվում եյին և պահանջում մի նոր պատմություն: Աննան պատմում եր ելի՛, ելի՛, մինչև հոգնում եր, վորից հետո հագցնում եր նրանց ու տանում սեղանատուն: Այդ հեքիաթները տարբեր ձևերով կրկըն-

վում էյին ամեն ոք, և Տիգրանը շարունակ լսելով՝ արդեն ծանոթ էր նրանց. գիտեր, թե վո՞րը ինչով է վերջանում և վորի մասին ինչ հարցեր են տալու յերեխաները:

Այդ առավոտ էլ Տիգրանը զարթնեց յերեխաների աղմուկից, բայց Աննայի ձայնը չլսեց... Հիշեց անմիջապես իրիկվա դեպքը՝ իր ու Աննայի միջև յեղած խոսակցությունը և՝ «վոչինչ,—ասաց մտքում,—յերևի քիչ նեղացել է, կխոսենք. կանցնի»... Ու, ըստ սովորության, զարթնելուն պես հագնվեց, լվացվեց և մարմնամարզական մի քանի շարժում անելով, գնաց սեղանատուն:

Աննան սովորաբար այնտեղ էր լինում՝ յերեխաների մոտ:

Բայց այսոր չկար: Յերեխաներին թեյ էր տալիս պառավ Բուրաստանը... Զբաղվա՞ծ էր Աննան արդյոք, թե՞ հուզված. գուցե և բարկացած իրիկվա դեպքից հետո—այնուամենայնիվ չկար: Տիգրանը կամեցավ անցնել ննջարան՝ Աննայի մոտ, մեկ էլ մտածեց, թե մի գուցե իր մի խոսքից հուզվի նորից, ավելի լավ է հանգստանա, հետո կխոսեն սառնասիրտ: Բայց և այնպես Աննայի հանկարծական փոփոխությունը նորից տարորինակ ու անհասկանալի թվաց նրան...

«Լավ, հետո կբացատրվենք»,—մտածեց Տիգրանը, արագ-արագ թեյելով, ապա, կառքի ձայնը լսելուն պես, պորտֆելը թևի տակն առավ շտապ, յերեխաներին հրաժեշտ տվեց՝ մեծի Սուրիկի այտին խփելով, փոքրիկի՝ Կարլենի ծնոտը բռնելով:

Կառքը, ինչպես միշտ, կանգնած էր ուղիղ դռան առաջ, և կառապան Մանասը մի կարմիր անդոտի վերնաշապիկ հագին, մազերի փունջը գլխարկի տակից ճա-

կատին թափած՝ սպասում էր Տիգրանին, իր տեղն ամուր նստած:

Յերբ Տիգրանը գլխով բարևելով նստեց,

— Վո՞ր տունը, ընկեր վարիչ,—հարցրեց Մանասը:

— № 35-ը:

Միշտ այդպես է լինում: Կառք նստելիս՝ Մանասը միշտ կհարցներ «վո՞ր տունը», վորովհետև Տիգրանը, գրասենյակ «անցնելուց» առաջ, գնում էր կառուցվող շենքերը դիտելու կամ, ինչպես ինքն էր ասում, շենքերի «առաջադիմությունը» տեսնելու, և ամենից առաջ այդ № 35-ը. նախ վոր դա քաղաքի առաջին կոմունա-տունն էր, յերկրորդ նրա համար, վորովհետև շուտով կատարվելու յեր այդ տան հանդիսավոր բացումը: № 35-ը նշանավոր էր և նրանով, վոր նրա հատակագծի համար հայտարարվել էր հատուկ կոնկուրս, վորին մասնակցել էր և նորերս քաղաք յեկած, ավելի շուտ հրավիրված ինժեներ Միրյանը. տունը շինվում էր հենց նրա հատակագծով: Յեվ նա, տան բացմանը հրավիրվելով, յեկել էր ժամանակից փոքր ինչ շուտ մասամբ հանգստանալու, մասամբ և տան կառուցմանը հետևելու:

Ահա ինչու բացառիկ վերաբերմունք ուներ Տիգրանը դեպի № 35-ը: Բայց նա, ի հարկե, դրանով չէր սահմանափակվում: Այդ յերեքհարկանի տան դուրսը ներսը դիտելուց հետո՝ այցելում էր մյուս կառուցումները. ինժեներից ու վերակացուներից,—աշղեկներից տեղեկանում էր ինչ է արված, ինչ է պակասում, ինչ կարիք ունեն. Հաճախ, պորտֆելը թևի տակ սեղմած, բարձրանում էր տախտակամածները—դիտում վորմնադիրների աշխատանքը, ցեմենտի և բետոնի լցքը

իսկ այնտեղ, ուր պատերն ավերված՝ ներսի աշխատանք էր սկսված,—մտնում էր հատակի, առաստաղի, դռների աշխատանքը տեսնելու. Տիգրանին առանձնապես դուր էր գալիս փայտի աշխատանքը, մանավանդ ռանդված տախտակների խեժահոտը և գանգուր տաշեղների գոյացումը, վորոնք ինչ-վոր կախարդանքով, կարծես, անհայտությունից կյանք եյին առնում և ուրախությունից թռչկոտում... իսկ կարմիր ներկած հատակների պլպլուն տեսքը, պատերի ու դռների յուղաներկ ժպիտը հանգստացնում էր նրան, մոռացնել տալով հերթական հոգսերը, և նա ակամա շփշփացնում էր ինքն իրեն, ուրախությունն արտահայտում դյուղավարի—ձեռը խփում ուղեկցող ինժեների կամ աշխատանքների վերակացուի մեջքին. «Մալադեց, կեցցե»... Ինժեները կամ աշխեկն այդ «մալադեցն» ու «կեցցեն» վերագրում եյին իրենց և հպարտանում, վոր կոմունալ տնտեսության վարիչը լավ է վերաբերվում իրենց... Անցնելով կառուցումից-կառուցում՝ Տիգրանն ամեն տեղ մի դիտողություն, մի հանձնարարություն էր անում կամ վորևէ առաջարկ, պահանջ նոթագրում ծոցատետրում, վորից հետո կառքը նրան տանում էր գրասենյակ, ուր նրան սպասում եյին բազմազան գործեր՝ դիվանագետ Դավիթի զեկուցումը, հատակագծեր, աշխատանք ու գործ խնդրողներ, բողոքով կամ խնդրանքով յեկած տնատերեր, մանավանդ տնատերեր, վոր գալիս եյին միշտ դժգոհելու, թե ինչու յեն վերցնում իրենց այգին, բակը, ինչու յեն քանդում իրենց հին տունը՝ այս կամ այն շենքը կառուցելու համար: Տիգրանի համար ամենադժվարը—այդ տնատերերի հետ խոսելն էր, վորովհետև նրանք յերբեմն գրգռվում եյին, բռունցքները խփում սեղանին կամ լաց լինում, չկամե-

նալով հրաժարվել հայրենի սեփականության մի կտորից անգամ: Բայց, յերբ քանդվող տան համար առաջարկվում էր դրամական հատուցում—փոխհարկը, թեև մեծ դժվարությամբ, այնուամենայնիվ անցնում էր: Սակայն, այդպես հեշտ չէր վերջանում այգետիրոջ ու բակատիրոջ գործը.—նրանք հատուցումի հույս չունենալով կամ չնչին հույս ունենալով, դժգոհում եյին, աղմկում, սպառնում մութ ակնարկներով. «լա՜վ, կտեսնե՜նք»... Մի որ մեկն, որինակ, մի հասակով քաղաքացի, վորի բակի կեսն ընկնում էր նոր տան հատակագծի մեջ,—պահանջում էր ձեռ չտալ իր բակին, վորովհետև շոր փռելու տեղ չունի և մանավանդ բակում մի մարգ թարխուն կա, «վոր աշխարհի հետ չի փոխի»:

«Քո թարխունի համար մենք մեր շինարարությունը չենք դադարեցնի», ասել էր Տիգրանը:

«Լավ,—տնքացել էր մարդը,—դրա համար պատասխան կտաս»...

Լինում եյին մարդիկ էլ, վոր Տիգրանի արածները բացատրում եյին անձնական համակրանքով ու հակակրանքով, անգամ կաշառքով,—Ո՜, կաշառքը մութը տեղ լույս է տալիս... Յեվ այդ իմաստով քանի անստորագիր թղթեր եյին մտել Բանգյուղտեսչություն և վորքան ծածուկ ստուգում ու քննություն կատարվել: Մի անգամ նույնիսկ, մի ուշ յերեկո, ժողովից դառնալիս, մեկը—կրակել էր նրա վրա, քերծելով պիջակի թեքը. բռնելուց պարզվել էր, վոր դա այն մարդն էր, վորի այգին վերցրել եյին հիվանդանոց կառուցելու համար..

Բոլոր գանգատներն ու բողոքները Տիգրանը լսում էր համբերությամբ, բայց համառության ու սպառնալիք նկատելիս—հեգնում էր. «այդ հողը հո աստծուց չես ստացել. մարդիկ տվել են, մարդիկ էլ վերցնում են»:

կամ՝ «քո պատճառով քաղաքը պիտի տուժի՞. ավելի լավ չի՞ մենակ դու տուժես»... Ահա ինչու տնատերերը ատում էյին նրան: Այդ ատելության մասին գիտեր և ինքը. լսել էր անձամբ, դեմ առ դեմ, պատահաբար, կամ թե չէ հայտնում էյին շողոքորթ մարդիկ՝ նրան դուր գալու:

— Իսկ հիմա, յերբ նոր հատակագիծն սկսի ձևել ամբողջ քաղաքը և նրա մկրատի տակ ընկնեն բազմաթիվ տներ, այգիներ, պարտեզներ ու թարխուններ, այն ժամանակ տես—սեփականատիրական զգացմունքներն ինչպես են բորբոքվում»,—մտածում էր Տիգրանը կառքում նստած, հիշելով ճարտարապետին, վորին ուզում էր հանձնել քաղաքի հատակագծումը և վորին ուզում էր տեսնել այսոր: Տիգրանն արդեն խոսել էր նրա հետ, թե հանձն կառնի՞ արդյոք քաղաքի նոր հատակագիծը, յեթե իրեն դիմելու լինեն: Ճարտարապետ Միրջանը, թեև կարճ ժամանակով յեկած, տվել էր իր համաձայնությունը: — Ինչո՞ւ չէ. կարելի՛ յե ... Յեվ այժմ, յերբ քաղաքի նոր հատակագիծ ունենալու խնդիրն ստացել էր իր դրական լուծումը, Տիգրանը վորոշել էր հենց այսոր գնալ ճարտարապետի մոտ՝ հետը խորհրդակցելու, գործը նրան հանձնելու և, յեթե ցանկանա, քաղաքին ծանոթացնելու:

— Ը՛ռռռ...

Կառքը կանգ առավ մի յերեք հարկանի նորակառույցի առաջ, վորը—գետնից մինչև տանիքը,—փայտե սյուների, կապերի, սանդուղների ու տախտակամածների մեջ էր, և դրանց արանքից նրա քարաշեն մարմինը հազիվ էր յերևում. կարծես վանդակի մեջ դրված էր մի անհնազանդ գանդված, վորին կապել-կաշկանդել էյին՝ մարդկային կամքին յենթարկելու:

Սա էր կոմունա-տունը, կամ, ինչպես կոմունալ տնտեսության մեջ էյին ասում, № 35-ը, վորը քաղաքում կառուցված և կառուցվող տներից ամենամեծն էր՝ իր բնակարանների ու սենյակների թվով, և բացառիկը՝ իր նշանակությամբ. առաջին տունը, ուր, ինչպես Տիգրանն էր ասում, կենվորներն ապրելու էյին «կոմունիստական հիմունքներով»:

Ինչպես միշտ՝ մուտքի առաջ Տիգրանին դիմավորեց գեղական ծղոտե գլխարկով պահակը՝ զինվորի նման ձեռը քունքին դնելով:

— Գործերը վո՞նց են, Սահակ:

— Հըա լավ են, ընկեր վարիչ:

— Դեռ բան չեն գողացե՞լ,—կատակեց Տիգրանը:

— Հըա չէ, ընկեր վարիչ:

Գողության համար բակում իսկապես առատ նյութ կար թափած-թափթփած—բաց ու փակ պահեստներ, տախտակների դեզեր, յերկաթեղեն, թիթեղներ. դրանց հետ միասին կրի ու ավազի բլուրներ, զանգուր տաշեղների կիտուկներ, վոր թեթև քամուց ցրիվ էյին գալիս բակովը մեկ:

Ինչպես միշտ, այստեղ էլ Տիգրանը ներս մտնելիս, սառնություն զգաց և խեժահոտ: Դռները դեռ չէյին կախել, և միջանցուկ քամին խաղում էր բոլոր սենյակներում: Թխկոց, մուրճի զարկեր—մի տեղ մեխում են, մի այլ տեղ տաշում, յերրորդ տեղում սղոցում և թեփը վերևից մաղում է ցած ինչպես բանջարաբուսակ ձյուն. յերկրորդ հարկը բարձրանալիս Տիգրանի ուսերն սպիտակեցին: Այժմ գործի մեծ մասը կատարում էր հյուսների արտելը: Նրանք ճերմակ գոգնոցներ կապած չինում էյին հատակները, առաստաղները, դռներն ու լուսամուտները:—Բարձրացել էր այնպիսի խժական աղ-

մուկ, որից մարդու ականջներ դժժում էին և մարդ խոսակցին հազիվ էր լսում:

Յերկրորդ հարկի առաջին սենյակում Տիգրանը հանդիպեց արտելի ավագին՝ վարպետ Վարդանին, որը գրպանով գոգնոցը վրան, մատիտն ականջի յետևը՝ լուսամուտի փեղկեր էր փորձում մի այնպիսի չափած-ձևված շարժումներով, կարծես ավելորդ յեռանդ չէր ուզում վատնել, ու ավելի աչքով էր գործ տեսնում: Արտաքինով էլ տարօրինակ էր—գլխի մազերը ճեփ-ճերմակ, բեղերը սև, թուխ աչքերը խորը նստած, կարծես ավելի ներսն էին նայում, քան դուրս:

— Յե՞րբ ենք պրծնում, վարպետ,—ասում է Տիգրանը մոտենալով:

— Ժամանակին,—պատասխանում է վարպետ Վարդանը մի բառով, աչքերը լուսամուտից չհեռացնելով:

Տիգրանը դրանից չի վիրավորվում—սովոր է վարպետի անտարբեր վերաբերմունքին. գործի ժամանակ վարպետ Վարդանը խոսում է միշտ առանց խոսակցին նայելու, և Տիգրանը դա համարում է բնավորություն դարձած սովորույթ, որին անտեղյակ մարդը կարող է կարծել, թե վարպետն արհամարհում է դիմացինին:

—. Ուրեմն 20-ին կհասցնենք հա,—շարունակում է Տիգրանը մի տեսակ կասկածանքով:

— Կհասցնենք,— պատասխանում է վարպետը, աչքերը դարձյալ լուսամուտին:—Ես յերկու հերթ աշխատելով՝ չենք հասցնի՞...

Տունը ժամանակին ավարտելու համար աշխատում են, իսկապես, յերկու հերթ. աշխատում են մինչև յերեկոյան տասը, էլեքտրական լույսերի տակ: Բայց Տիգրանն էլի յերկյուղ ունի, թե հանկարծ չհասնի և ինքը սուտ դուրս գա: Դեռ այնքան աշխատանք կա. դեռ բո-

լոր հարկերի հատակներն ու առաստաղները պատրաստ չեն. ցածի հարկում սվաղը նոր են սկսում. յերկրորդ, յերրորդ հարկերում լուսամուտները նոր են դնում, պատշգամբների ճաղերը նոր են շինում. հետո ապակելու, ներկելու խնդիր կա, ներկը չորանալու համար ժամանակ է հարկավոր... Չէ՛, Տիգրանին այնպես է թվում, թե չեն հասցնի և թե այդ բոլորը քսան օրում հազիվ վերջանա... Ու կասկածը սրտում անցնում է սենյակից-սենյակ, հարկից-հարկ և նորից գալիս վարպետ Վարդանի մոտ.—Հիմա ամեն ինչ նրանից է կախված—նրա արտելի յեռանդից:: Տիգրանին թվում է, որ նրա արտելը դանդաղ է աշխատում, և ուզում է այդ մասին խոսել վարպետ Վարդանի հետ:

Բայց այդ րոպեյին արագ ներս ընկավ մի կարճահասակ, ակնոցով ժիր ծերուկ՝ ճերմակ փուքաժկան սպիտակ մազերին, հնաձև չեսուչա պիջակի կրծքին մի յերկրորդ պենսնե, որի դայթանի թելը հորթի թոկի պես գցել էր վիզը:

— Հարգանքներս, Տիգրան Պետրովիչ,—ասաց նա շտապ-շտապ, գրեթե հևալով:

— Բարև, Սամսոն Սիմոնիչ:

Դա քաղաքի գլխավոր ինժեներն էր, հայտնի Սամսոն Սիմոնիչը, որ նույնպես յեկել էր աշխատանքները տեսնելու. փողոցում կանգնած կառքից իմանալով կոմունալ տնտեսության վարիչը ներսն է՝ շտապել էր, և դրանից հևում էր կարգին:

— Ինչպես յերևում է գիշերը բավական աշխատել են, Սամսոն Սիմոնիչ:

— Բավականին,—ասաց ծերունին, գլուխը խառը մարդու տեսքով:—Փայտի գործը, ոչի՛նչ, լավ է առաջ գնում: Սվաղը նույնպես: Միայն, ափսոս, կիրն

Ստ. Զորյան.—Սպիտակ քաղաք—2

ВСЕНАРОДНА БІБ... ВУНБ ... УКРАЇНИ

այնքան էլ լավը չի: Հետո...— նա ուզեց ելի ինչ-վոր բան ասել, բայց չհիշեց. ծոցատետրը հանեց. կրծքին կախած յերկրորդ պենսնեն դրեց, քթին, մյուս ակնոցի վրա: — Հա՛ — ապակիները: Խնդրում եմ ապակիներն չտապալեցնեք: Քանի անգամ գրասենյակին հիշեցրել եմ...

— Շատ լավ, անպայման:

Առաջին հարկում Տիգրանը սվաղչիներին նկատեց, վոր քիչ շտապեն. այդ բանը ինժեներ — Սամսոն Սիմոնիչին դուր չեկավ: Չեր սիրում, վոր կոմունալ տնտեսության վարիչն իր կողմից կարգադրություններ է անում շենքերում աշխատող վարպետներին ու բանվորներին, ուստի անուղղակի այդ զգացնել տվեց նրան:

— Դուք ապակիները, խնդրեմ, չմոռանաք...

Հետո ասածի տպավորությունը ցրելու համար կարծես՝ հայտնեց, թե նկուղի հատակը ցեմենտում են այսօր, յեթե ցանկանում է Տիգրան Պետրովիչը — կարող է տեսնել:

Վորքան էլ Տիգրանն շտապում էր, բայց և այնպես իջավ նկուղը: Նկուղից հետո, բակը դուրս գալով, պահեստների առջևից անցնելիս՝ նորից հանդիպեց պահակ Սահակին, վորն այնպիսի քննող հայացքով նայեց իրեն, ասես ուզում էր իմանալ, հո հետը բան չի տանում:

Կառապան Մանասը շատ զարմացավ, վոր Տիգրանն այդ օրը էլ ուրիշ շենք տեսնելու չգնաց, այլ շտապեց գրասենյակ. նա չեր կարող իմանալ, իհարկե, վոր Տիգրանն շտապում է ընթացիկ գործերը վերջացնել, մի քանի կարգադրություններ անել, վոր ժամը ուղիղ տասներկուսին լինի ճարտարապետ Միրզայանի մոտ:

— Լսի՛ր, Մանաս, 12-ին այստեղ կլինես, — ասաց նա կառքից իջնելով:

Գրասենյակում դիվանապետ Դավիթը — ուսի մեկը բարձր՝ մյուսը ցածր մի պատկառելի ճաղատ — հանգամանորեն զեկուցեց ստացված գրությունների բովանդակությունը, ստացավ համապատասխան կարգադրություններ, վորից հետո Տիգրանն ընդունեց իրեն սպասողներին:

Առաջինը մի տարեց կին եր՝ վերից վար սև հագնըված. ներս մտավ նա հուղարկավորի պես լուրջ, ձըգված իրանով և շրթերն իրար սեղմած:

— Կարելի՞ յե:

— Խնդրեմ:

— Յես Ազատության փողոցի № 25 տան տերն եմ:

— Նստեցեք, խնդրեմ:

— Շնորհակալ եմ: Դուք վորոշել եք, ընկեր վարիչ, կողքի տան հետ վերցնել և իմ պարտեզը՝ ինչ-վոր տուն շինելու: Բայց գիտեք, ընկեր վարիչ, յես յերեխաներ ունեմ: Յեթե պարտեզս վերցնեք — պիտի գնամ ջուրն ընկնեմ, վորովհետև յերեխաներիս ապրուստն այդ ծառերն են: Հանգուցյալ ամուսինս դրանք տնկել է սև որվա համար...

— Ուրեմն ուզում եք չվերցնե՞նք:

— Խնդրում եմ, — ասաց կինը խուլ, բայց հուսալից ձայնով:

Սակայն Տիգրանը հիասթափեց նրան:

— Բայց դա վորոշված է, տիկին: Պետք է վերցնենք:

— Այդ դեպքում, խնդրում եմ, գոնե կեսը թողնեք:

— Չենք կարող: Դուք կստանաք ձեր ծառերի արժեքը:

— Բայց ախր ձեր տվածը չի կարող յերեխաներիս մեծացնել: Մտեք իմ դրության մեջ: Չէ՞ որ դուք էլ կնոջ, յերեխաների տեր եք:

Այս խոսքերի վրա Տիգրանը հիշեց կնոջը՝ Աննային,—նրա խոսքերը իր տխրության և ձանձրույթի մասին, ու մի ինչ-որ տհաճ բան զգաց: «Պետք էր նրա հանկարծական բարկության պատճառն իմանայի,—մտածեց,—գոնե առավոտը պիտի անեյի այդ բանը»:

Բայց նորից հանգստացրեց իրեն, ինչպես առավոտը զարթնելիս. «Ոչինչ, կխոսեմ յերեկոյան, ավելի հանգիստ ժամանակ»...

— Այդպես,—դարձավ նա տիկնոջը,—մենք մեր վորոշումը փոխել չենք կարող: Ձեր ծառերը կգնահատվեն, և դուք կստանաք նրանց արժեքը: Ինչ վերաբերվում է ձեր յերեխաներին՝ նրանք արդեն աշխատող մարդիկ են:

Կինը կարմրեց:

— Բացի այդ՝ քաղաքից դուրս ունենք ընդարձակ այգի, որ ձեզ մեծ յեկամուտ է տալիս:

— Ո՞վ ասավ,—զարմացավ տիկինը:

— Մենք գիտենք:

Լռություն:

— Այդ դեպքում՝ թողեք գոնե մինչև աշուն:

— Չենք կարող. տան կառուցումը պիտի սկսենք մի շաբթից:

Կինը տնքաց, հառաչեց, դժգոհ նայեց Տիգրանին ու դժգոհ էլ հեռացավ:

Սևազգեստ կնոջից հետո ներս մտավ ամրապինդ վով մի քաղաքացի՝ դարձյալ սեփական հողամասի խնդրով, ապա մի ճերմակ ծերունի... Հինգերորդից հետո Տիգրանն ընդհատեց ընդունելությունը, դիմա-

ճարտարապետին թողնելով մյուսներին պատասխանելու գործը, և ինքը ուղիղ տասներկու ժամին գնաց հյուրանոց:

Ճարտարապետը տանն էր: Դա քառասունն անց, խարտյաշ մազերով, բաց-պայծառ դեմքով տղամարդ էր. ուներ ձիգ, առողջ կազմվածք և համառ աչքեր, որ դուր են գալիս կանանց, բայց այնքան էլ հաճելի չեն տղամարդկանց: Թարմ դեմքի ածիլած այտերը կապույտին էյին տալիս: Յերբ Տիգրանը ներս մտավ՝ նա միայն ժիլետով—թեյում էր, փայլուն էլեկտրոնը սեղանին դրած: Տիգրանին տեսնելով՝ ընդառաջ յեկավ թևերը հյուրասիրաբար տարածած, ապա աթոռը քաշելով, մի բաժակ թեյ առաջարկեց:

— Յես յեկել եմ ահա թե ինչո՛ւ, ընկեր Միրյան,—սկսեց Տիգրանը նստելով և պորտֆելը ծնկներին դնելով:—Մեզ ծանոթ հարցն արդեն լուծված է: Քաղխորհուրդն յերեկվա նիստում վորոշեց ունենալ նոր հատակագիծ: Դուք խոստացել եք և հիմա պիտի հանձն առնեք այդ գործը:

Ճարտարապետը խարտյաշ մազերը յետ տարավ մտախոհ:

— Что-ж! քանի վոր ձեր քաղաքում մնալու յեմ մի առ ժամանակ, չեր խանգարի մի հիշատակ թողնել,—ասաց նա:—Յես իմ խոսքի տերն եմ: Բայց նկատի ունեցեք, վոր իմ տրամադրության տակ կարճ ժամանակ ունեմ: Հիմա հետաքրքրական է, թե դուք ինչպիսի՛ քաղաք, ինչպիսի՛ հատակագիծ եք ցանկանում:

Ինչպիսի՛ քաղաք... Տիգրանը կարծում է կդժվարանա քաղաքի իր պատկերացումը տալ մի քանի խոսքով, մինչև վոր ընկեր Միրյանը ծանոթանա հին քաղաքին, շրջապատին:

— Այդ ճիշտ է,— համաձայնեց Միրյանը, և բնակչության թվի, զբաղումների մասին կարճատև զրույցից հետո, ցանկություն հայտնեց ծանոթանալ քաղաքին:

— Այդ դեպքում, յեթե զբաղված չեք, գնանք հենց հիմա: Կառքն սպասում է:

— Ուրախությամբ,— համաձայնեց Միրյանը և, արագ հագնվելով, անձրևաթափը գցեց թևին:

Եվ մի քանի րոպեից արդեն կառքը տանում էր նրանց քաղաքի փողոցներով, ու Տիգրանը, ցույց տալով քաղաքի նեղ, ծուռ փողոցները և մի հարկանի ու յերկհարկանի գորշ տները, պատմում էր Միրյանին այդ հին քաղաքի անցյալից, ներկայից, ծանոթացնում էր նրա ընդարձակվելու հնարավորությունների հետ, խոսում էր նրա ջրային ռեսուրսների մասին, թե վորքան ոգուտներ կարող է տալ այն ապագայում. խոսում էր հին թաղերի և այն մասին, թե ինչ սարեր կան մոտերքում, վորոնք «լիքը գանձեր ունեն»; դրանք շահագործելու համար կարելի յե և գործարաններ շինել. այդպիսով սա կդառնա արդյունաբերական քաղաք, մնալով միաժամանակ հանգստի վայր, ամառանոց, քանի վոր օդն այնքան նպաստավոր է:

— Ահա անտառը,—ձեռը մեկնեց Տիգրանը դեպի քիչ հեռու գտնվող անտառը:—Տների մի մասը կարելի յե շինել նրա փեշերին կամ մասամբ նրա մեջ: Յերևակայո՞ւմ եք տեռրասներ, սպիտակ տներ, ծառուղիներ: Կդառնա մի տեսակ սանատորիա քաղաք: Թե չէ՝ նայեցեք այս հին տներին. ինչի՞ յեն նման. անօդ, անլույս. ամեն մեկը մի բուն՝ նախապաշարումների ու հնության... Յես կարծում եմ, ընկեր Միրյան, ավելի շատ համոզված եմ, մինչև վոր սրանք չքանդենք, չենք կարող արմատախիլ անել հին սովորությունները, հին կենցաղը, հին հոգեբանությունը: Նախապաշարումներն ու տրադիցիաները հին տներում ավելի յերկար են ապրում... Հին տունը, պառավի նման, նոր թարմ բան չի ընդունում իր մեջ.... Մինչդեռ նորը—նոր տունը—ա՛յլ է: Յերևի, փորձած կլինեք. նոր տունը նման է նոր աշխարհի, նոր տուն մտնողը նոր զգեստ հագնողի: Այնպես չէ՞: Նոր տունը, նոր քաղաքը մարդուն մոռացնել է տալիս հինը, իր անցյալը և տոգորում է նոր առույգ տրամադրությամբ: Այդ լինում է նույնիսկ ակամա, անգիտակցաբար... Յեվ դրա համար ահա, ինձ թվում է, մինչև վոր այս քաղաքացիներին դուրս չբերենք իրենց հին տներից—չենք կարող հասկացնել նրանց վո՛չ սոցիալիզմ, վո՛չ կոմունիզմ....

— Իհա՛րկե, իհա՛րկե,—գլուխը թափ տալով համաձայնվում էր Միրյանը, թեև սրտում համոզված էր, վոր դրանով սոցիալիզմ չի կառուցվի, վոր սոցիալիզմն իրեն չի էլ վերաբերում բնավ. ու զարմանում էր կոմունալ տնտեսության վարիչի հափշտակության վրա. նա լսում էր ակամա, ճիշտ այնպես, ինչպես արհեստավորը քմահաճ պատվիրատուի յերկար բացատրությունները. ինքը գիտի անելիքը, բայց լսում է քաղաքավարությունից դրդված: Այդպես էլ Միրյանը. մի քանի խոսքից հասկացել էր արդեն բանի էությունը, մնացածը լսում էր անտարբեր: Ու նրան թվում էր, թե այն բոլորը, ինչ ասում է կոմունալ տնտեսության վարիչը՝ նոր կենցաղի, նոր հոգեբանության ու սոցիալիզմի մասին—այդ բոլորն անիրագործելի ֆանտաստիկ բաներ են, վոր մարդիկ չեն կարող ապրել այդպիսի տներում և հաշտ մնալ ու իրենց յերջանիկ զգալ:

Կեսօրվա արևը վողողել էր քաղաքը․ առատ լույսերի մեջ նրա հնությունն ու խեղճությունն ավելի եյին յերևում, քան յերբևէ։ Ինչպես Հայաստանի քաղաքներից շատերը—սա էլ գտնվում էր լեռներով շրջապատված հովտի մեջ, և մի ծայրով ձգվում էր դեպի անտառապատ սարը։ Ո՞վ և յե՞րբ էր հիմք դրել այս քաղաքին—հայտնի չէր․ այդ մասին չէր հիշում վոչ մի պատմիչ կամ տարեգիր։ Ավանդություն կա, սակայն, թե նա հնումը, շատ հին ժամանակներում, յեղել է ինչ-վոր նախարարի սեփականություն․ իբրև ապացույց բերվում է միշտ մոտիկ սարի ավերակ բերդը և անտառի կիսակործան մատուռը, վորին տեղացիները, չգիտես ինչու «կոտրած վանք» են ասում։ Քաղաքի անցյալի մասին ավանդաբար հիշվում է և այն, վոր հնումը տները յեղել են գրեթե գետնափոր և մարդիկ ապրել իրենց անասունների ու ցանքսի բերքով։ Բայց սրանից հարյուր տարի առաջ, ասում են, քաղաքն սկսել է զարգանալ, և դարձել է առևտրականների ու արհեստավորների քաղաք։ Վերջին հանգամանքն իր կնիքն էր դրել քաղաքի վրա։ Տները յերկու տեսակ են և պարզ տարբերվում են իրարից․ այն ժամանակ, յերբ առևտրականների տները մեծ մասամբ յերկհարկանի յեն, սև, հաճախ սրբատաշ տուֆից, մնացածը մի հարկանի յեն, գորշ քարից ու հազիվ ծեփված․ սակայն բոլորի տների առաջ էլ պարտեզներ կան և փողոցի դռների առաջ քարե կամ փայտե նստարաններ, ուր հարևանները նստում-զրուցում են մինչև ուշ յերեկո։

Ձիերը գնում եյին բաշերը հովին տված, կառքը հանդարտ գլորվում էր փողոցից-փողոց, և Տիգրանը թեթևակի թեքված դեպի Միրյանը, պորտֆելը ծնկներին, ծանոթացնում էր նրան դարձյալ թաղերին, այն շենքերին, վոր կառուցել եյին վերջերս և այն ծրագիրներին, վոր ունեցել են։

— Այստեղ մենք մտադիր եյինք ընդարձակել և զբոսարան-պարտեզ գցել, բայց հետո վորոշեցինք, թե ավելի լավ է դարձնենք լայն հրապարակ՝ հասարակական խաղերի, հանդեսների և յերթերի համար... Ապագայում սա կլինի քաղաքի կենտրոնը... Յեվ անհրաժեշտ է, կարծում եմ, վոր կենտրոնում լինի մի այնպիսի հրապարակ, վոր տեղավորի բոլոր քաղաքացիներին՝ մանուկներից մինչև ծերերը... հրապարակ, ուր ապագայում կլինեն խաղեր, մրցություններ և պարգևատրություններ...

— Այո, այո, գլխով էր անում Միրյանը, նայելով այդ թզաչափ հրապարակի շուրջը կքած զառամ տներին, վորոնց ծեփը, ներկը ճաքճքած ու թափված եյին, սանդուխները ծռված, լուսամուտները հնորյա ու տձև։

Ձիերը դարձյալ բաշերը հովին տված՝ կառքը վազեցնում եյին փողոցից-փողոց, մերթ դժվարությամբ յելնում զառիվերներով, մերթ սրընթաց իջնում ցած, և Տիգրանը շարունակում էր դարձյալ․

— Մենք ավելի ուժ պիտի տանք, իհարկե, այն տիպի տներին, վորոնք քաղաքացիներին կդաստիարակեն կոմունիստական վոգով, հանրային շահերով... և վոչ թե բուրժուական տների նման մարդկանց զատեն, առանձնացնեն իրարից, ինչպես կալանավորին մեկուսարանում... Առանձնացած բնակարանը զարգացնում է հոգու առանձնություն, մեշչանական տրամադրություններ... Պետք է բոլորն ապրեն ինչպես մի մեծ ընտանիքի անդամներ։ Այնպես չէ՞...

Տները, մանավանդ բնակվողների կենցաղը Միր-

յանը չէր համարում իր անմիջական գործը․ նրանը քաղաքի հատակագիծն էր լինելու, բայց և այնպես հետաքրքրվեց քաղաքավարությունից դրդված, մասամբ էլ իր անհավանությունը հայտնելով:

— Ուզո՞ւմ եք ուրեմն բոլոր տները լինեն հանրակացարանների ձևով:

— Ոչ, տներ այնպիսի հարմարություններով, որ ամեն ինչը՝ խոհանոցից մինչև սեղանատունն ու լվացքատունը լինի ընդհանուր: Առայժմ գերադասելի են խոհանոց-սեղանատներ, մինչև կոմբինանք գործարան-խոհանոց: Սեղանատներին կից կլինեն, իհարկե, հավաքական հանգստի տեղեր—գրադարան, բիլիարդ, շախմատ...

— Այո, այո,—գլխով էր անում ճարտարապետը, մտածելով դարձյալ, որ անիրագործելի ֆանտաստիկաներ է ասում կոմունալ տնտեսության վարիչը, և որ դրանով մարդը դժվար թե հասնի սոցիալիզմին: Յեվ նա ոչ այնքան լսում էր Տիգրանին, որքան մտածում այն մասին, թե ինչքան ժամանակում կարող է վերջացնել հատակագիծը․ Նա հաշվում էր, որ կարելի յե վերջացնել և՛ յերկու ամսում և մի տարում, նայած հանգամանքներին ու պայմաններին:

Խոսելով՝ Տիգրանը չիմացավ ինչպես որն անցավ, և յերբ նայեց ժամացույցին՝ զարմացավ—չորսն էր․ Մանասին կարգադրեց վերադառնալ: Յեվ այնուհետև, վերադարձի ամբողջ ճանապարհին, մտածում էր՝ չհրավիրե՞լ արդյոք Միրյանին ճաշի և ավելի հանգամանորեն խոսել հետը: Բայց հիշելով Աննայի տրամադրությունը, մտածեց, որ կարող են տանը ճաշ պատրաստած չլինել, ու վորոշեց այդ անել մի ուրիշ անգամ...

* * *

Այդ միևնույն ժամանակ Աննան մտածում էր, թե ինչպես ընկերուհուն ու նրա ամուսնուն հրավիրի ճաշի, ի՞նչպես, յերբ դեռ մարդու հետ չի հաշտվել... Առավոտը նա սեղանատուն չմտավ, վորովհետև իրիկվա դեպքից հետո մի տեսակ անհարմար էր զգում Տիգրանին հանդիպել, բայց յերկար մտածելով գտավ, որ այդ դուրս չգալն էլ անհարմար էր: Այժմ սակայն հիշելով ընկերուհուն ճաշի հրավիրելու հանգամանքը, ցավում էր, որ այդպես արավ: Այնուամենայնիվ նա վճռել էր, ինչ ուզում է լինի, կիրակի օրը նրանց հրավիրել ճաշի, մանավանդ որ այդ մասին հայտնել էր արդեն Ռոզային՝ նրա այցելության օրը:

Յեվ յերբ Տիգրանը յեկավ տուն՝ Աննայի առաջին գործն յեղավ (իր մեջ ամեն ինչ զսպելով, առանց Տիգրանի յերեսին նայելու) հայտնել, որ Մոսկվայից յեկած ընկերուհին ու նրա ամուսինը կիրակի օրը լինելու յեն իրենց մոտ ճաշի:

— Այդ օրը գոնե, խնդրում եմ, տանը յեղիր: Անհարմար է:

— Շատ լավ,—ասաց Տիգրանը, ուրախացած, որ գործն այդքան հեշտ լուծում ստացավ:—Բայց դեմ չե՞յիր լինի, յեթե մեր ճարտարապետն էլ լիներ այդ օրը:

— Խնդրեմ,—ասաց Աննան, նույնպես գոհ, որ ճարտարապետի պատճառով գոնե մարդը ներկա կլինի ճաշին:

IV

Քաղաքի նոր հյուրանոցը, վոր կառուցել էր կոմու-
նալ տնտեսությունը իր գործունեյության առաջին որե-
րին, յերեքհարկանի շենք էր, մյուս տների համեմա-
տությամբ այնքան մեծ, ինչպես դրեդնոուտը բարկաս-
ների շրջանում: Մի հարկանի և յերկհարկանի տների
միապաղաղ գորշության մեջ նա աչքի յեր ընկնում
վոչ միայն վորպես նոր ու մեծ շենք, այլև գեղեցիկ
շենք: Ամենից առաջ նա սրբատաշ քարից էր, արտա-
քին պարզությամբ ու ներքին հարմարություններով:
Այդ էր պատճառը, յերևի, վոր տեղացիները հետա-
քըրքիր նորեկին քաղաքի տեսարժան վայրերը կամ, ինչ-
պես իրենք եյին ասում, «նվաճումները» ցույց տալիս—
չեյին մոռանում և հյուրանոցը: «Այս էլ մեր նոր հյու-
րանոցը»,—ասում եյին հպարտությամբ ու մի այն-
պիսի յեղանակով, թե տեսեք, միթե մեծ քաղաքներին
արժանի շենք չի, ու նայում եյին նորեկի շուրթերին.
ու պատասխանը լինում էր, իհարկե, միշտ գովեստ:
Ամեն մի գործուղված պաշտոնյա, մայրաքաղաքից յե-
կած ճամբորդ, գործարար թե տուրիստ—իջևանում
եյին այդ նոր հյուրանոցում:

Այդտեղ եյին իջևանել, ինչպես գիտեք, թե ճար-
տարապետ Միրյանը և թե Աննայի ընկերուհին՝ ամուս-
նու հետ: Միրյանին, վորպես հյուրի, կոմունալ տնտե-
սությունն էր սենյակ հատկացրել, իսկ Ռոզան, թեև

յեկել էր ամառը մնալու, բայց գերադաս էր համարել
ապրել հյուրանոցում, վորպեսզի, ինչպես ինքն էր
ասել, «հարմարություններ» ունենա և «ազատ լինի»
խոհանոցային ու տնային հոգսերից:

Նրա այցելության որից Աննան հանգիստ չուներ.
շարունակ մտածում էր նրան փոխ-այցելություն տալու
և նրան՝ ամուսնու հետ ճաշի հրավիրելու մասին: Թեև
Ռոզայի այցելությանն ակնարկեց այդ մասին, բայց
պետք էր հատկապես հրավիրել,—մտածում էր Աննան.
ու յերկար ժամանակ չէր իմանում այցի գնալիս ինչ
հագուստ հագնի, վոր պատշաճ լինի և տարվա յեղա-
նակին հարմար. մյուս կողմից՝ ընկերուհու և նրա
մարդու աչքում չերևա գավառացի: Ի վերջո, յերկար
ընտրությունից հետո, հագավ սև կրեպ-դը-շինը, մա-
զերը հարդարեց սովորականից ավելի խնամքով ու, յե-
րեխաներին Բուրաստանին հանձնելով, դուրս յեկավ
տնից՝ ռեդիկյուլը պայուսակի պես բռնած:

Հյուրանոցը գտնվում էր քաղաքի համարյա կենտ-
րոնում և հեռու չէր նրանց տնից. բայց Աննան յերբեք
չէր յեղած այնտեղ. նա մի տեսակ բնազդական թե նա-
խապաշարված տհաճություն էր զգում դեպի հյուրա-
նոցները, ուր կանգ են առնում ամեն կարգի ու բարքի
մարդիկ, և ուր, նրան թվում էր, ամեն ինչ բաց է
մարդկանց առաջ, անկարգ, աղմկալից. նրան թվում
էր, վոր ինքը հյուրանոցում ապրել չի կարող. այնտեղ
իրեն յերբեք ազատ չի զգա...

Այս մտքերով էլ նա բարձրացավ յերկրորդ հարկը,
գտավ № 12-ը և դուռը ծեծեց անվստահ, յերկու մա-
տով:

Դուռը բաց արավ մի բարձրահասակ, ջահել ու
փոքր ինչ լեցուն տղամարդ՝ մազերը խնամքով յերկու

կողմի վրա սանրած, փողպատը կիսակապ։ Մարդը իր խոշոր ընկուզաձև աչքերը Աննային հառելով՝ ժպտաց քաղաքավարությամբ։

Աննան, շփոթված աչք ածելով սենյակը, հարցրեց անհամարձակ։

— Ներողություն, այստեղ է Ռոզա...

Խոսքի կեսը դեռ բերանում՝ ներսից լսվեց Ռոզայի զրնգուն ձայնը.

— Արի, Աննա. այստեղ եմ... Полной хозяйкой войди!

Ռոզան պառկած եր յերկաթե մահճակալին, անկողնի վրա։ Աննան ներս մտավ՝ մի աչքը դուռը բացող տղամարդին, մյուսը Ռոզային, վոր շորերով պառկած եր յերկաթե մահճակալին, անկողնի վրա։ Տղամարդը (վոր արտաքինով նման եր Օսկար Ուայլդի ծանոթ պատկերին, այսինքն անգլիական դենդիի), զինվորականի պես վոտը-վոտին մոտեցնելով, կանգնեց հարգալիր, մեջքից թեքված և ձեռը բարևի պատրաստ։

— Ամենից առաջ,—ասաց Ռոզան մահճակալի մոտի սեղանից լոռնետը վերցնելով,—ծանոթացիր, Աննա ջան, Իլյայիս հետ։ Աննան ընկերուհիս է, Իլյա։ Են, վոր պատմեցի։ Подруга моя с детских лет... Նե՛րիր, Աննա ջան, այսոր շատ հոգնել եմ. վեր եմ ընկել մի քիչ հանգստանամ։ Նստիր։ Իլյա, милый, աթոռ տուր։ Спасибо!... Դե, Աննա ջան, պատմիր տեսնենք ի՞նչպես ես... Պա՛հ,—բացականչեց նա հանկարծ, լոռնետը աչքերին մոտեցնելով,—այդ ինչ լավ շոր ես հագել։ Բոլորովին փոխված ես, իսկի նման չես այն օրվա Աննային։ Вот не ожидала!. Հապա մի կանգնիր։ (Աննան կանգնեց ամաչելով, ինչպես գավառացին մայրաքաղաքցու առաջ)։ Բոլորովին ջահելացել ես։ Կարն

էլ— прелесть... Այ, Իլյա, այդպիսի կտոր պիտի առնել ինձ համար։ Դե, ասա տեսնենք յերեխաներդ ի՞նչպես են... Լա՞վ։ Ուրախ եմ։ Իսկ մարդուդ այնպես էլ չտեսանք։ Ելի տնե՞ր է շինում։

— Այ կիրակի որն յեկեք մեզ մոտ ճաշի—կանենես,—ասաց Աննան մեկ Ռոզային, մեկ Իլյային նայելով։

— Ի՛նչ նեղություն եք քաշում,—միջամտեց Իլյան, իր հերթին փոփոխակի կնոջն ու Աննային նայելով։

— Ի՛նչ նեղություն, Իլյա։ Իբրև ընկերուհի, յես կերթամ. քեզ համար էլ կարծում եմ հետաքրքիր կլինի։ Կծանոթանաս Աննայի մարդուն, կխոսես գործերիդ մասին և առհասարակ... Մի առարկի, խնդրեմ։ Քանի վոր յես քո ընկերների տունը գալիս եմ, դու էլ կարող ես ազատորեն իմ ընկերուհու տունը գալ։

Իլյան, ժպտալով, համաձայնություն տվեց պեն-գլխական շարժումով, ձեռը մազերին քսելով։

— Մի հարց, Աննա,—շարունակեց Ռոզան, լոռնետը տեղը դնելով ու թիկ պառկելով։—Մարդդ, իբրև կոմունիստ, ի՞նչպես է։ Սովորականի պես ինքնամփո՞փ թե՞ սրտաբաց։—Ու, էլ պատասխանի չսպասելով, շարունակեց։—Չեմ սիրում, յերբ կոմունիստները ճաշի, հավաքույթի նստում են ու լռում, մյուսներին արհամարհելով իբրև մեշչաններ։ Իրենց ժարգոնով եմ ասում։ Վո՛չ կավալերություն անել գիտեն, վո՛չ բան...

Աննան ժպտաց միայն։

— Ճիշտ է, Իլյան էլ քիչ է խոսում. բայց դե սա անկուսակցական է. սրա խոսելն ու չխոսելն այնքան չի նկատվում։ Իլյա, милый, ադյալը քաշի վոտներիս։ Mersi! Բայց կոմունիստներն առհասարակ վո՛չ թե քիչ են խոսում, այլ ընդհակառակը, նրանք

բոլորը շատախոս են․ բայց, չգիտես ինչու, անկուսակ-
ցական հասարակության մեջ լռում են կամ, ինչպես
մամոն կասեր «լայաղ» չեն անում մեշչանների հետ
խոսել... Բաքվում մի կուսակցական գիտեմ—առա-
վոտից իրիկուն ճառ է ասում, բայց անկուսակցական
ծանոթների հետ չի խոսում․ գլխով բարևում է ու
լռում: Կամ թե չէ հրավերքի ժամանակ մի այնպիսի
բան են անում, վոնց վոր մուրաբի մեջ թանաք լցնես:
Ты угадал, Իլիաս: Միրզաբեկյան Միշի մասին եմ
ասում: Այդպես չի՞...

Իլիասը յերկար ծնոտը ժիլետին դիպցրեց, իբրև
թե «այո»:

Խոսեցին ընկերուհիները յերկար—անցյալից, ներ-
կայից․ հիշեցին իրենց աղջիկ որերը, զարմացած նորից
իրենց անակնկալ հանդիպման վրա, վորից հետո Աննան
խոսք առավ Ռոզայից, վոր նա ու ամուսինը կիրակի
որը կգան ճաշի:

— Անպատճառ, անպատճառ,—խոստացավ Ռոզան:

Ու մինչև կիրակի—յերկու որ—Աննան մի անհան-
գըստության մեջ եր, վոր յերբեք չեր ունեցած․ պառավ
Բուրաստանի հետ տունը կարգի յեր բերում, գնումներ
կատարում ու միշտ սրտնեղում, թե ճարտարապետը
վորտեղից հայտնվեց․ անծանոթ մարդ, Ռոզան ու
ամուսինը գուցե չբացվեն մոտը․ և, ո՛վ է իմանում,
ի՛նչ մարդ է, ի՛նչ ճաշակի, ի՛նչ սովորույթի տեր,—
դժգոհում եր նա,—արի նրան գոհացրու: Մյուս կողմից
գոհ եր, վոր այդ ճարտարապետի պատճառով գոնե
Տիգրանը ճաշին չի ուշանա, կամ բոլորովին չի բացա-
կայի, ինչպես հաճախ պատահում է:

Այդպես էլ յեղավ․ Տիգրանը տուն յեկավ ժամանա-

կից շուտ: Աննան սեղանատունը զարդարել եր ինչով
կարող եր, իսկ սեղանը սարքել եր առատորեն ու ճա-
շակով, ձյունափայլ սփռոցի վրա շարելով խմիչքներ
ու տեսակ-տեսակ ուտելիքներ... ու բոլորի մեջտեղը
մի մեծ ծաղկեփունջ: Այդպիսի հյուրեր ամեն որ չեն
լինում... Իսկ յերեխաներին ու պառավ Բուրաստանին
հագցրել եր մաքուր շորեր․ պառավին ստիպել եր նույն-
իսկ սպիտակ գոգնոց կապել... Մի խոսքով արել եր
բոլորը, վոր մեծ քաղաքներից յեկած հյուրերից չա-
մաչի: Մի բան դնելիս՝ հեռանում եր ոտարի աչքով
դիտում, և յեթե չեր հավանում՝ փոխում եր տեղն ու
դիրքը կամ դիմում Տիգրանին․

— Այսպես վոչի՞նչ... Լա՞վ է...

Տիգրանը պատասխանում եր ձեռն անտարբեր շար-
ժելով:

— Վոչինչ, միևնույն է...

Նրան, իրոք, սեղանը չեր հետաքրքրում, այլ այն,
թե յե՞րբ կգա Միրյանը․ Թեև կարգադրել եր, վոր
կառքը գնա նրա յետևից, բայց կասկածում եր, թե
հանկարծ տանը չլինի, և Մանասը չկարողանա նրան
գտնել... Բայց և այնպես ամենից շուտ յեկավ Միր-
յանը՝ էլեգանտ հագնված, մազերը կոկ սանրած և
ձերմակ ու կարմիր մեխակների մի ծաղկեփունջ ձեռին:
Իմանալով կոմունալ տնտեսության վարիչն «ընտանի-
քավոր» մարդ է, իրենց տանը և ընկերության մեջ ըն-
դունված սովորության համաձայն, վորոշել եր դա-
տարկ ձեռով հյուր չգնալ: Յեվ յերբ Տիգրանը նրան
ներկայացրեց կնոջը՝ նա, Աննայի ձեռը բարձրացնե-
լով, համբուրեց, վոր Աննային տարորինակ թվաց,
իբրև հին-մոռացված սովորույթ ու ինչ-վոր հին հի-
շողություններ զարթեցրեց նրա մեջ: Աննային տարո-

րինակ թվաց և նրա ձեռի ծաղկեփունջը, վոր գալանտ շարժումով մեկնեց իրեն, ու մտածեց, վոր ինժեները կիրթ, կուլտուրական մարդ է, և, վոչինչ, կարող է հյուրերի հետ լավ զրուցընկեր լինել:

Փոքր անց յեկան Ռոզան ու ամուսինը, և ճաշն սկսվեց: Ռոզան այս անգամ յերկնագույն զգեստների մեջ եր: Ներս մտնելիս՝ նա, լոռնետը կարճատես աչքերին դնելով, դիտեց սենյակը, տղամարդկանց, առանձնապես տղամարդկանց, վոր խոսում եյին առանձին:

Նրանց գալն ընդհատեց Տիգրանի և Միրյանի զրույցը:

Աննան ներկայացրեց հյուրերին, և Ռոզան իսկույն ճանաչեց իրենց հյուրանոցի «ինժեներին», վորին թեև ծանոթ չէր, բայց գիտեր. մի քանի անգամ արդեն հանդիպել եր աստիճանների վրա:

— Մենք համարյա ծանոթ ենք,—կոկետորեն ժպտաց նա, ապա, աչքերը կկոցելով, սկսեց ուսումնասիրել Տիգրանին. նրա կապույտ աչքերը Ռոզային դուր յեկան, բայց կրծքագրպաններով բաճկոնը և պարզ շարժ ու ձևերը՝ շատ հասարակ թվացին: «Գործակատարի պես է հագնված»,—վորոշեց նա: Սեղանի գլխին տեղ եր բռնել Ռոզան, նրա աջ կողմը Միրյանը, ձախ կողմը ամուսինը՝ Իլիասը՝ դենդիական գլխով: Դրանց դիմաց տեղավորվեցին Տիգրանն ու Աննան:

— Ուրեմն քաղաքի ընդհանուր տեղադրությունը ձեզ դուր է գալիս, ընկեր Միրյան,—ասաց Տիգրանը, շարունակելով ընդհատված զրույցը:—Ուրախ եմ... Մի կողմն, ուրեմն, յես պատկերացնում եմ այսպես,—արտադրական և կոմունալ ձեռնարկություններ—գործարաններ և այլն, նկատի ունենալով հեռանկարները.

մյուս կողմը բնակելի տները, հասարակական շենքեր, սեղանատներ, դիսպանսերներ, և այլն... Վորքան էլ անտառին մոտ՝ յես՝ այնուամենայնիվ գտնում եմ, վոր մեր քաղաքը պիտի լինի կանաչով առատ: Թթվածինը մեզ նույնքան անհրաժեշտ է, վորքան և սնունդը: Ծառաստանները մեզ կտան թարմ օդ, ստվերներ, գեղեցկություն: Դա կլինի մի տեսակ կանաչի գոտի՝ հանգստի պարկով, ֆիզկուլտուրայի հրապարակով, ուր կարելի յե կազմակերպել խաղեր, շինել շատրվաններ: Այնպես չէ՞:

— Ի հարկե, կարելի յե,—հավանություն տվեց Միրյանը:—Ամեն ինչ կարելի յե, և ամեն ինչ կախված է միջոցներից ու հնարավորությունից:

— Այդ իրեն կարգին,—վրա բերեց Տիգրանը:—Յես ասում եմ նրա համար, վորպեսզի այս բոլորը նկատի ունենանք հատակագծում: Այսինքն մի տեսակ բանավոր առաջադրություն:

— Ի հարկե, ի հարկե,—գլխով անելով համաձայնեց Միրյանը, հարևանուհուն ձկնկիթ առաջարկելով:

Ռոզան ժպտածիծաղ վերցրեց ձկնկիթը և վերցրածը կիսեց Իլիասի հետ այնպիսի հոգացությամբ, ինչպես մայրը կվերաբերվի յերեխային: Յեվ Իլիասը, շնորհակալություն հայտնեց ձեռը կրծքին դնելով:

— Այնուհետև յես գտնում եմ,—շարունակեց Տիգրանը,—վոր մեր հյուրանոցները պիտի լինեն յերկաթուղու կայարանի մոտ, վորպեսզի քաղաք յեկողները՝ գյուղաշխատավոր, ասենք, կոլտնտեսական, դերասանական խումբ և այլ քաղաքացիներ, առանց ժամանակ կորցնելու, իջևանեն այնտեղ և ապա անցնեն իրենց գործին: Յեվ այդ հյուրանոցները, յես կարծում եմ, պետք է շինված լինեն վո՛չ թե այժմյան հյուրանոցների

պես, այլ բնակարանային բոլոր հարմարություններով, դրան վերադիր բոլոր քաղաքացիների հացեն, հեռախոսներ, զվարճություն, զբոսանք...

Ռոզան, վոր սկզբում այդ յերկու ոտար տղամարդու ներկայության իրեն պահում եր լուրջ ու, կարծես աչքերը կկոցելով, դիտում եր նրանց, կամենալով կարծես զննել-իմանալ, ինչ տեսակի մարդիկ են և ինչպես պիտի վարվել հետները,—Տիգրանի վերջին խոսքերի վրա չկարողացավ իրեն զսպել ու նկատեց չարաճճի ժպիտով.

— Շուտ չինած կլինեյիք այս հյուրանոցում չեյինք իջնի...

— Ի՞նչու,—թեթև զարմանքով հարցրեց Տիգրանը:

— Տուալետի սեղան չկա, լուսամուտից քանդված տներ են յերևում:

Տիգրանը ժպտաց:

— Միայն այդքա՞ն: Շատ սակավապահանջ եք, ընկեր Ռոզա: Մենք շուտով կունենանք այնպիսի հյուրանոցներ, ուր ամեն ինչ կլինի: Ինչ վերաբերում է քանդված տներին՝ դրանք շո՛ւտով չեն լինի: Յեկեք մի հինգ-տաս տարի հետո և մեր քաղաքը բոլորովին կերպարանափոխ կտեսնեք,—ժպտաց Տիգրանն իր կապույտ աչքերով և նորից դարձավ Միրյանին:

Միրյանը և՛ ուտում եր և՛ աչքը հաճախ Տիգրանին՝ գլխով անում «ի հարկե» ասելով. իսկ Ռոզան և հետաքըրքրությամբ հետևում եր Տիգրանի զրույցին և միաժամանակ զարմանում, վոր կոմունիստները տանն էլ, ճաշի վրա էլ իրենց գործերից, իրենց ծրագիրներից դուրս ուրիշ նյութերի մասին չեն խոսում, ու մեկ-մեկ արմունկով հրում եր Իլիասի թևը, թե տես ինչեր է ասում... Իլիասը, սակայն, իր դենդիական քաղաքա-

վարությամբ, բնավ զգացնել չեր տալիս, թե ինչ վերաբերում ունի դեպի կոմունալ տնտեսության վարիչի ասածները:

Ինչ վերաբերում է Աննային—նա աշխատելով ամեն կերպ սիրաշահել հյուրերին՝ հուզվում եր, կարմրում մարդու զրույցից.—ինչ ճաշի խոսակցության նյութ է... Ու նրան թվում եր, թե Տիգրանին հաճությամբ չեն լսում. մանավանդ Ռոզան, վոր ներկած շուրթերը հաճախ պռստում եր այս կամ այն խոսքի վրա: Իսկ Իլիասը, Աննային թվում եր միանգամայն անտարբեր: Բայց Տիգրանին ընդհատելն էլ—անհարմար եր: Ուստի Աննան, շփոթությունը ծածկելու համար, հյուրերին առաջարկում եր այս կամ այն ուտելիքը, խմիչքը, համեմունքը...

Մի առ ժամանակ բոլորը լուռ եյին: Տիգրանն առարկության ու հարցերի չհանդիպելով, աշխատեց, սթափվելով, վերջացնել սառած սուպը, հոնքերի տակից նայելով մյուսներին, վորոնք արդեն առաջինն ավարտելով՝ ձեռնարկել եյին յերկրորդին—տապակած հավերին:

— Իմիջի այլոց,—ձայնը բարձրացրեց Տիգրանը:—Յուրաքանչյուր տուն, յես կարծում եմ, պիտի արտահայտի իր նպատակահարմարությունը: Այս միտքն արտահայտել է մի ճարտարապետ, ինձ շատ դուր յեկավ:

— Նոր միտք չի,—նկատեց Միրյանը ներողամիտ ժպիտով:—Գյուղացի թե քաղաքացի՝ ամենքն էլ ուզում են, վոր տունը ծառայի իր նպատակին:

Միտքն, իրոք, նոր չեր, բայց Միրյանին կարծես դուր չեկավ, վոր իր մոտ խոսում են ուրիշ հեղինակության անունից և կոմունալ տնտեսության վարիչն

առանձին կարևորություն է տալիս այդ խոսքերն ասող ճարտարապետին: Բայց Միրյանն այս ամենը արտահայտեց այնքան նուրբ ու քաղաքավարի և այնքան կիրթ շարժումով, վոր Աննան ակամա համեմատեց նրան Տիգրանի հետ: Յեվ համեմատությունը և այն, վոր Տիգրանի ասածը դուր չեկավ Միրյանին, փոքր ինչ տխրեցրեց նրան.— Տիգրանը շատ էր պարզ և խոսելիս անվերջ շարժումներ էր անում ու... վոգևորվում... Ճաշի վրա այդքան խոսել ու շարժումներ անելը՝ Աննային թվում էր անքաղաքավարություն. քանի անգամ ուզեց աչքով-ունքով հասկացնել Տիգրանին, վոր չափավորի իրեն, բայց Տիգրանն իր կողմը չէր նայում, և... անհարմար էր:

Այնուհետև, Տիգրանը, ուտելով, խոսեց այն մասին, վոր ինքը դեմ է միորինակ տների, վորոնց մասին խոսում են հաճախ թե մամուլում, թե հասարակության մեջ: Նա գտնում է, վոր տները պիտի լինեն բազմազան, վորովհետև բազմազանությունը մարդկային հոգու պահանջն է, միորինակությունը՝ հոգնեցնող ու ձանձրալի: Նույնպիսի բազմազանություն պիտի լինի և կահկարասիների մեջ: Սենյակները պիտի լինեն այնպես, վոր զարգացնեն մարդկանց ճաշակը, սովորեցնեն պարզության և ազատ ապրելու: Հեռու ավելորդ իրերից... Տները պետք է ներկվեն, անշուշտ, պայծառ գույներով և վոչ մի դեպքում մռայլ գույն, ինչպես հիմա յե... Այստեղ նա կրկնեց իր սովորական խոսքերը, թե ինքը հոգնել է Հայաստանի սև, մռայլ քաղաքներից, վորոնցից տխրություն է ծորում ու թախիծ: Կարծես բոլորը սև են հագած: Պետք է հանել, վերացնել այդ սև գլխաները, վոր ճնշում են մարդու միտքը: Իսկ յերբ Տիգրանն անցավ կոմունիստներին ու

նրանց ներքին կյանքի նկարագրության, Ռոզան ուսերը ցնցեց:

— Ո՛ո՛,— բացականչեց նա:— Այդպիսի տներում մարդ յերկու օրում ջղային հիվանդություն կստանա: Յերևակայում եմ՝ ռադիո՛, յե՛րգ, ֆիզկուլտուրա, բիլիարդ, մանկապարտեզ... Ոչ, դա будет վո՛չ թե կյանք, այլ... չգիտեմ ինչ...

Այս խոսքերն ասվեցին այնպիսի կոմիքական տոնով, վոր ինժեները, Իլիասը և Աննան ծիծաղեցին, Տիգրանը նույնպես ժպտաց. և Ռոզան դրանից խռովված, յերևի, կտրած մազերը թափ տալով ու աչքերը կկոցելով, շարունակեց աշխուժով.

— Պատահում է յերբեմն յես ու Իլիասը չենք ուզում իրար հետ ապրել, ուր մնաց մի քանի հարյուր հոգու հետ...

Դարձյալ ծիծաղեցին:

Իսկ Տիգրանն այդ առթիվ կարևոր համարեց նկատել.

— Դա, ընկեր Ռոզա, նախ՝ մեր վատ դաստիարակության հետևանքն է, վոր չենք կարող մեծ հասարակության մեջ ապրել. յերկրորդ՝ մեր տները պիտի լինեն այնպես, վոր մարդիկ իրար չխանգարեն, չհոգնեցնեն և, միևնույն ժամանակ, ցանկության դեպքում, ապրեն մի ընդհանուր, բովանդակալից ու հետաքրքիր կյանքով: Ինչպես փոքրերը, այնպես էլ մեծերը կունենան իրենց մտավոր, ֆիզիքական զբաղմունքները:

— Դե ուրեմն военный ռեժիմ ասեք էլի,— նորից ընդհատեց Ռոզան կոմիկ շարժումով:

— Վոչ, ընկեր Ռոզա, կոմունալ ռեժիմ,— ուղղեց Տիգրանը:

Իլյասը հոնքերով հասկացրեց Ռոզային, վոր չատ էլ ազատ չխոսի: Բայց Ռոզան չլսեց:

— Դու, խնդրեմ, Իլյաս, ինձ մի զգուշացնի, յես հասկանում եմ ինչ եմ ասում... Չե, յես բոլոր ռեժիմներից փախչում եմ: Մարդս պետք ե իր ուզածի պես, թռչունի պես ապրի...

Այդ համարձակությունը դուր յեկավ Աննային. նա նկատեց, վոր ճարտարապետի շուրթերը սեղմվեցին իրար. ըստ յերևույթին այդ միտքը նրան նույնպես դուր յեկավ: Վորպեսզի Տիգրանը՝ վեճ չսկսի Աննան հավի միսը հրեց նրա կողմը: Բայց և այնպես Տիգրանը, մի կտոր վերցնելով՝ դրեց ափսեյի մեջ ու շարունակեց.

— Այդ ձեզ, ընկեր Ռոզա, թվում ե թե թռչուններն ազատ են ու անկախ: Նրանք այնքան են ազատ, անկախ, վորքան ազատ-անկախ ե իրենց յերամը, իրենց տեսակը...

Այս խոսքերը Ռոզային թվացին կարծես մութ, խրթին և, թերևս, խնդրին չվերաբերող, դրա համար նա, դարձյալ ընդհատելով հարցրեց, թե հապա մենակները, ամուրիները ի՞նչպես պիտի ապրեն այդ կոմունա-տներում:

— Այնպես, ինչպես բոլորը. ամեն մեկը կունենա իր ննջարանը, և կհանգստանա և կաշխատի,—և Տիգրանը բացատրեց, թե իրենց շինած տները բուրժուականից պիտի տարբերվեն նրանով, վոր նկատի պիտի ունենան սոցիալիստական կենցաղը և նպաստեն մարդկանց գնալու դեպի կոլեկտիվը: Այդ կապակցությամբ նա խոսեց այն կոմունալ ձեռնարկությունների մասին, վորոնք պիտի դյուրացնեն, թեթևացնեն հասարակության կյանքը: Բայց այն, ինչ ասում եր Տիգրանը—այսօրվա քաղաքը տեսնող Ռոզային, մասամբ նաև Միր-

յանին թվում եր ֆանտաստիկ: Բայց միևնույն ժամանակ նրանք զգում եյին, վոր կոմունալ տնտեսության վարիչը չեր խոսում միայն խոսելու համար, այլ ապրում ե իր նյութով. խոսելիս նրա կապույտ աչքերը բոցկլտում եյին. նա վոգևորվում եր իր ծրագրով ու հեռանկարներով: Այդ եր պատճառը, գուցե, վոր նրա բոլոր ասածները կապակցված չեյին, մի խնդիր դեռ չպարզված՝ անցնում եր մյուսին.

— Մեր տները պետք ե լինեն պարզ ու անսեթևեթ, ինչպես պարզ, անսեթևեթ ե բանվորը. բազմազան, ինչպես բազմազան ե կյանքը, ուրախ, ինչպես բնությունը...

Մինչ Տիգրանը խոսում եր՝ Աննան ելի հուզվում եր ներսում և, հյուրերին ուշադրություն ցույց տալու, մասամբ էլ իր ձայնով Տիգրանին սթափեցնելու համար (վոր քիչ խոսի) նորից ու նորից առաջարկում եր նրանց փորձել այս ինչը և այն ինչը: Մի անգամ նույնիսկ մի հարմար վայրկյան—նա աչքով-ունքով արավ, բայց Տիգրանն ըստ յերևույթին չհասկացավ այդ կամ պարզապես չնկատեց: Ու շարունակեց նյութով տարված: Տներից անցավ թատրոնին, վորն այնքան մեծ պիտի լինի, վոր քաղաքի բնակչության կեսը տեղավորվի: Թատրոնից անցավ փողոցներին, փողոցներից հրապարակներին, ապա քաղաքամերձ տնտեսություններին:

Նա այս բոլորն ասում ե՝ հատակագծում նկատի ունենալու համար. նա ինքն, ի հարկե, ճարտարապետության մեջ պրոֆան ե, բայց թե իր և թե ընկերների ցանկությունն ե, վոր ապագա քաղաքը լինի սոցիալիստական, կոմունիստական հիմունքներով ու հեռանկարներով...

Աննան այլևս չկարողացավ համբերել. յելավ–անցավ կես սենյակը, իբր թե յերեխաներին նայելու, բայց նրա նպատակն եր, իսկապես Տիգրանին «կարգի հրավիրել»: Քիչ հետո այնտեղից դուրս գալով՝ նա կանչեց Տիգրանին. և յերբ Տիգրանը մտավ ներս, Աննան քաշեց նրան անկյուն ու իր դժգոհությունը հայտնեց, վերջապես, բայց այնքան կամաց, վոր յերեխաները չլսեն, վորոնք ճաշում եյին այդտեղ պառավ Բուրաստանի հսկողությամբ:

— Ինչ ես չարունակ քո քաղաքից խոսում. ել ուրիշ նյութ չկա՞: Մտածիր, վոր կարող ե նրանց հաճելի չլինել: Հո ժողովում չես...

Այնուհետև, սեղանատուն դառնալով, Տիգրանը մի առժամանակ լուռ եր. աշխատում եր ուտելում յետ չմնալ հյուրերից և թույլ տալ, վոր հիմա ել նրանք խոսեն: Յեվ առաջինը Ռոզան յեղավ, վոր աչքերը կուչ ածելով, իր զարմանքը հայտնեց, թե ինչու մարդիկ իրենց զրկելով՝ չարունակ ապագայի մասին են մտածում:

— Ապագայի հասարակությունն ինքը, գուցե ավելի լավ տներ չինի, ընկեր Տիգրան: Напрасно думаете, վոր տեխնիկան կանգ կառնի...

Թեև Տիգրանը վորոշել եր մի առժամ լռել, բայց Ռոզայի խոսքերից հետո չկարողացավ իրեն պահել:

— Չեմ կարծում: Բայց մենք պետք ե մեր ցանկացած կենցաղի համապատասխան տներ չինե՞նք, թե վոչ,—ասաց Տիգրանը կապույտ աչքերը դարձնելով մերթ Ռոզային, մերթ Միրյանին:—Իսկ յեթե կգա նոր տեխնիկան և հետագա սերունդները չեն բավարարվի մեր կառուցումներով, թող, пожалуйста, իրենք չինեն:

— Բայց չե, вообще, կոմունիստներդ շատ եք շտապում, շա՛տ,—կտրած մազերը թափ տվեց Ռոզան և մատանիներով պճնած ձեռը մեկնեց դեպի մարդը: Իլյաս, աղը տուր...

Իլյասը, ինչպես միշտ, հաճոյակատարությամբ, ձեռի մեկը կրծքին սեղմած, վոր անձեռոցիկը կրծքից չընկնի, աղամանը, յերկու մատով բռնած, մատուցեց կնոջը:

Խոսակցությունը շարունակվեց: Տիգրանն ուզում եր նորից վերադառնալ հատակագծին, բայց խոսքի կեսը դեռ բերանում՝ հեռախոսը զնգզնգաց կաբինետում: Նա անմիջապես նետվեց հեռախոսի մոտ և, մի վայրկյանից յետ գալով, ներողություն խնդրեց, վոր ստիպված ե հեռանալ. գավկոմից կանչում են անհետաձգելի գործով:

— Կաշխատեմ շուտով գալ...

Ու գնաց արագ-արագ, գլխարկը դռների մեջ դնելով, վորից յեզրակացրին, թե ինչ-վոր արտակարգ բան ե պատահել:

Նրա գնալուց հետո խոսք բացվեց կուսակցականների մասին: Առաջինը խոսեց Ռոզան, և այն կարծիքը հայտնեց, թե յերբեք չեր ցանկանա կուսակցական լինել կամ կուսակցականի կին:

— Կուսակցական լինելը վատ ե նրանով, վոր միշտ այսպես արտակարգ կյանքով են ապրում, բայց հետաքրքիր կյանքով,—միջամտեց Իլյասը շողոքորթ ձայնով, կամենալով միայն հաճոյանալ Աննային:

— Այո, հետաքրքիր, ի հարկե, բայց իրենց շատ են տանջում,—նկատեց Միրյանը, նայելով մեկ Աննային, մեկ Ռոզային, տեսնելու իր խոսքերն ինչ տպավորություն են թողնում:

— Ցեվ գիտե՞ք ինչ, ընկեր Միրյան,—աշխուժացավ Ռոզան,—վոչ միայն իրենք են տանջվում, այլ ուզում են, վոր մենք էլ՝ անկուսակցականներս իրենց պես լինենք: Ես, յես եմ ու՝ չեմ ուզում սոցիալիզմի փեյին դառնալ: Յես ուզում եմ ապրել և վայելել կյանքը, վորովհետև նա մի անգամ է տրվում մարդուս: Այնպես չէ՞, ընկեր Միրյան:

Միրյանը ժպտաց միայն, ինչպես ժպտում են յերեխային, յերբ նա իրենից բարձր նյութեր է շոշափում, և, հավանորեն, վտանգավոր խոսակցությանը վերջ տալու մտքով, գովեց տապակած կանաչին և «տիկին» Աննայի ճաշակը:

— Դե մեր Աննան հայտնի յե այդ կողմից,—ավելացրեց Ռոզան կես լուրջ, կես կատակ,—աղջիկ ժամանակից աչքի յե ընկնում իր նուրբ ճաշակով···

Ցեվ դա առիթ տվեց, վոր նորից հիշեն անցած որերը, Բաքուի կյանքը:

Միրյանը նուրբ խոսքերով իր զարմանքը հայտնեց, վոր այդպիսի մի կուլտուրական կին, ինչպիսին Աննան է, մնում է այս գավառական քաղաքում. նա պետք է վոր մեծ քաղաքներում ապրեր, ավելի կիրթ հասարակության մեջ: Ցեվ Միրյանը՝ խոսելիս՝ Աննային նայում եր մի հայացքով, վորի մեջ կարծես և՛ ափսոսանք կար և՛ մեծարանք: Աննան նկատեց այդ և աչքերը խոնարհեց ակամա:

— Այսպիսի կուլտուրական սեղան քիչ է պատահում անգամ մեծ քաղաքներում,—շարունակեց Միրյանը:

Նա խոսում եր ու ելի սիրալիր աչքերով Աննային նայում, իսկ Աննան, վոր վա՛ղուց այդպիսի կոմպլիմենտներ չեր լսած—կարմրում եր:

— Ի՞նչ եք ասում, ընկեր Միրյան, ի՞նչ սեղան է վոր···

Ճաշին Միրյանը խմել եր մի քանի բաժակ գինի, և այժմ, գնալով, բացվում եր. սկսեց ծիծաղաշարժ անեկդոտներ պատմել և կրկին գովել Աննայի սեղանը:

— Մարդը վոգևորված կառուցող, ինքը լավ տանտիկին,—ասաց Ռոզան ծիծաղելով:

Աննան նորից կարմրեց այդ գովեստներից: Թե Ռոզայի խոսքերը, թե Միրյանի գովքը—նրան թվում եր քաղաքավարության տուրք, և մի տեսակ նուրբ հեգնանք, մանավանդ մարդու հասցեյին, վոր այնքան բո-
նեց, յերևի այդ են համարում վոգևորություն: Ու այդ մտքից ելի կարմրեց:

Բայց նա ավելի կարմրեց, յերբ Միրյանը հրաժեշտին, ինչպես գալու ժամին, նորից համբուրեց Աննայի ձեռը և յերկար թերթերունքների տակից նայեց իրեն:

Այդ վայրկյանին Աննան չիմացավ ինչու ձեռը դողաց ճարտարապետի ափի մեջ և սիրտը կարծես դիպավ կրծքին:—Այսոր յերկրորդ անգամն եր ձեռք համբուրում եյին:

Հյուրերի գնալուց հետո անցավ բավական ժամանակ, Տիգրանը դարձյալ չեկավ, և այդ բանը Աննային վրդովեց շատ:—Գոնե մինչև վերջը մնար, գոնե այսոր ուշադիր լիներ: Ուշադիր··· յե՞րբ է յեղել ուշադիր, վոր···, ասում եր Աննան ինքն իրեն, հուզված սենյակում յերթևեկելով: Ա՛, ուշադիր մարդիկ՝ Ռոզայի ամուսինն ու Միրյանը: Մանավանդ Միրյանը···

Ցեվ նորից ակամա Աննան համեմատեց նրան Տիգրանի հետ ու տխրեց: Մանավանդ չեր կարողանում ներել Տիգրանին այն, վոր նա բոլոր ժամանակ խոսում եր

գործի մասին: Կարծես էլ ուրիշ նյութ չկար. մի գլուխ «սպիտակ քաղաքը», տները, փողոցները... Ամեն բան, վերջապես, իր տեղն ու ժամանակն ունի: Չի հասկանում, որ մարդիկ կարող են ձանձրանալ,— դժգոհում էր Աննան:

Իսկ երբ երեկոյան ուշ Տիգրանը եկավ, և փորձեց բացատրել, թե ինչու ուշացավ—Աննան դժգոհեց.

— Այդքան անքաղաքավարություն չէի սպասում: Հյուրերին թողնել ճաշի վրա ու գնալ: Որտե՞ղ է տեսնված...

Տիգրանը կրկին ուզեց բացատրել, թե որքան կարևոր գործով ուշացավ, բայց այս անգամ Աննան ձեռը թափ տվեց միայն, որ եթե խոսքով արտահայտեր՝ պիտի նշանակեր «անհուսալի ես»:

Ու անցավ գնաց ննջարան:

«Հազիվ հաշտվել էինք—նորից թյուրիմացություն», ասաց Տիգրանը մտքում:—«Բայց գործը հո չէի կարող թողնել»...

V

Մի քանի որ Աննան ճաշի տպավորության տակ էր. հիշում էր հյուրերին և գոհ էր, որ տվեց այդ ճաշը: Վաղուց հյուրեր չէր ունեցած: Մի երկու որ նրան այնպես էր թվում, թե վերադարձել է մեծ քաղաք, ավելի շուտ՝ մեծ քաղաքներից եկած մարդիկ նրա սիրտը խլրտել էին ինչ-որ անուշ հուզումով ու հուշերով, և նա, ինքն էլ չգիտեր ինչու, տանը նստել չէր կարողանում: Այն հանգամանքը, որ ընկերուհին քաղաքումն էր, նա ուզում էր նորից ու նորից տեսնել նրան, խոսակցել: Եվ հաճախ հին անցած-գնացած կյանքի հուշերի հորձանքը տանում տանում էր նրան դուրս, և նա գնում էր Ռոզային հանդիպելու: Առաջ շաբաթը մի անգամ հազիվ էր զբոսանքի ելնում, այն էլ երեխաների հետ, բայց հիմա՝ տանը նեղ էր գալիս. մենակություն էր զգում ու ինչ-որ անորոշ թախիծ:

Իսկ Տիգրանն այդ օրերին զբաղված էր հատակագծի առաջադրությունը կազմելով և ճարտարապետին աշխատակիցներով ու աշխատանոցով ապահովելու խնդրով: Ցերեկը գրասենյակում, գիշերը տանը՝ նա անվերջ գրում էր—ջնջում, և գրածով երբեք չէր գոհանում: Գիշերը հոսում էր աննկատելի, թղթերի չրշյունով. այդ թղթերից ելնում էին թվեր, պլյուսներ, նախագծեր, որոնք վեր էին ածվում տնե-

րի, փողոցների... տները միանում–դառնում էին թաղամասեր, և քաղաքն ընդարձակվում–ծավալվում էր սպիտակ ու բազմահարկ։ Սակայն, յերբ ուզում էր գրի առնել դրանք,—չէր ստացվում այն, ինչ պատկերացնում էր, յերևակայում. թվում էր ամեն ինչ մանրանում է, չորանում... Իսկ նա պատկերացնում էր մի քաղաք, որն իր սպիտակ տների կորպուսներով, ֆասադներով, լայն փողոցներով, հրապարակների ու ծառուղիների շարքերով ձգվում–տարածվում է հովտով մեկ և շողշողում արևի տակ. քաղաք, ուր ամեն ինչ գույն պիտի ունենար ու փայլ, ուր կյանքը պիտի յեռար զրնգար գործի ու աշխատանքի զնգոցով... Սակայն, այդ բոլորը թղթի վրա գորշանում էր, կորչում բառերի մեջ և դառնում անգույն, անմարմին... Ուստի գրածը ջնջում էր—նորից ու նորից գրելու համար, ու միշտ էլ կասկածում, թե արդյոք Միրյանը այդ ամենը կարո՞ղ է պատկերացնել ու հասկանալ այնպես, ինչպես ինքն է պատկերացնում ու հասկանում։ Մյուս կողմից զգում էր մեծ, ծանր պատասխանատվություն. — պետք էր այնպես անել, որ կուսակցության, ընկերների առաջ ամոթով չմնա։

— Ինչ-որ պարզ չի լինի, կբացատրեմ խոսքերով,—կրկնում էր նա մտքում։

Գրելով զբաղված՝ նա մյուս խնդիրը—Միրյանին աշխատանոցով ու աշխատակիցներով ապահովելու խնդիրը—հանձնեց իր դիվանապետ Դավթին։

Յերկար տարիներ գրասեղանների վրա աշխատելուց՝ այդ մարդու աջ ուսը բարձրացել էր բավական, և այն տպավորությունն էր թողնում, թե ձախ ձեռով յերեք փթանոց է բռնել կամ թվում էր—ուսով պաշտպանվում է աներևույթ հարվածից կամ ուզում է հենա-

րան լինել ներսը առաստաղին, դուրսը յերկնքին, որ չփլեն։ Սիրում էր նա ամեն տեղ կարգ ու կանոն, ճշտապահություն և հնազանդություն. նախանձախնդիր էր, որ ամեն մի գրություն, որ դուրս էր գալիս գրասենյակից, լինի գրասենյակային բոլոր կանոններով գրված, անթերի, իսկ ստացված գրությունները նա պահում էր առանձին խանդով, ինչպես ժլատն իր մուրհակները։ Թեև հին, նախահեղափոխական ժամանակների գործավար՝ նա գիտեր այնուամենայնիվ խորհրդային գործավարության ու իրավական բոլոր նրբությունները։ Գիտեր ինչը ինչպես պիտի գրել, որ ազդեցություն անի։ Այդ էր պատճառը, որ մի յերկու օրվա մեջ հյուրանոցի յերկու սենյակը դատարկվեցին ու տրամադրվեցին Միրյանին, սենյակների հետ նաև հարկավոր իրեր—սեղաններ, աթոռներ, և հարկավոր մարդիկ—հողաչափ, տեխնիկներ ու գծագրողներ։

Այդ բոլորից հետո յեր, որ Միրյանն անցել էր գործի, և յերեք օր էր արդեն աշխատում էր մի հողաչափի, յերկու տեխնիկի և յերկու գծագրողի ոգնությամբ։ Առայժմ զբաղված էին հին քաղաքի չափումներն ստուգելով, նորի ընդհանուր տեղագրության փորձումով, որից հետո պիտի անցներ բուն հատակագծի աշխատանքին։ Բայց տակավին կատարում էր նախնական աշխատանքները. յերբեմն կարելի յեր տեսնել, թե ինչպես նա միայն ժիլետով՝ սեղանի առաջ գծագրում էր, հաշիվներ ու չափումներ կատարում, գրքեր թերթում։ Թեև յեկել էր հանգստանալու, բայց աշխատում էր առավոտից մինչև յերեկո. քանի որ հանձն էր առել հատակագծումը—նա ուզում էր այդ գործը վերջացնել շուտով։ Նրան խրախուսում էր այն հանգամանքը, որ իր հատակագծով կառուցվող կոմունա–տունը առ-

ժանացել էր ընդհանուր հավանության քաղխորհրդի և քաղաքացիների կողմից: Տունը թեև չէնվել էր իր բացակայության, լոկ հատակագծի համաձայն, այսուամենայնիվ նրան գոհացնում էր. չեղումներ դրեթե չկային. նա յենթադրել էր աղյուս—կառուցել եյին քարից, վոր ավելի լավ էր: Մի խոսքով՝ նա ուզում էր—մարդկային սնափառությամբ գուցե—իր անունը կապել քաղաքի հետ: Մյուս կողմից ուզում էր ցույց տալ, վոր իրենք անկուսակցական մասնագետ—ինժեներները կարող են լավ գործեր անել և թող իշխանությունը, կուսակցությունը գնահատի իրենց: Նա վաղուց մտադիր էր, յեթե հաջողվի, մի վորևե քաղաք հատակագծել... Յեվ, թերևս, այդ էր պատճառը, վոր սիրով ընդունեց Տիգրանի առաջարկը: Յեվ այժմ ուզում էր հինգ—վեց ամսվա աշխատանքը ավարտել յերկու ամսում. ու աշխատում էր համարյա ամբողջ որը, յերեկոները միայն դուրս գալով՝ գնում էր քաղաքային այգի—զբոսնելու և ընթրելու: Նստում էր ռեստորանի մի անկյունում՝ հաճախ մենակ ու չուրջը նայում ոտարերկրացու դիրքով ու հետաքրքրությամբ: Յերբեմն նրան ընկերանում էր իր աշխատակից տեխնիկներից մեկն ու մեկը, բայց շատ կարճ ժամանակով, ու նա դարձյալ մնում էր մենակ անծանոթ բազմության մեջ:

Մի յերեկո էլ, նա մինչև ութն աշխատելուց հետո, հոգնած դուրս գալով՝ հենց հյուրանոցի առաջ, մայթի վրա հանդիպեց կոմունալ տնտեսության վարիչի կնոջը—Աննային:

Աննան մենակ էր, ինչ վոր քիչ էր պատահում. սովորաբար նա դուրս էր գալիս յերեխաների հետ, և այն էլ ցերեկով: Իսկ այսոր հատկապես դուրս էր յեկել Բոզայի մոտ գնալու. բայց տատանվում էր մայթի վրա՝

մտնե՞լ ներս, թե՞ վոչ. մի կողմից նրան պահում էր «հյուրանոցային» տհաճությունը, յերկրորդ՝ սպասում էր, վոր գուցե Բոզան ինքը դուրս գա: Յեվ այդ ժամանակ էր ահա՝

— Հարգանքներս, տիկին Աննա...

Այնքան անսպասելի եյին մտատար Աննային այդ խոսքերը, վոր նա ցնցվեց ու յետ նայեց զարմացած:

Միրյանը, գլխարկը բարձրացրած, կրկին բարևեց նրան, ժպտաց սափրած յերեսովը մեկ, ռեվերանսի պես մի շարժում անելով, ու իրեն հատուկ գալանտ ձևով ձեռք մեկնեց Աննային: Միրյանի թե՛ այդ ռեվերանսի ձևը, թե՛ ժպիտը, վորը փոսիկ էր գոյացնում նրա աջ այտի վրա, դուր յեկավ Աննային:

— Հույս ունեմ՝ լա՞վ եք, տիկին Աննա,—շարունակեց Միրյանը քաղաքավարի գլուխը ծռելով:

— Շնորհակալ եմ:

— Յերևի ձեր ընկերուհու մոտի՞ց եք գալիս:

— Վոչ... այնպես...

— Իսկ յես աշխատանքից,—շարունակեց Միրյանը:—Թույլ կտա՞ք ուղեկցեմ ձեզ:

— Խնդրեմ...

Ճարտարապետի թե՛ քաղաքավար ձևերից թե՛ խոսելու նուրբ յեղանակից Աննան զգում էր միայն կանանց հատուկ հոտառությամբ (վորը նրանց մեջ յոթերորդ զգայարանք կարելի յե համարել), վոր ինքը դուր է գալիս Միրյանին: Բայց վաղուց ոտար մարդու հետ զբոսանք չկատարած՝ նա մի տեսակ, իրեն անբացատրելի, անհարմարություն էր զգում:

Յերեկոյան այն ժամն էր քաղաքում, յերբ ծերունիներից բացի, վոչ վոք տանը չէր նստում. ամառողներ թե քաղաքայիններ խմբերով դուրս եյին գալիս զբոսան—

քի՝ մայրամուտի անուշով հիանալու, ռադիո նվագներ լսելու, վոր անձրևի պես տեղում եր բարձր սյուներից:

Ռադիո-նվագների տակով անցան Աննան ու Միրյանը, և ճարտարապետն իր դամային զբաղեցնելու համար պատմում եր, թե ինքն արդեն անցել ե գործի և թե արդեն հարմարություններ ու աշխատակիցներ են տվել իրեն:

— Դա յերկար ժամանակի գործ ե, բայց պետք ե աշխատել մի յերկու ամսում ավարտել...

Դարձյալ նա խոսում եր չափած-ձևած, այնպես, ինչպես ճաշին, նուրբ ու քաղաքավարի, և Աննային ելի դուր եր գալիս նրա ձայնի տեմբրը, շարժումները, վոր քիչ եյին, բայց արտահայտիչ ու նրա խոսքը լրացնող:

— Յեթե կցանկանայիք՝ գնանք այգին,—հանկարծ խոսակցությունն ընդհատելով առաջարկեց Միրյանը:

— Խնդրե՛մ,—ասաց Աննան մեքենայորեն:

Աննան ինքը շատ քիչ եր գնում այգի—շաբաթը մի յերկու անգամ, այն ել յերեխաների հետ, մի յերկու ժամով, այն ել ցերեկով:

Քաղաքային այդ այգին, վոր մինչ հեղափոխությունը բազմաթիվ անուններ եր ունեցել և հիմա կոչվում եր «Պրոլետար», այդ գորշ քաղաքում թվում եր մի կանաչ կղզի, կամ «օազիս», ինչպես վորակել եր նրան մի քեֆասեր պոետ: Դրանից եր, գուցե, վոր այնքան մարդ եր գրավում նա յերեկոները, վոր նրա սաղարթի մեջ լույսերն այնքան գրավիչ եյին և ծառուղիներում զրույցն այնքան հաճելի... Ինչպես բոլոր քաղաքներում, այնպես ել այստեղ—քաղաքային այգին ուներ յերաժշտություն, ռեստորան, ընթրիք... Զով

կար, նվագ և յերգ... Հոգնելիս թե նեղսրտելիս քաղաքացիները գնում եյին այնտեղ «ցրվելու» և թարմանալու: Յեվ քաղաքացիները, պետք ե ասած, սիրում եյին իրենց այգին ու, ոտարականին քաղաքի տեսարժան վայրերը ցույց տալու ժամանակ՝ չեյին մոռանում և այդ այգին, ուր ռադիո-բարձրախոսները ամեն յերեկո—վեցից մինչև տասներկուսը—յերգեր ու ճառեր եյին տեղում քաղաքացիների գլխին և լցնում այն շատախոս աղմուկով:

— Յես ձեր այգին շատ հավանեցի,—ասում եր Միրյանը բազմության միջով գլխավոր ծառուղին մտնելով, վորն ուղիղ տանում եր ռեստորան:

Ինչպես միշտ այդ ժամին՝ ռեստորանը լիքն եր մարդկանցով. շատերը գալիս եյին նվագի տակ և զովության մեջ թեյելու, իրար հանդիպելու, զրուցելու և, վերջը, ընթրելու, վորովհետև ամառը վոչ վոք տրամադրություն չուներ կեսորից հետո տանը նստելու, բացի գործի մարդկանցից:

Միրյանն Աննային առաջնորդեց դեպի ազատ մի սեղան, վորը գտնվում եր ռեստորանի գրեթե ծայրում, մյուսներից փոքր ինչ պատված և այդ պատճառով ել, յերևի, ազատ մնացած:

Յերբ նրանք անցնում եյին սեղանների արանքով՝ Աննային այնպես եր թվում, թե բոլորն իրենց են նայում: Յեվ, իրոք, նայում եյին, բայց վոչ բոլորը. դա գավառական քաղաքին հատուկ հետաքրքրություն ե. այստեղ մարդիկ բոլորը ճանաչում են իրար և, բնականաբար, հետամուտ են, թե ո՛վ ինչ ե անում: Իսկ նորեկին նայում են չորս աչքով:

— Ինչ կցանկանայի՞ք,—հարցրեց Միրյանը, յերբ նստեցին:

Աննան շնորհակալ է, վորևէ բան ուտելու կամ խմելու ցանկություն չունի: Ընկեր Միրյանը կարող է պատվիրել իր համար:

Այնուամենայնիվ Միրյանը պատվիրեց պաղպաղակ:

— Սրանից գոնե չպիտի հրաժարվեք, տիկին Աննա: Խնդրեմ:

Աննային դարձյալ այնպես թվաց, թե մարդիկ բոլոր սեղաններից իրենց, թերևս միայն իրեն են նայում:

Միրյանն զգաց Աննայի այդ շփոթությունը և, նրան զբաղեցնելու համար, խոսեց այն մասին, թե քաղաքում զվարճատեղիներ քիչ կան, և թե ձմեռը յերևի, շատ տխուր կլինի այստեղ:

— Ձմե՞ռը. տխուր է, ի հարկե,— ասաց Աննան:— Բայց վո՞րքան էլ տխուր, ուզենք-չուզենք...

Միրյանը ուշադիր հայացք հառեց նրա ամաչկոտ դեմքին:

— Բայց ինչու չեք փոխադրվում ավելի մեծ քաղաք, ուր ձեզ ավելի լավ...— ասաց նա, կիսատ թողնելով միտքը, վորը, սակայն, Աննան լրացրեց այնպես, կամ այնպես հասկացավ, թե ինքն արժանի չէ այս գորշ, ձանձրալի քաղաքում ապրելու. ու մի տեսակ շոյված զգաց, վոր Միրյանն իրեն արժանի չի համարում այս քաղաքում ապրելու, ինչպես և Ռոզան: Բայց Ռոզան ասում է իբրև ընկերուհի. ուրիշ է Միրյանը...

Նրանցից քիչ հեռու մի սեղանի շուրջը բոլորել եյին քաղաքի նշանավոր «աստղերը», (ինչպես մի ժամանակ ասել եր նրանց մասին քաղաքի նախկին պոետը), այսինքն՝ քաղաքի արվեստագետները: Այստեղ եր թատրոնի բարձրահասակ ջահել ռեժիսյորը, վորն այն կարծիքի յեր, թե իր բեմադրած պիեսներն են, վոր կըր-

թում են մարդկանց ճաշակը և կուլտուրայի նոր դարաշրջան բացում մեր թատրոնի պատմության մեջ և վոր իր բեմադրումներն այստեղ գնահատող ու հասկացող չկա. Նրա հետ եյին և յերկու դերասան, վորոնք շողոքորթում եյին նրան՝ առաջին հերոսիկ դերերն ստանալու, և նույնպես այն կարծիքի եյին, թե դերասանությունը ամենաբարձր արվեստն է. այստեղ եր նկարիչ Զենոն, վորը հայտնի յեր իր պլակատներով և, հին նկարիչներին հակառակ, մազերը խուզում եր տակից, բայց հին ձևի բանթ եր կապում վզին: Նրանց հետ եր և քաղաքի միակ յերգիչ Գիսակը, վոր վիզը միշտ կապում եր մետաքսի մի կանաչ թաշկինակով, կամենալով յերգը սիրող քաղաքացիների մեջ ափսոսանք ու խղճահարություն զարթեցնել դեպի իր «չքնաղ» կոկորդը, ինչպես ասել եր նրա յերկրպագու մեքենագրուհիներից մեկը: Նրանց, հավանորեն, հետաքրքրում եր վոչ միայն ինժեները, վորպես նորեկ մարդ, այլև հենց տիկին Աննան, վոր քիչ եր յերևում հասարակության մեջ: Բայց Աննային թվում եր դարձյալ, թե նայում են իրեն ու զարմանում, յերևի, թե ինչ կապ կա յերկուսի միջև:

— Ձեր քաղաքը, լավ դիրք ունի, տիկին Աննա, լավ օդ. բայց, ճիշտն ասած, տխուր քաղաք է,— կրկնեց Միրյանը: Բացի այս այգուց ու նվագից վոչինչ չկա, վոր մարդ ուրախացնի:

— Միթե տխրո՞ւմ եք,— հարցրեց Աննան մասամբ հետաքրքրությունից, մասամբ քաղաքավարությունից՝ մի բան ասած լինելու համար:

— Այո՛,— հառաչելով տնքաց ճարտարապետը:— Յես մենակ պարզապես տխրում եմ այստեղ: Յեթե աշխատանքս չլիներ՝ ավելի պիտի տխրեյի: Ծանոթ շըր-

ջան, հասարակութjուն չկա: Յեթե դուք չընկերանայիք այսօր՝ դարձյալ մենակ պիտի մնայի: Ուրախ եմ, վոր հանդիպեցինք...

— Ընկերուհիս՝ Ռոզան նույնն է ասում, թե տխուր քաղաք է: Դա, իհարկե, հասկանալի յե. մեծ քաղաքներից հետո...

— Ի միջի այլոց. ձեր ընկերուհին շատ աշխույժ կին է—զվա՛րթ, կենսուրա՛խ, յես կասեյի...

— Այո, կենսուրախ. ճիշտ է,—հաստատեց Աննան, մտածելով, թե չլինի Ռոզան արդեն գրավել է ճարտարապետին:—Յեվ գեղեցիկ,—ավելացրեց նա, ինքն էլ չիմանալով ինչո՛ւ:

— Գեղեցի՛կ,—յերկարեց Միրյանը մտասույզ,—բայց ներեցեք, ինչո՛ւ եք ձեզ նսեմացնում...

Միրյանը գլխարկը դրել եր սեղանի ծայրին, խարտյաշ մազերը և լայն ճակատը բացել. նա ընթրում եր, գինին խմում փոքրիկ կումերով ու հետն էլ խոսում. խոսելիս նրա աչքերը շողշողում եյին, և Աննան զմայլանքի մեջ եր նրա գալանտ ձևերից: Ահա մարդ—ինչքան ասես գրավված, բայց էլի ժամանակ է գտնում կանանց հետ խոսելու, և Տիգրանի նման չի խոսում միայն իր գործի մասին: Ու գիտի ինչ պիտի խոսի...

Յեվ Աննան հաճույքով լսում եր նրա հանաքները, դիտողությունները քաղաքի ու քաղաքացիների և անհատական մարդկանց մասին: Մի բան միայն Աննային դուր չեկավ ու տարօրինակ թվաց, յերբ Միրյանն ասաց.

— Ձեր ամուսինն սքանչելի մարդ է. աշխատասեր, հարուստ մտքերի տեր: Այդպիսիներին յես քիչ եմ հանդիպել...

Աննան հոնքերը վեր քաշեց. Նրան թվաց թե դա

խանգարեց գրույցի ընդհանուր բնույթը: Բայց Միրյանը նորից անցավ իր դիտողություններին, և այն կարծիքը հայտնեց, թե քաղաքի բնակիչները դանդաղաշարժ են, ծանր մտածող ու ծածկամիտ:

— Այ, օրինակ, մատուցողները,—ցույց տվավ նա ճերմակ հագած մատուցողներին,—այնպես են շարժվում, կարծես չեն քայլում...

Բարձրախոսները յերգում եյին այգու ծառերից կախված:—Քաղաքները փոխանակվում եյին համերգներով. նախ Բաքուն տվեց համերգը, ապա Թիֆլիսը, Քութայիսը, Յերևանը: Յերգում եյին մի քանի բարձրախոս միասին, այգու տարբեր տեղերում, և այնպես եր թվում, թե ամբողջ քաղաքը, վողջ Անդրկովկասը յերգի մեջ է ու վողողված է յերգով, և այդ յերգը անձրևի պես մաղում է քաղաքների ու գյուղերի վրա. գյուղ ու քաղաք լսում են յերգերը, և ջահել աղջիկները գյուղում, գուցե, ձայնակցում են դրանց՝ կամ լուռ ականջ դնում՝ անգիր անելու, վոր հետո յերգեն այգում ու դաշտում: Ռադիոների հետ միասին այգու տաղավարում նվագում եր յերաժշտախումբը՝ յեվրոպական կըտորներ, և զբոսնողների բազմությունը դառնում եր ծառուղիներում մի անընդհատ խայտանկար հոսանքով...

Քութայիսի համերգի կեսին հանկարծ յերգին միախառնվեց մի տևական ու հեռավոր գրգռոց. թվաց դա շարունակությունն է այն յերգի, վոր գալիս եր հեռու քաղաքից. թվաց թե գալիս է Անդրկովկասի լեռներից ու գետերից:

Բայց բնության ձայներին սովոր ականջն իսկույն կջոկեր, վոր դա ամպի գորգոռոց է.—ճաշարանի շուրջըն յեղած ծառերը տատանվեցին հանկարծ, նրանց տե-

րևները շրջվեցին, գունատվեցին, մի քանի ջահել զույգեր ղրնգուն ծիծաղով վազելով յեկան-մտան ռեստորան և աշխատեցին տեղ բռնել, վոր անձրևի դեպքում վոտի վրա չմնան:

— Մի՞թե անձրև է գալու,—ասավ Աննան վախեցած, վոր կարող է ուշանալ անձրևի պատճառով:

Գոռգոռոցը կրկնվեց, և նորից մարդիկ ու կանայք թափվեցին ներս: Ծառերը նորից խշշացին ու թեքվեցին մի կողմ. ապա մի սառը քամի անցավ հանկարծ, փոշու մի վոլորապտույտ սյուն բարձրացավ ծառուղում և քամու հետ ծառերի տերևների վրա ինչ-վոր կաթիլներ շողացին, ապա էլեկտրական լույսերի մոտ յերևացին ճիպոտ-ճիպոտ գծեր:—Անձրև եր: Միանգամից չրպպաց այգու գլխին: Մի կին լրագիրը ուսերին գցած, մի ուրիշը կաշվե ռեդիկյուլը գլխին՝ վազեցին ներս: Նրանց հետևից խուճապած մի բազմություն՝ կոկետ ճիչերով, աղմուկով. մի մասը նետվեց դեպի ռեստորան, մյուսը դեպի տաղավարն ու ծածկույթները:

Կայծակը փայլատակեց, և նրա լույսի մեջ անձրևը թվաց յերկնքից կախված առեջի թելեր:

Աննան դարձյալ անհանգստացավ, թե կարող է ուշանալ. բայց կարծես այնքան դժգոհ չեր:

— Վոչինչ, շուտով կկտրի: Մինչև ընթրենք...

Ցեվ Միրյանը նորից առաջարկեց մասնակցել ընթրիքին.

— Գուցե մի բաժակ գինի... Վո՞չ: Այ, յես հարգում եմ չխմող կանանց, եստետիքական տեսակետից... Դրա համար էլ այդպես թարմ եք մնացել...

Հաճույքի հոսանք անցավ Աննայի սրտով:—Քաղաքում դեռ վոչ մի տղամարդ այդպիսի խոսքեր չեր

ասած իրեն: Աննան նայում եր նրա մաքուր դեմքին, խարտյաշ մազերին, ու նրա աչքերում նկատում եր և՛ քնքշանք, և՛ հարգանք և ինչ-վոր մի բան, վորն իրեն բացատրել չեր կարողանում:

Թա՛րմ... մի անգամ գոնե Տիգրանը խոսեր այդ մասին...

Մինչ այդ՝ մի քանի րոպեյում ռեստորանը լցվեց կանանցով, մարդկանցով ու յերեխաներով. շատերը տեղ չգտնելով՝ մնացին վոտի վրա, իրար մոտ խըմբված: Դարձավ աղմկալի—ծիծաղում եյին, բարձրաձայն կատակում... Իսկ ռակովինայում յերաժշտախումբը դեռ նվագում եր, և այդ նվագը մի տեսակ ղխանմանս եր թվում անձրևի խուլ, տեղատափ խշշոցին, վորը թվում եր համատարած: Այնպես վարար եր, վոր թվում եր անձրև է գալիս ամբողջ աշխարհում...

Ամայի ծառուղիներն էլեկտրական լույսերի տակ ցոլցլում եյին թրջված թիթեղի պես, և անձրևի շիթերը ճիպոտ-ճիպոտ շարունակում եյին ծեծել ծառերն ու ծառուղիները:

Մինչև անձրևի գալը՝ Աննան դեռ չեր մտածել յերեխաների մասին. տեսնելով անձրևի տակն ընկած յերեխաներ իրենց ծնողների հետ՝ մտածեց, վոր Բուրաստանը նրանց, յերևի արդեն քուն դրած կլինի... Զրույցով տարված՝ չիմացավ վորքան ժամանակ անցավ, մեկ էլ այն նկատեց, վոր հասարակությունը հոսում է դուրս: Անձրևը կտրել եր նույնպես հանկարծ, ինչպես սկսել եր:

Աննան յերբեք այդքան չեր ուշացել տնից:

Ուստի տուն վերադարձավ այլայլված, մի տեսակ անհարմարություն զգալով:

Միրյանն ուղեկցեց նրան մինչև տուն և տան առաջ

մնաս բարևին, կրկին մի առանձին ձևով (դուրս Աննային այդպես թվաց) յերկարորեն համբուրեց Աննայի ձեռը:

— Բարի գիշեր, բարի գիշեր,—կրկնեց Միրյանը գլխարկը վերցրած, յերեսը դեպի Աննան, յետ-յետ գնալով:

Այս անգամ Աննան այնպես չփաթվեց նրա համբույրից, սիրալիրությունից, վոր ասելու խոսք չգտավ, այլ միայն գլխով արավ ժպտալով և ապա արագ-արագ բարձրացավ սանդուղներով ու դուռը քաշեց այնպես փութկոտ, ասես ուզում եր փրկվել մի վերահաս, անակնկալ վտանգից:

Պառավ Բուրաստանը դուռը բաց արավ տարակուսած:—Աննայի ուշացումն ու աճարեկ վերադարձը զարմացրին նրան:

— Տիգրան ախպերը յեկել ա՞,—հարցրեց Աննան՝ Բուրաստանի խոսքերով:

— Չե, դեռ չի յեկել ա...

Աննան, ինքնել չիմացավ ինչու, թեթևացած շունչ քաշեց ու անցավ անմիջապես քնած յերեխաների մոտ:

Ննջարանի լույսը մեղմացած եր կանաչ լուսակալով, այդ պատճառով թե՛ իրերը, թե՛ մահճակալները, թե՛ պառկած յերեխաները—ամեն ինչ գրավյուրի տպավորություն եյին անում:

Մահճակալներին մոտենալով՝ նա կռացավ և կարոտով համբուրեց փոքրին, ապա ուղղեց մեծի ղլուխը, վոր ծռվել եր բարձից և մի առժամանակ մնաց մտախոհ կանգնած: Հետո մեկեն դուրս յեկավ սեղանատուն և դարձավ այնտեղ կեցած Բուրաստանին.

— Շուտ պիտի գայի՝ անձրևը չթողեց...

Ասաց այնպիսի յեղանակով, ասես ուզում եր ար-

դարանալ ուշանալուն համար: Ու սկսեց գնալ-գալ սենյակի յերկայնքով, մտախոհ, ցրիվ քայլերով, հետո կարգադրեց Բուրաստանին, վոր գնա-քնի, իսկ ինքը շարունակեց յերթևեկել:

Միրյանի քաղաքավարությունը՝ վերջին անգամ ձեռը համբուրելը տարօրինակ եր թվում նրան. վոչ միայն տարօրինակ, այլև արտակարգ մի բան...

Դա քաղաքավարությո՞ւն եր, իսկապես, թե դիտավորություն,—Աննան իրեն բացատրել չեր կարողանում:

* * *

Հյուրանոց գնալիս Միրյանն ինչ-վոր բուրմունք եր զգում, և նա չեր կարող ասել—ողի՞ց եր դա, թե՞ Աննայի ձեռից: Ցեվ մինչև տուն նրա մտքերը դառնում եյին Աննայի շուրջը. հիշում եր նրա դեմքը, շարժումները, դիմագծերը, բոցկլտող աչքերը, վոր ամոթխած փայլ ունեյին մի տեսակ: Հիշում եր և կրկնում մտովի.

«Ի՞նչ կանայք կան այս գավառներում—անհայտ գանձեր»...

Նա շատ կանայք եր տեսել, ապրել եր շատերի հետ, բայց վոչ մեկը նրան այնպես թարմ ու գրավիչ չեր թվացել, ինչպես Աննան:

«Այո, այս գավառներում լավերը կան»,—կրկնեց նա ճանապարհը շարունակելով:

Հազիվ տաս-քսան քայլ եր արել—դեմը յելավ կոմունալ տնտեսության վարիչը—Տիգրանը՝ իր անբաժան պորտֆելը թևի տակ: Դեռ հեռվից, ելեկտրական լապտերի լույսով Միրյանը նկատեց, վոր նրա կրծքագրպաններով բաճկոնը, հեարինները և անգամ պորտֆելը փոշոտ եյին, անձրևից թրջված ու ցեխոտ. թվում եր՝ վայր ե ընկել կամ քսվել և պատերին:

— Բարև, ընկեր Միրյան,—ասաց Տիգրանը մոտենալով:—Կայարանից եմ գալիս: Կիրը, ներկը ստացանք: Կարգադրեցի, վոր գիշերը փոխադրեն շենքի մոտ: Կայարանը չեր ուզում գիշերը թողնել: Բայց զիջեցին: Վաղվանից կսկսեն կոմունա-տունն սպիտակացնել, հետո կներկեն, և մի տաս որից, ամենաշատը, տունը կբացենք...

Նա ժպտում եր փոշոտ դեմքով, և նրա կապույտ աչքերը զվարթ նայում եյին Միրյանին, իսկ Միրյանը շփոթված քիչ առաջվա մտքերից, հարցրեց ցրված.

— Ասում եք տաս որի՞ց:

— Այո, ժամանակին հասցնում ենք: Հիանալի յե, չե՞...

— Այո, հիանալի յե...

VI

Կոմունա-տան աշխատանքները շարունակվում եյին դեռ: Նա ամբողջովին պատնեշված և վոտից-գլուխ տակավին փայտե սյուների, սանդուխների, կամուրջների ու լաստակների մեջ՝ նմանում եր մի վիթխարի կմախքի, վորին որեց-որ միս ու արյուն եյին աշխատում տալ վարպետները, բանվորները, տեխնիկները. բոլորը հավաքված նրա շուրջը, նրա մեջ, նրա վրա— կարգի եյին բերում նրան, հարդարում, աշխատում հասունացնել նրան, շունչ տալ, կյանք տալ, փայլ տալ: Ու բակում դիզված փայտեղենը, կիտուկներով ավազը. կիրը հալվում եյին հետզհետե, բայց բերում եյին ելի, ելի.... Բազմաթիվ ծանրաբեռ սայլեր ճռինչով մտնում եյին տախտակյա պարիսպներից ներս և թեթև թխթխկոցով դուրս գնում: Մի ժամանակ զգացվեց ներկարարների պակասություն, և Տիգրանն անհանգիստ զանգահարում եր աշխատանքի բորսա, խնդրելով «շտապ կարգով» հյուսներ ու ներկարարներ տրամադրել, թեև լավ գիտեր, վոր քաղաքի բոլոր արհեստավորները գրեթե իր կառուցումների վրա յեն:—Ո՞վ ե իմանում—թերևս նոր մարդիկ, նորեկ արհեստավորներ լինեն... Յեվ ինքը՝ Տիգրանն այժմ ավելի, քան յերբեք, հաճախ գնում եր, ինչպես ինքն եր ասում, տան «առաջադիմությունը» տեսնելու: Քաղաքի բազմատեսակ և հետզհետե մեծ

Ժամանակ պահանջող գործերի մեջ նա իր ուշադրության մեծ մասը դարձյալ նվիրում էր նրան: Ինչպես ասինք դա նրա սիրած շենքն էր—առաջին կոմունատունը, իր ասելով՝ «առաջին փորձը», որով քննություն պիտի տար քաղխորհրդի և հասարակության առաջ...

Այդ էր պատճառը, յերևի, վոր նա գրասենյակում, այսինքն կաբինետում նստել չէր կարողանում. վորքան հետաքրքրում էր նրան Ջրմուղի, նոր բաղնիսի և մյուս նորակառույցների աշխատանքները—կրկնակի չափով և, թերևս, ավելի հետաքրքրում էր I կոմունա—տունը կամ, իրենց կոմունալնիկների լեզվով ասած, № 35–ը: Տիգրանին թվում էր միշտ, թե հանկարծ մի սխալ թույլ կտան, և այդ սխալը նոր ծախսերի դուռ կբանա և օրերի կորուստ կպատճառի: Այս խնդրում, ասում եյին, վոր նա պլյուշկայու անվստահություն ուներ. ուզում է միշտ գործի գլխին լինել և իր աչքով հետևել ամեն ինչի ընթացքին... Ու վոչ միայն առավոտներն էր գնում շինարարական աշխատանքները տեսնելու, այլ և ճաշի մոտ, յերբ աշխատակիցները ցրվում եյին իրենց տները—նա տուն գնալիս չէր կարողանում իրեն զսպել. Մանավանդ կարգադրում էր (յեթե կառքով էր գնում) թեքվել դեպի «ես ինչը». իսկ վոտով գնալիս՝ ուղղակի կանգ էր առնում ճանապարհի վրա գտնվող նորակառույցի մոտ, տեսնելու «ինչ են ավելացրել»... Քաղաքի գլխավոր ինժեներ Սամսոն Սիմոնիչը, վոր հսկում էր ընթացիկ կառուցումներին, չէր նեղանում նրա հաճախակի այցերից, այլ միայն զգուշացնում էր.

— Ո՞ւր գնում եք միասին գնանք, Տիգրան Պետրովիչ. յեթե անհասկանալի բան լինի՝ յես կբացատրեմ

կամ յեթե կարգադրություն անեք՝ ինձ ասեք. լավ չի, վոր վարպետները, բանվորները յերկու տեսակ կարգադրություն են լսում:

— Ճի՛շտ է, ճի՛շտ է, Սամսոն Սիմոնիչ,—համաձայնում էր Տիգրանը,—այսուհետև միասին...

— Հետո. յերկու կարգադրություն լսելով՝ վարպետները, աշկերտներն այն կարծիքը կարող են կազմել, թե մեր մեջ համաձայնություն չկա: Վերջն այն կլինի, վոր վոչ մեկիս էլ չեն լսի և իրենց գլխացածը կանեն...

— Ճի՛շտ է, ճի՛շտ է, Սամսոն Սիմոնիչ, այսուհետև...

Բայց և այնպես առավոտը տնից դուրս գալուն պես՝ Տիգրանը կրկին մենակ գնում էր շենքերը և ամենից շուտ, իհարկե, № 35–ը. հորդորում, խրախուսում էր, վոր շուտ անեն, լավ անեն և պատվով վերջացնեն:

Արդյո՞ք նրա հորդորներն եյին պատճա՞ռը, թե՞ արհեստավորների արտելների յեռանդը—աշխատանքները ժամանակին ավարտեցին և Տիգրանն, իրոք, կարողացավ խոստացած օրը նշանակել տան բացումը:

Յեվ ամեն ինչ արվեց բացումը շքեղ ու տպավորիչ դարձնելու: Դեռ մի քանի օր առաջ քանդեցին–հավաքեցին տանը փողոցի անց ու դարձից պաշտպանող տախտակե պատնեշները և շենքը վանդակող սյուները, սանդուխները, լաստակները. բակը մաքրվեց ավելորդ շինանյութից ու կարգի բերվեց, ապա սկսվեց բանվորական ընտանիքների տեղափոխությունը,—կամ, ինչպես կոմունալ տնտեսության մեջ եյին ասում, «բնակեցումը»: Շինանյութ կրող աղմկալի ֆուրգոնների փոխարեն այժմ իրար յետևից տան բակն եյին մտնում տնա-

յին իրերով՝ յերկաթե մահճակալներով, անկողիննե-
րով, պահարաններով ու ոտները վեր տնկած աթոռ-
ներով բեռնված սայլեր, և թարմ, ներկահոտ բուրող
սենյակներում ծայր եր առնում կյանքը, բակում անծա-
նոթ յերեխաների խաղը. լուսամուտներում յերևացին
ծաղկանոթներ ու վարագույրներ...

Յեվ մի որ էլ մի խումբ մարդիկ՝ կոմունալ տնտե-
սության աշխատակիցներ՝ յեկան ու սկսեցին տան
ճակատը զարդարել փոքրիկ-փոքրիկ կարմիր դրո-
շակներով, գույնզգույն լամպերով, կարմիր կտորների
վրա գրած լոզունգներով, իսկ յերկրորդ հարկի փո-
ղոցահայաց պատշգամբներից մեկը հատկապես զուքե-
ցին գորգերով ու թարմ կանաչների դերլյանդներով:
Աշխատեցին նրանք մինչև ուշ յերեկո. նրանց
օգնում եյին նոր բնակիչներից վոմանք և մանավանդ
պահակ Սահակը. ծղոտե լայնեզր գլխարկը աչքե-
րին քաշած՝ նա սանդուխները տեղափոխում եր դես ու
դեն կամ թել ու մեխ հասցնում տունը զարդարողնե-
րին. յերբեմն էլ կանգնում նայում եր, նայում ու
բացականչում.

— Պա՛հ, ձեր տունը չինվի, թաղա հարսի պես զու-
քեցիք...

Տունն, իսկապես զուքվում եր, և այդ հանգամանքն
ուրախացնում եր Սահակին. նա, վոր հիմնադրությու-
նից հետևել եր նրա կյանքին—շինարարության յեռ ու
զեռին, տեսել եր նրա խառն ի խուռն անկերպարան
տեսքը, այժմ նրա զարդարվող ճերմակ պատերն ու
փոքրիկ ճաղավոր պատշգամբները տեսնելով՝ իրեն
զգում եր թեթևացած, պատասխանատվությունից ազատ
և հոգեպես հանգիստ. նրան միայն փոքր ինչ մտահո-
գություն եր պատճառում այն, թե հիմա ինչ գործի

կգտնեն իրեն. ելի պահակություն վորևե նորակառույցի
վրա, թե դարձյալ կուղարկեն գումակ՝ սայլ բանեց-
նելու...

Տիգրանը տան բացումը նշանակել եր հանգստի օր,
վորպեսզի մարդ շատ լինի: Յեվ նա հասել եր նպատա-
կին: Դրան նպաստել եր և պայծառ օրը: Բացի հրա-
վիրվածներից յեկել եյին պրոֆմիությունները իրենց
դրոշներով, հիմնարկների վարիչները, տեղական կուս-
կոմիտեյի կազմը՝ քարտուղարի գլխավորությամբ, մի-
լիցպետն իր միլիցիոներներով կարգ պահպանելու:
Յեկել եյին պիոներներն իրենց թմբուկներով, ճերմակ
հագնված ու գլխաբաց: Յեկել եյին ուղղակի հետաքրք-
րրվող քաղաքացիներ, կանայք, տեսնելու, ինչ են շի-
նել Պանդոնց Պողոսի տան տեղը: Յեկել եյին մինչ յե-
րաժշտասեր յերեխաներ: Յեկել եյին նաև ամառանոցների
մեծ մասը հանդես տեսնելու... Թեև քաղխորհրդում
յեղել եյին մարդիկ, վոր այն կարծիքն եյին հայտնել,
թե ինչ կարիք կա տան բացման հանդես կազմակեր-
պելու, բայց Տիգրանը պնդել և համոզել եր, վոր դա
անհրաժեշտ ե. պետք ե մասսան տեսնի և վայելի իր
նվաճումը, պետք ե տոնել յուրաքանչյուր հաղթանակ,
թեկուզ այն լինի փոքր... Յեվ դրան համամիտ եր յե-
ղել քաղխորհրդի նախագահության մեծամասնու-
թյունը:

Յերաժշտախումբը թոքերը լարած դանդաղ նվա-
գում եր տան առաջ, և նրա ձայնի վրա հավաքվում
եյին նորանոր խմբեր: Տունը փոխադրված բանվորա-
կան ընտանիքները դուրս եյին յեկել պատշգամբները և
մեծ մասամբ յերեխաները գրկներին վերից նայում եյին
բազմությանը: Նրանք նույնպես իրենց պատշգամբները

զարդարել էին ինչով կարողացել էին—դրոշակներով, զարդերով. ոմանք դրոշակների հետ միասին կախել էին Մարքսի, Լենինի պատկերները... Թե՛ ներքև՝ տան առջևում, լայն փողոցում հավաքված բազմությունը, թե՛ պատշգամբները դուրս եկած բնակիչները, երաժշտությանը ականջ դնելով, անհամբեր սպասում էին թե ե՞րբ է հանդեսը բացվելու:

Նույն սպասողական դրության մեջ էր և Աննան՝ երեխաների և ընկերուհու՝ Թոզայի հետ: Նա անհանգիստ նայվածքով պատշգամբում, բազմության մեջ փնտրում էր Տիգրանին, Միրյանին և քաղխորհրդի ծանոթ մարդկանց: Առայժմ տեղկոմ Գեղամից բացի—ոչ ոք չէր երևում. երևի դեռ չեն եկել,—մտածում էր Աննան ու վրդովվում, որ իզուր սպասեցնում են մարդկանց: Դեռ երեկ Տիգրանը հայտնել էր նրան, թե եզուց տան բացումն է, լավ կանի երեխաներին վերցնի—գա: «Արի տես ի՛նչ տուն է դուրս եկել»... Առավոտը նորից հիշեցրեց, որ չմոռանա և անպատճառ գա: «Մի երկու խոսք էլ ես եմ ասելու»: Ցեվ ահա Աննան եկել էր. ու ոչ միայն երեխաներին էր բերել, այլև Բուրաստանին (որը հիմա հաշվում էր տան լուսամուտները և «երեք քանի» վրա սխալվելով՝ նորից էր սկսում)-այլև հրավիրել էր Թոզային ու ամուսնուն՝ Իլիասին, որ եկել էր Ֆրանս՛ հագնված—ուղղակի յեվրոպացի: Համատարած կեպիների ու փուքսած կաճերի մեջ նա աչքի էր ընկնում իր ֆետրե գլխարկով, սև սյուրտուկով, արծաթագույն ձեռնափայտով. Սովորականից լավ հագնվել էր և ինքն Աննան: Քանի որ Աննայի մեջ միանգամից զարթնել էր լավ հագնվելու ցանկությունը—հին օրերի հիշողությունը—նա շա-

րունակում էր լավ հագնվել և ավելի ուշադիր լինել իր արտաքինին. այդ բանը նկատել էին և ուրիշները: «Ել հո նորից չեմ ջահելանալու»,—մտածում էր նա, կրկնելով Թոզայի խոսքերը՝ կյանքը վայելելու մասին... Այժմ նա ինքն էլ գտնում էր, որ կյանքից չպիտի կտրվել, այլ պիտի լինել նրա մեջ—լավ ապրել, լավ հագնվել... Այլապես ինչ կմտածեն մայրաքաղաքներից եկած մարդիկ—Միրյանը, Թոզան, նրա ամուսինը. չեն ասի՝ գավառացի է, ետամնաց, քաղաքակիրթ ձևերից զուրկ: Պետք էր ցույց տալ, որ ինքն ընդհակառակը, զուրկ չէ այդ բոլորից և, հագնվելն ու լավ ապրելն արատավոր բան չի: Մի անգամ, զրույցի ժամանակ, Միրյանն այն միտքը հայտնեց, թե ինքը չի հասկանում ինչու լավ հագնվելն ու լավ ապրելը որոշ կոմունիստներ համարում են մեշչանություն, քանի որ կոմունիստներն իրենց հեղափոխությամբ՝ ուզում են հենց այնպես անել, որ բոլորն էլ և՛ լավ ապրեն և՛ լավ հագնվեն... Առաջ Աննան համամիտ էր Տիգրանին, թե պայքարի մեջ ո՛վ է հագուստի ու գեղեցկության մասին մտածում: Բայց այժմ համամիտ էր Միրյանին ու Թոզային—թե կարիք չկա կյանքից հեռու մնալ... Թերևս այդ էր պատճառը, որ եկել էր լավ հագնված և ուրախ տրամադրված: Նա լավ հագցրել էր և երեխաներին—ամառային կապույտ մատրոսկաներ՝ ճերմակ յերլիզներով, կլոր գլխարկներ՝ ժապավենի ծայրերը ետևից կախ: Բայց Աննան եկել էր ոչ միայն Տիգրանին լսելու և տոնով հետաքրքրվելու, այլև նրա համար, թե ինչ են ասելու Միրյանի մասին, կամ ինչ պարգև են տալու նրան, իբրև տան հատակագծի հեղինակի: Թերևս նա ինքն էլ մի քանի խոսք ասեր. հետաքրքրական էր ինչ կասեր և ինչպես կխոսեր... Հայտնի չէ ին-

չու, Աննան յենթադրում եր, թե նա սովորականի պես չի խոսի, այլ մի ուրիշ ձևով—ավելի լավ, ավելի բովանդակալից ու օրգինալ, վորպես մայրաքաղաքից յեկած մարդ···

— Մամա, պապան շուտով կխոսի՞,—անհանգստանում եր Սուրենը՝ մոր ձեռը բռնած:

— Շուտով, շուտով—հանգստացնում եր Աննան, շարունակելով անհանգիստ նայել բազմության ու յերկրորդ հարկի առավել զարդարուն պատշգամբին, թե յե՞րբ պիտի յերևան, վերջապես, հանդեսը կազմակերպողներն ու բացողները:

Մեկ ել տարածվեց՝ «գալի՛ս են··· յեկա՛ն, յեկա՛ն»···

Բազմությունն իրար անցավ, ալեկոծվեց, աշխուժացավ···

Յեվ մի քանի րոպե անց, իսկապես, յերկրորդ հարկի գորգերով ու գերլյանդներով զարդարված պատշգամբում յերևաց քաղխորհրդի նախագահը՝ ընկեր Մարութը՝ կարճ, պնդակազմ մի տղամարդ՝ տակից խուզված գլխով, վորով հիշեցնում եր ռուս պոետ Դեմյան Բեդնուն. ապա քաղխորհրդի նախագահության յերկու անդամը՝ իրար այնքան նման, ինչպես յերկվորյակներ, հետո ինքը Տիգրանը՝ մի քանի աշխատակիցներով շրջապատված. դրանցից հետո քաղաքի ծեր ինժեներ Սամսոն Սիմոնիչը՝ սպիտակ գլխարկով և հնաձև չեսուչա պիջակը հագին, և Միրյանը՝ մաքուր հագնըված ու գլուխը բաց: Մի յերկու վայրկյանում յերկաթե պատշգամբը լցվեց մարդկանցով, վորոնց մեջ Աննան ճանաչեց, ի միջի այլոց, բջիջի քարտուղար Բաբեղամին և տեղկոմ Գեղամին: Հավաքվողներից վոմանք կարմիր բանթ ունեյին կուրծքերին:

Նրանց յերևալուն պես յերաժշտախումբը նվագեց «Ինտերնացիոնալ»: Նվագի մեջ Տիգրանն առաջ յեկավ դեպի ճաղերը: Նա հագել եր կապույտ բլուզ, վորի օձիքը, յերկու կոճակը բաց լինելով, կախված եր. Նրա կարճ կտրած և մի կողմի վրա թեքած մազերը սանրել եր սովորականից խնամքով: Յերբ յերաժշտախումբը լռեց և տիրեց այդպիսի դեպքերում սովորական սպասողական լռությունը—Տիգրանը իր կապույտ աչքերի հածող հայացքով նայեց բազմության, ասես ում-վոր վորոնելով, ապա մեկեն պատռեց լռությունը:

— Ընկերներ, այսոր հավաքվել ենք այստեղ մեր քաղաքի առաջին կոմունա-տունը բանալու: Այսինքն յեկել ենք մեր հեղափոխության հաղթանակներից մեկը տեսնելու: «Հաղթանակ» եմ ասում, վորովհետև, հիշեցեք մի րոպե, յեթե չլիներ մեր հեղափոխությունը հնարավո՞ր եր արդյոք մեր յետամնաց, խարխուլ քաղաքում լայն շինարարություն, այն ել կոմունալ շինարարություն—կոմունա-տուն··· Նայեցեք, ընկերնե՛ր, այս պատշգամբներին,—նա ձեռը մեկնեց աջ ու ձախ:—Այստեղ ապրում են բացառապես բանվորներ. Նրանք, ովքեր առաջ ապրում եյին խոնավ գետնահարկերում, նկուղներում ու խրճիթներում: Մեր հեղափոխությունը այժմ նրանց բարձրացրել ե վերին հարկերը···

Նա նկարագրեց բանվորների նախկին կյանքն ու կենցաղը, նրանց ծանր աշխատանքը և զուրկ ապրուստը, խոսեց այն մասին, վոր մինչ հեղափոխությունը քաղաքի կենտրոնը յեղել ե բուրժուազիայի ձեռին, հիմա պիտի լինի ամեն ինչ ստեղծող բանվորինը···

— Յեվ այսպես բոլոր ասպարեզներում մենք նկուղներից բարձրանում ենք վերնահարկերը···

Յերկարատև ծափերն ընդհատեցին Տիգրանի ճա-

րը, և յերաժշտախումբը, այդ ծափերից խրախուսված, նվագեց իր «ցըմբա–ցըմբան»:

— Այս տունն, ընկերներ,—շարունակեց Տիգրանը, ձայնը փոքր ինչ բարձրացնելով,—առաջի՛նն է այն բազմաթիվ տներից, որ պիտի կառուցի մեր կոմունալ տնտեսությունը, մեկն այն կոմունա–տներից, որոնք պիտի գան փոխարինելու մեր խարխուլ, մեկուսի և ինքնամփոփ տներին...

Այստեղ ճառախոսը կանգ առավ կոմունա–տների նշանակության վրա, չմոռանալով հիշել և այն, թե այսուհետև սև, մռայլ տների փոխարեն իրենք կառուցելու յեն լուսավոր ու սպիտակ տներ, որ մեր հին, բուրժուազիայից ժառանգած գորշ քաղաքը դառնա սոցիալիստական պայծառ, սպիտակ քաղաք...

Ինչպես միշտ՝ Աննան ժպտաց այս խոսքերի վրա ու նայեց, թե ինչ տպավորություն թողին Տիգրանի խոսքերը նրա ընկերների վրա: Պատշգամբում կանգնածներից վոչ–վոք համարյա՝ չփոխեց իր հանդիսավոր ու լուրջ արտահայտությունը. միայն բջիջի քարտուղար Բարեղամն էր, որ «սպիտակ քաղաք» խոսքերի վրա շրթերը կնճռեց. նա քանի անգամ զգուշացրել էր Տիգրանին, թե «սպիտակ քաղաք» մի ասի. բայց չեղավ դարձյալ—վոգևորությունը տրամաբանության թշնամին է—վոգևորությունից խոսքերը թռան, և Բարեղամը ժպտաց քմծիծաղ:

Իսկ պառավ Բուրաստանը, որ փոքրիկ Կարլենին գրկած, լսում էր «ախպորը» (վորքան էլ համոզել եյին, վոր «ընկեր» ասի, նա «աղայից» չեր հրաժարվել, վերջը համաձայնության եյին յեկել «ախպոր» վրա), հանկարծ սկսեց լաց լինել անխոս: Նրա այտե–

րից գլորվող արցունքները տեսնելով՝ Աննան հարցրեց պատճառը.

— Ինչո՞ւ յես լաց լինում:

— Շատ լավ ա խոսում, սիրտս չի դիմանում,—պատասխանեց պառավը, աչքերը գոգնոցով սրբելով:

Այնուհետև Տիգրանը թվեց, թե ի՛նչ դժվարություններ են հաղթահարել տան վրա աշխատող բանվորներն ու վարպետները:

— Յեվ նրանցից մի քանիսն արդեն բնակարան են ստացել այս տան մեջ...

Նորից ծափահարեցին: Նորից յերաժշտախումբը, ծափերից վոգևորված, նվագեց, և Բուրաստանը նորից գոգնոցը տարավ աչքերին: Ռոզան նրան նայելով՝ ժպտաց.

— Вот дура!..—ասավ նա, Աննային դառնալով:

Բայց Աննան նրան չեր լսում: Նա ուշադիր հետևում էր, թե ինչպես են վերաբերվում ընկերները, առհասարակ ներկաները Տիգրանի ճառին և թե ի՛նչ է ասելու Տիգրանը Միրյանի մասին: Աննային թվում էր, թե Տիգրանը չի կարող մոռացության տալ նրան, իբրև տան նախագծի հեղինակի: Այն ժամանակ, յերբ հիշեց վարպետներին ու բանվորներին, չի կարող չհիշել և Միրյանին: Նայելով պատշգամբում կանգնած ճարտարապետին, Աննային թվում էր, թե Միրյանը նույնպես սպասում է այդ խոսքին.—թերևս և վիրավորված է զգում... Անհարմար բան կլինի, իսկապես, յեթե Տիգրանը մոռանա նրան: Մարդուն հրավիրել են տան բացմանը ներկա լինելու և հանկարծ... անունը չհիշեն: Աննան նույնիսկ կարծում է թե՝ նրան կպարգևատրեն.. Այո, քանի վոր հրավիրել են... հատկապես...

Տիգրանը շարունակում էր խոսել, միաժամանակ.

աչքերով վորոնել կնոջն ու յերեխաներին. Նա ուզում էր ստուգել՝ Աննան յեկե՞լ է թե վոչ, ու միաժամանակ մտածում էր, թե արդյո՞ք յերկար չի խոսում, և թե ինչպես յեզրափակի ճառը... Նա, վերջապես, Իլիասի ֆետրե գլխարկի շնորհիվ, Աննային գտավ. տեսավ նրանց խումբը, տեսավ Բուրաստանին Կարլենը գրկին ու, խոսելով մտածեց, թե տեսնես ինչպես է դուր գալիս իր ճառը նրանց:

— Ի վերջո թույլ տվեք, ընկերներ, շնորհակալություն հայտնել տան վրա աշխատող բանվորներին, վարպետներին և տան հատակագծի հեղինակ ընկեր Միրյանին,—Տիգրանը ձեռը մեկնեց դեպի ճարտարապետը,—վոր այսոր հյուր է մեզ մոտ...

Ծափահարությունն ու նվագը անլսելի դարձրին խոսքի շարունակությունը. «և վոր ձեռնարկել է մեր քաղաքի նոր հատակագծին»... Այնուհանդերձ այդչափն էլ կարծես բավարարեց Աննային, վորովհետև նա վախենում էր թե Տիգրանը բոլորովին մոռանա նրան: Աննան իրեն բավական թեթևացած զգաց. նրան նույնիսկ այնպես թվաց, թե այդ խոսքերին հետևող ծափերն ու նվագը վերաբերում են միայն Միրյանին,— ինքն ևս ծափահարեց, Ռոզայի թևը քաշեց, վոր նա յել ծափահարի, վորպես ծանոթի: Այդ բոլորն, ըստ յերևույթին, իր հասցեյին էր ընդունում և Միրյանը, վոր այժմ պատշգամբից, քաղաքի ծեր ինժեներ Սամսոն Սիմոնիչի կողքին, առաջին շարքի յետևից գլուխ էր տալիս ներքևի հասարակության և պատշգամբում գտնվողներին, կարծես անակնկալ ընդունելությունից շփոթված: Նա իր բարձր հասակով և սպիտակ դեմքով աչքի յեր ընկնում պատշգամբի հասարակության մեջ:

— Այժմ թույլ տվեք, ընկերնե՛ր, շնորհավորել ձեր

առաջին կոմունա-տունը,—շարունակեց Տիգրանը, յերբ լռություն տիրեց,—և թույլ տվեք հանդեսը հայտարարել բացված:

Տիգրանից հետո պիտի խոսեր քաղխորհրդի նախագահ ընկեր Մարութը: Նա նախկին, հեղափոխական անցյալով հարուստ բանվոր էր: Ճառ ասելը իր համար համարում էր ամենադժվար բանը բոլոր գործերի մեջ. Նա մեկն էր այն բանվորներից, վորոնք զգում են իրենց գիտության պակասը և իրենց բոլոր ազատ ժամերը նվիրում են իրենց պաշարն ավելացնելու. խոսում էյին, վոր նա վեր է կենում ժամը 6-ին, լամպի լույսով կարդում է մինչև աշխատանքի ժամը, իսկ գործի յեր գալիս բոլորից շուտ... և աշխատակիցներն, այդ տեսնելով, ամաչում էյին և աշխատում նրանից յետ չմնալ: Պատշգամբի ճաղերի մոտ կանգնած՝ նա շուրթերը շարժում էր բոլոր ժամանակ ու ցրիվ նայում բազմության. Նա Տիգրանին չէր լսում, վորովհետև մտքում իր ճառն էր պատրաստում:

Նույն դրության մեջ էր և Միրյանը. նրան թվում էր, թե յերևի, անհրաժեշտ կլինի, վոր մի քանի խոսք էլ ինքն ասի. ու կարծում էր թե այդ ծափերից հետո խոսքը կտրվի իրեն, և նա շնորհակալություն կհայտնի և կխոստանա իր ուժերը տրամադրել...

Այդպես էր թվում և Աննային. բայց յերբ Տիգրանը խոսքը տվեց քաղխորհրդի նախագահին, Աննան դա վերագրեց այն բանին, վոր բջիջի քարտուղար Բարեղամը վերջին վայրկյանին ինչ-վոր փսփսաց Տիգրանի ականջին:

Քաղխորհրդի նախագահը յերկար չխոսեց. նա այն կարծիքը հայտնեց, թե շատերն այսպիսի մեծ տները շռայլություն են համարում մեր քաղաքի համար, իսկ

վոմանք կարծում են, թե քանի վոր կոմունիստները յերկար չեն մնալու, ել ինչու յեն... Բայց վոչ, այդ չի լինի. կոմունիստները հաստատուն տներ են շինում իրենց համար՝ յերկա՜ր, յերկա՜ր ապրելու:

Իր խոսքի վերջում՝ նա մի քանի կոմպլիմենտ ասավ Տիգրանի յեռանդի և նվիրվածության մասին, վոր ընդունվեց ծափերով, և վորից Տիգրանը ժպտաց ընկերաբար:

— Եդպես, մենք վորոշել ենք աշխարհը փոխել,— վերջացրեց նախագահը,—և պիտի փոխե՛նք...

Ապա խոսեցին մի քանի հիմնարկների և կազմակերպությունների ներկայացուցիչներ: Բոլորն ել կոմունատունը համարում եյին նվաճում. ընդգծում եյին նրա նշանակությունը մարդկանց դաստիարակելու, նրանց կենցաղը, հոգեբանությունն ու մտայնությունը փոխելու գործում: Այս միտքն ավելի վորոշ արտահայտեց քաղաքի լուսաժվարը, վոր յեղջերյա ակնոցով մի գունատ յերիտասարդ եր, նախկին բանաստեղծ, այժմ կոմպլեքսային մեթոդի կողմնակից:

Ցերաժշտախումբը իր պարտքն եր համարում բոլոր հռետորներին ընդհատել իր «ցըմբա-ցըմբայով», իսկ վերջում, ծափերի մեջ, ուղեկցել նրանց «Ինտերնացիոնալով»...

Հանդեսը վերջացավ ժամը չորսին: Բազմությունն սկսեց ցրվել. մի քանի փոքրիկ խմբեր գնացին նոր բնակարանները տեսնելու, մի ուրիշ խումբ ել՝ կոմունարների խումբ (վորոնց մեջ եյին և Տիգրանը, քաղխորհրդի նախագահ ընկեր Մարութը, Միրյանը)—անցավ բակը, ուր, տան վրա աշխատող բանվորների ու վարպետների համար, Տիգրանի խոստման համաձայն,

ճաշի յերկար սեղան եր պատրաստված խնձորենիների ու տանձենիների տակ, նրանց զով, ժանյակավոր ստվերների մեջ:

Աննան նույնպես (յերեխաներին Բուրաստանի հետ տուն ճամբելով) Ռոզայի և Իլյասի հետ մտավ տան բակը: Ռոզան չեր ուզում մնալ ճաշկերույթին, պատճառաբանելով, թե «ախր в качестве каго»: բայց Աննան պահեց նրան, նրա հետ, իհարկե, և Իլյասին. ու նրանք յերեքով, Աննայի առաջարկով, նստեցին իրար կողքի—Միրյանի մոտ: Աննան Միրյանի ու Իլյասի մեջտեղը, Ռոզան Միրյանի մյուս կողմը, թեև Աննան այդ չեր ուզում, բայց այդպես պատահեց:

— Շնորհավորում եմ,—ասաց Աննան Միրյանին, յերբ նստել եյին:—Սա և ձեր տունն եր:

— Ի՞մ տունը,—զարմացավ Միրյանը:—Սա ձեր քաղաքի, ձեր ամուսնու տունն ե: Վո՞չ թե իմը: Միա՛յն նրանը:

— Չե՞ վոր պլանը ձերն ե:

— Բայց կառուցել ե նա:

— Սակայն հեղինակը դուք եք:

— Իրագործել ե նա:

Միրյանին շնորհավորեցին նաև Ռոզան ու Իլյասը. Նրանք շատ ուրախ են, վոր այս տան հեղինակն իրենց հյուրանոցի հարևանն ե: Միրյանը, շնորհակալություն հայտնելու համար, վեր կացավ տեղից և մեջքից հետ կռանալով ձեռ տվեց նրանց, իսկ յերբ ճաշկերույթը բացվեց, սկսեց կավալերություն անել աջ ու ձախ կողմը նստած տիկիններին:

Աննան ինքն ել չեր հասկանում, թե ինչու նրա ներկայությունը հուզում ե իրեն, նայվածքը շփոթում և ձայնից մի դող, ավելի շատ հաճելի սարսուռ և անց-

նում մարմնով: Բայց միաժամանակ Աննան մի տեսակ տհաճ բան էր զգում, յերբ Միրյանը պատրաստակամ թեքվում էր Ռոզայի կողմը: Այդ զգացումը նրա համար նոր էր ու տարօրինակ: Ի՞նչու չի ուզում, որ Միրյանը ուշադիր լինի և դեպի Ռոզան: Աննան նկատում էր, որ դա առաջ է գալիս հակառակ իր կամքի ու ցանկության:

Թամադա ընտրեցին կոմունալ բաժնի դիվանապետ Դավիթին, որ հայտնի յեր քեֆասիրությամբ և սեղաններ կառավարելու հավակնոտ շնորքով· գիտեր խոսել համով ու տակով: Սակավաթիվ ճերմակ մազերը ձեռով հարթելով՝ նա վեր կացավ ուսի մեկը բարձր, մյուսը ցածր ու հին պարսկական խոսքերով սեղանը բացեց: Նա ասաց որ ինքը թեև ծեր է, բայց դեռ չի մոռացել «տալ հարկս հարկավորաց, պատիվս արժանավորաց»: Ու առաջարկեց օրվա հոբելյարի—քաղխորհրդի կենացը, հանձին նրա նախագահի: Ընդգծեց նախագահի աշխատասիրությունը, և հանաքով հիշեց նրա թերությունները, որ աշխատակիցներից վաղ է գալիս հիմնարկ և նրանցից ուշ գնում, և այսպիսով աշխատակիցներին գցում անհարմար դրության մեջ. չեն կարողանում մարդիկ ո՛չ ուշանալ, ո՛չ շուտ գնալ:

Նախագահի կենացը խմեցին ոտքի կանգնելով, բաժակների չրխկոցով:

Ընկեր Մարութը,—ինչպես պարզ կանչում եյին նախագահին բոլորը—շնորհակալություն հայտնեց շատ կարճ խոսքերով և իր կողմից առաջարկեց կոմունալ բաժնի վարիչի՝ Տիգրանի կենացը, որն «իր յեռանդի շնորհիվ տունն ավարտել ա ժամանակից յերկու ամիս առաջ»: Գովեց նրա «ենտուզիազմը» (ես նոր խոսքն արտասանելն, ասավ, դեռ լավ չեմ սովորել, բայց միտքը

հասկանում եք), նվիրվածությունը: Բարեհոգի հեգնանքով ծաղրեց Տիգրանի «տնասիրությունը», ասելով թե՝ Տիգրանը յերազում էլ տուն է տեսնում, ու «ենքան շատ ա վռազում», որ ուզում է մի առավոտ զարթնի՝ քաղաքը պատրաստ տեսնի... Վերջում խոստացավ, որ քաղխորհուրդն իր աջակցությունը յերբեք չի զլանա նրան, թեկուզ յերազների մեջ:

Ծիծաղեցին:

Իր հերթին Տիգրանը բաժակ բարձրացրեց տան վրա աշխատող բանվորների և վարպետների կենացը, որ կոմունալ տնտեսությանը «ամոթով չթողին» և «ամեն ջանք գործ դրին, տունը ժամկետից շուտ ավարտելու»:

Այս կենացը նույնպես խմեցին ոտքի կանգնած, ինչպես նախագահի կենացի ժամանակ:

Բանվորների և վարպետների կողմից պատասխանեց ավագ վարպետ Վարդանը՝ ծանրախոհ, հատ—հատ բառերով, առանց սեղանակիցներին նայելու, հայացքը տարածության մեջ. որից հետո Տիգրանը նոր բաժակ բարձրացրեց «ճարտարապետ ընկեր Միրյանի կենացը», որ այս տնից հետո հատակագծում է մեր հին քաղաքը նոր սոցիալիստական հիմունքներով... Նորից հիշեց Տիգրանն իր ծրագիրը, տվեց իր պատկերացումը, թե տներն ինչպես են շինվելու· իրարից հեռու, ծառուղիներով բաժանված· լայն, ընդարձակ փողոցներ... Նորից իր ծրագրով տարվելով՝ խոսեց նույնիսկ այն մասին, թե քաղաքացիներին սպասարկելու համար կլինեն մթերակիր սայլեր՝ Մթերակենտրոնի, ասենք, ղեկավարության տակ: Ուզած բանը քաղաքացին հեռախոսով կպատվիրի այդ կենտրոնին և կենտրոնը կհանձնի պահանջվածը հիշյալ թաղը գնացող սայլակին: Այլևս

ներք կամ պոչ չի լինի, և այդ բառերը կհանվեն բառարաններից:

Տիգրանի ձայնը վողևորեց այն աստիճան, վոր Միրյանի կենացը դարձավ կենտրոնական: Մարդիկ տեղերից վեր կացան, աթոռների դղրդոցով, մոտեցան նրան՝ բաժակին զարկելու:

Տրիումֆի պես բան յեղավ: Միրյանը անակնկալի յեկած, շփոթված քաղաքավարությամբ գլուխ եր տալիս աջ ու ձախ, հեռու, մոտիկ զանգողներին, վորոնք ամեն ձևով ու ձայնով կանչում եյին.

— Ընկեր Միրյան, ձեր կենացը, ձեր կենացը...

Ռոզան նույնպես չհամբերեց. բաժակը չրխկացրեց Միրյանի բաժակին ու ծիծաղեց դեմքովը մեկ: Իլիասը վեր կացավ ու գլուխ տվեց սալոնական ձևով: Իսկ Աննան սպասեց մինչև աղմուկները դադարեն, և յերբ ձայները լռեցին ու Միրյանը նստեց հուզված,—Աննան սեղմեց նրա ձեռը:

— Զասի վոր և ձեր տոնն է...

Ու հիացական նայվածքը հառեց Միրյանի աչքերին, վորոնց մեջ այդ րոպեյին բոցկլտում եր ինչ-վոր մի հուր...

VII

Սակայն քաղաքի հատակագիծը պահանջում եր ավելի մեծ աշխատանք, քան պատկերացնում եր Տիգրանը, քան յենթադրում եր Միրյանն ինքը: Բնակչության աճի տոկոսը պարզելուց, չափումներից և ռայոնացումից բացի անհրաժեշտ եր ուսումնասիրել նաև քաղաքի հողային ֆոնդը, շրջապատը՝ նրա հետագա զարգացման համար. հետազոտել նրա ջրային ռեսուրսները, վոր թերևս կարելի լինի օգտագործել ջրմուղի, կոյուղու և այլ նպատակների համար: Տուրիստի ձևով հագնված՝ Միրյանը մի քանի անգամ գնացել եր մոտակա բլուրների գլխից դիտել քաղաքի տեղադրությունը, պարզանալու հնարավորությունը, ուսումնասիրել եր քամիների ուղղությունը, գետի հոսանքը և ուժը: Քաղաքի կողքով անցնող գետը, վորի ջուրը միայն անասուններն եյին խմում, բանեցնում եր մի փոքրիկ ելեքտրոկայան, վոր քանի տարի յեր ինչ լույս եր տալիս քաղաքին ու յերկաթուղու կայարանին: Դա քիչ եր. զարգացող քաղաքը պահանջելու յեր ավելի եներգիա: Քաղաքի ծեր ինժեները՝ Սամսոն Սիմոնիչը, Տիգրանն ինքը և թե ուրիշները հայտնել եյին, թե այդ տղմոտ գետի մի բազուկն անտառում ջրվեժ ունի՝ մի քանի սաժեն բարձրությունից թափվող: «Ուղղակի պատրաստի սպիտակ ածուխ»,—ասում եյին: Հեռավորությունը

հինգ–վեց կիլոմետր էր։ Պետք էր գնալ տեսնել, գուցե նրանից ևս կարելի լիներ էներգիա ստանալ, գուցե, իսկապես, այդ ջրվեժը մեծ հնարավորություններ ունենար և հեռանկար... Դրա կայանը,—յեթե կայանի հնարավորություն լիներ,—Միրյանն ինքը չէր կառուցելու, իհարկե, բայց պետք էր նկատի ունենալ ապագայի համար, յերբ քաղաքն ընդարձակվեր և գործարաններ աշխատեյին, ինչպես յենթադրվում էր. այն ժամանակ յեղած հիդրոկայանը հազիվ թե բավարարեր կարիքը. հիմա արդեն նա չէր գոհացնում—ուրմընաց ապագայում.—լույսերը նկատելի աղոտ եյին...

Քանի՛ անգամ Միրյանը պատրաստվել էր գնալ այդ ջրվեժը տեսնելու, բայց միշտ էլ հետաձգվել էր։ Առաջ Սամսոն Միմոնիչն էր խոստացել ընկերակցել—հիվանդացավ,—մյուս անգամ Տիգրանն ինքը—անակնկալ ժողովի կանչվեց։ Այժմ վորոշվել էր չհետաձգել այլևս, վորովհետև այդպիսով կուշանար և հատակագծի աշխատանքը։

— Ռոզա Ռուբինովնա, չե՞ք ցանկանա արդյոք մի էքսկուրսիա կատարել դեպի անտառ,—ասաց Միրյանը մի որ Աննայի ընկերուհուն, յերբ ճաշում եյին հյուրանոցի սեղանատանը։

— Անտա՞ռ։

— Այո. վաղը գնում եմ անտառի ջրվեժը տեսնելու,—շարունակեց Միրյանը, բացատրելով գնալու նպատակը։— Կարծում եմ ձեզ համար ևս հաճելի կլինի։

— Ուրախությամբ,—համաձայնեց Ռոզան, կարած մազերը թափահարելով։—Գնա՛նք, Իլյաս։

— Այդ դեպքում լա՞վ չէր լինի, Ռոզա Ռուբինովնա, ձեր ընկերուհուն էլ վերցնենք, վոր ձեզ մենակ չզգաք։

— Աննայի՞ն։ Ուրախությա՛մբ։ Դա լավ միտք էր,—հավանություն տվեց Ռոզան։

Միրյանն ուրախ յեղավ, վոր Աննան ևս կգա։ Այդ նրա ցանկությունն էր։ Այդ կինը նրան դուր էր գալիս և նա միշտ փնտրում էր նրա ընկերությունը։

Այնուհետև նրանք պայմանավորվեցին գնալու որվա և ժամի մասին։— Կոմունալ տնտեսության կառքը կտանի մինչև անտառի պուրակը, այնտեղից մեկ ու կես, թերևս յերկու կիլոմետր կգնան վոտքով։ Հաճելի ժամեր կունենան և հետաքրքրական տեսարաններ։ Իլյասը փորձեց հրաժարվել, թե, դժբախտաբար, գործ ունի, բայց Ռոզան թույլ չտվեց շարունակի.

— Без всяких, Իլյա՛ս։ Գնո՛ւմ ենք...

Իլյասն, ինչպես միշտ, Ռոզային չառարկեց։ Յեվ հենց նույն որը Ռոզան գնաց Աննայի մոտ։

Աննան ընկերուհու հրավերն ընդունեց ցնծությամբ, մանավանդ յերբ լսեց, վոր դա բխում է Միրյանից։ Ռոզան այդ նկատեց նրա դեմքի կերպարանափոխությունից. Աննան շառագունեց աչքերը բոցկլտացին։

— Այսքան տարի այստեղ եմ, բայց այդ ջրվեժը դեռ չեմ տեսել,—ասաց նա, ու կասկած հայտնեց, թե յերեխաներն արդյոք ամբողջ որը կմնա՞ն առանց իրեն։

— Кухарка посмотрит,—ասաց Ռոզան՝ գլխով Բուրաստանին ցույց տալով։

Նրա այդ շարժումը Բուրաստանին դուր չեկավ. պառավն ռուսերեն չգիտեր, բայց «кухарка» բառից հասկացավ, վոր խոսքն իր մասին է. այդ բառը նա համարում եր վորոշ չափով վիրավորական։ Յերբ հարևանուհիները կռվում եյին միմյանց հետ (կամ իր՝ Բուրաստանի հետ)—իրար վիրավորելու կամ անարգելու համար «кухарка» եյին ասում յերբեմն։ Այդ եր

պատճառը, որ Բուրաստանը քիթը վեր քաշելով, ասաց մտքում. «Հողե՛մ կորած գլուխդ»... Բուրաստանն ատելով ատում էր ներկը և պուդրան, և բոլոր բուրմունքները, որ գալիս էին կանանցից. դրանից էր, որ առաջին իսկ օրից տանել չէր կարողանում Ռոզային ու ամուսնուն: «Մարդ ու կնիկ պեպլվում են կուկլի պես»,—ասում էր նա ամուսինների մասին: Բուրաստանն իր տարօրինակ ժարգոնն ուներ.—կանանց ներկերին ու զարդերին «պեպլիքներ» էր ասում, զուգված քաղաքացիներին «կուկլաներ»: Նա մաքրակենցաղ, անաչառ կին էր.—մթերք էր գնում, յեփում-թափում, յերեխաներին նայում, սենյակները մաքրում. յերբ հոգնում էր-ասում էր «կազմարարս թուլացել ա»: Այժմ էլ, յերբ Աննան հարցրեց, թե վաղը յերեխաներին կպահի արդյոք,—Բուրաստանը դժգոհ պատասխանեց. «Շատ էլ կազմարարս թուլ ա, բայց կպահեմ...»: Պատասխանեց և միաժամանակ հասկացավ, թե ինչ էր ասել «մաղը կրտրածը»— кухарка ասելով, ու ավելի ատելություն զգաց դեպի Ռոզան:

Այդ օրն ամբողջ և գիշերը Աննան իրեն անհանգիստ ուրախության մեջ էր զգում. անհամբեր սպասում էր, թե յերբ պետք է օրը մթնի, հետո—յերբ պիտի լուսանա: Ի՞նչ հետաքրքիր զբոսանք կլինի... Եթե Միրյանը ցանկություն է հայտնել, որ ինքն էլ մասնակցի զբոսանքին՝ նշանակում է մի բան է զգում դեպի իրեն: Ո՛, ինչ կիրթ, ուշադիր մարդ է: Ռոզան ճիշտ է ասում «душка человек»...

Մյուս կողմից Միրյանն ինքը զգում էր, որ դա մի լավ առիթ է՝ Աննային ավելի մտերմանալու: Մենակության մեջ նա սիրո, ջերմության կարիք էր զգում....

Հետևյալ օրը ամեն ինչ այնպես յեղավ, ինչպես Միրյանն էր ասել.—Կոմունալ տնտեսության կառքը, այն կառքը, որ ամեն օր Տիգրանին տանում էր նորակառույցները,—տարավ նրանց քաղաքից դուրս, դեպի անտառ... Կանայք վերցրել էին ամառային վերարկուներ, իսկ Միրյանը, ինչպես միշտ որևէ տեղ ուսումնասիրության գնալիս՝ հագնվել էր տուրիստի պես՝ հետրիններ, դեղնավուն կոշիկներ, լայն շալվար ու քիպ պիջակ. գլխին փուրաժկի փոխարեն, դրել էր կեպի և անձրևաթափը գցել թևին: Նույնպիսի անձրևաթափ ուներ և Իլխասը: Բոլորը կառք նստեցին ուրախ աղմուկով և այդպես էլ շարունակեցին ճանապարհը... Կառապան Մանասը ինքն էլ ուրախ էր, որ դուրս է գալիս քաղաքից. ու քշում էր ձիերը չափ գցած, գլխարկը թեք, մազերի փունջը հովին տված:

Ջրվեժը համարվում էր քաղաքի տեսարժան վայրերից մեկը: Առաջ տեղացիները ամեն մի նորեկի պարծանքով հարցնում էին, թե տեսե՞լ է արդյոք իրենց «կորած վանքը» և անտառի Ջրվեժը,—հիմա սակայն առաջին տեղը հատկացնում էին նոր հյուրանոցին և կոմունա-տանը, հետո միայն հիշում էին «կորած վանքը» ու Ջրվեժը.. Բայց, նոր շենքերը տեսնելուց հետո, շատ քիչ մարդ էր ցանկություն հայտնում «կորած վանքը» տեսնելու: Ինչ վերաբերում է Ջրվեժին—հեռավորությունը շատերին անմատչելի յեր դարձնում նրա բանաստեղծական հրապույրը:

Միրյանին Ջրվեժը գրավում էր, իհարկե, ոչ որպես բանաստեղծական տեսարան. նա յերազուն մարդ չէր, ոչ էլ տուրիստ. նա, ինչպես ասինք, Ջրվեժն ուզում էր տեսնել հատկապես նրա համար, որ թերևս կարելի լինի օգտագործել այն հիդրոկայանի կամ որևէ

ձեռնարկության համար, ինչպես խնդրել էր Տիգրանը:

Ճանապարհն անցնում էր ցորենի արտերի և գետնախնձորի ցանքսերի միջով. արևածաղիկները բանջարանոցներից ժպտում էյին նրանց, իսկ մի ձի հեռվում՝ կապած տեղը կանգնած, ճանճերից պաշտպանվելով, անընդհատ շարժում էր գլուխը. թվում էր՝ վողջունում է նրանց. «բարով յեկա՛ք, բարով յեկա՛ք»... Միրյանը շարունակ կատակում էր, անեկդոտներ պատմում. կանայք ծիծաղում էյին սրտանց, իսկ Իլխասը ժպտում էր միայն ու գլխով անում... Նրանց ծիծաղի վրա Մանասը յետ էր դառնում հաճախ ու ժպտում՝ նրանց ծիծաղից վարակված: Ուրախ ճամբորդն ուրախացնում է և կառապանին: Իսկ Մանասը, վորպես չահել մարդ, սիրում էր առհասարակ ուրախ հասարակություն: Ու վոգևորված քշում էր ձիերին.—Ո՛ւ ո՛ւ—հո՛ւյտ...» Ցեվ ձիերը սլանում էյին թեթև՝ բաշերը հովին տված: Կարծես նրանք էլ ուրախ էյին, վոր քաղաքի նեղ, փոշոտ փողոցներից դուրս են յեկել կանաչ դաշտը, ուր այնքան բուրմունք կար և այնքան ազատություն...

Հասնելով անտառի պուրակը՝ նրանք թեթև նախաճաշեցին վոտի վրա, ապա Մանասին թողնելով իր կառքի մոտ՝ մտան անտառ, նախապես իմանալով նրանից ջրվեժի ուղղությունն ու կարճ ճամբան: Տղամարդիկ բռնեցին կանանց ձեռներից, վոր չսայթաքեն—ընկնեն, վորովհետև արահետը, վորով գնում էյին, հետզհետե դքվում էր ու վոլորվում հարյուրամյա ծառերի, թփերի միջով. արահետին զուգահեռ ձորակով, անտառի խորքն աղմկելով, վազում էր գետակը. նրա շառաչն ու խշշոցը տեղ—տեղ փոխվում էր այնպիսի թնդյունի, վոր իրար ձայն չէյին լսում:

Մի փոքր տեղ գնալով՝ անտառի խոնավությունից սարսուռ զգացին, մանավանդ կանայք: Տեղ—տեղ ծառերն այնքան խիտ էյին, վոր ոդի պակասից խոտ չէր բուսել. մամուռ էր ու գունատ ցողուններ, վոր շերամի սնված վորդերի պես գլուխները վերը պարզած՝ արևի շող էյին վնտռում: Ծառերի տակ միջատների մի այլաձայն հանրապետություն կար. բարձրացել էր մի այնպիսի բզզոց, վոր թվում էր անտառում աներևույթ յերաժշտություն կա, և գալիս է սաստ խորքերից, ծառերից, խոտերից... մի յերաժշտություն, վոր ջրի խշշոցին ու շառաչին խառնվելով՝ անտառը լցնում էր համատարած տագնապով...

Արահետը գնալով՝ զառիվեր էր դառնում և մտնում ավելի խիտ ծառերի արանքը. տեղ—տեղ նրանց կախկխված ճղները ապտակում էյին ճամբորդների տաքացած յերեսները. ուստի նրանք քայլում էյին կրկնակի զգուշությամբ, վոր ճղներից չզարնվեն ու չընկնեն... Բարձրակրունկ կոշիկների տեղ չէր, իսկ կանայք անզգուշություն էյին ունեցել այդպիսի տուֆլիներ հագնելու: Ռոզան ամեն դժվարին տեղ ծվում էր կոկետ ձայներով, վախն արտահայտում չափազանցրած ճիչերով. իսկ Աննան, Միրյանի ոգնությամբ, թևանցուկ առաջ էր գնում անաղմուկ, անձայն, և դժվար տեղերը միայն, յերբ ճարտարապետը մի քիչ ավելի յեր սեղմում թևը—հաճելի սարսուռ էր զգում վողջ մարմնում ու, ինքն էլ չգիտեր ինչու, ցանկանում էր, վոր այդ հուզումը կըրկընվի, շարունակվի: Նա չիկնում էր ու ավելի հենվում նրան: Իսկ ճարտարապետն այնպես էր կարծում, թե վախենում է, ուստի ազատ ձեռով շփում էր նրա դողացող ձեռը ու հանգստացնում.

— Մի՛ վախեք...քանի ձեզ հետ եմ...մի՛ վախեք..

Նրա ձայնը, նրա խոսքը այդ րոպեներին Աննային ինքն ել չեր կարող բացատրել ինչու, հաճելի յեր թվում, և ուզում եր, վոր նա խոսի, խոսի... Այդ խոսքերը խլրտում եյին նրա սիրտը. թվում եր ջերմացնում են իրեն և թափ հաղորդում վոտներին: Իսկ Միրյանը, վաղուց կնոջ ընկերությունից զուրկ, իրեն այնպես եր զգում, վոր յեթե ինքը բնորոշեր զգացածը, պիտի ասեր «լավ ե»...

Փոքրիկ արահետը գնալով՝ վոլորվում եր ելի ու աննկատելի զառիվեր դառնում: Այժմ ջրի խշշոցից ու աներևույթ յերաժշտությունից բացի՝ նրանք լսում եյին ինչ-վոր հեռավոր թնդյուն, վորը, քանի առաջ եյին գնում, այնքան ավելի ուժեղանում եր, իսկ յերբ բավական տարածություն անցան—այն թվաց խուլ վորոտի նման մի բան: Թվում եր քանդում են անտառի խորքը, կամ հանքային մի գործարան ե աշխատում այնտեղ. թվում եր այնտեղ ե պատրաստվում անտառի փոթորիկը, վորը ո՛ւր վոր ե ահա պիտի ալեկոծի թուփ ու ծառ: Բայց այդ ալեկոծումը չեր լինում, և թնդյունը գնալով սաստկանում եր և շուրջը խլացնում ամեն ձայն ու շարժում: Ու վորքան սարսափելի, նույնքան և գրավիչ եր թվում նա:

— Յես մենակ կվախենայի գալ այստեղ,—ասում ե Աննան:

— Դրա համար ել յես ընկերացել եմ ձեզ,—պատասխանում ե Միրյանը և զգում ե դարձյալ, վոր Աննան հպում ե իր թևին. ջերմություն ե զգում, մոռանում ե շրջապատը, մոռանում ե իրեն, ու կրկին ակամա, բնազդաբար շփում Աննայի վախկոտ ձեռը:

Աննայի դեմքը տաքանում եր, և նա ելի խոսք չեր

գտնում ասելու: Զգում եր միայն, վոր սիրտը ցցվում ե, ուռչում, ուռչո՛ւմ...

Այդ ինքնամոռացությունից նրան հանեց Ռոզայի կոկետ ճիչը, վոր կորավ մոտակա թնդյունի մեջ: Ռոզան ուզում եր ասել «ջրվեժը», բայց լսվեց միայն, նույնիսկ ինքը լսեց միայն—«ը՛ ը՛...»:

Յեվ, իրոք, հանկարծ ծառերի արանքից յերևաց մի սպիտակ զանգված: Յեթե նախապես չիմանային ջրվեժն ե, կարելի յեր կարծել, թե յերկու հարկանի տան կտուրից թափվող ձյան հոսանք ե—այնքան ճերմակ եր ու փրփրալից: Արևը խփում եր վերևից, և նրա ցայտերն ու շիթերը խայտում եյին ծիածաններով: Քանի մոտենում եյին՝ հոսանքը թվում եր միաձույլ—ժայռերից կախված առասպելական միրուքի նման, վոր ցնցվում ու տատանվում ե հովից. ու թվում եր թնդյունը նրա անկումից չե, այլ նրա տակ տնքում ու թանչում են ինչ-վոր կաշկանդված հսկաներ:

Տաս քայլ հեռու կանգ առան՝ հիացած, զարմացած, հոգնած... Միրյանը նայեց մասնագետի աչքով և գտավ, վոր ջրի անկումը, ճիշտ ե, բավական ուժեղ ե, սակայն կայանի համար սակավաջուր: Յեվ դրանից բացի՝ ձմեռը կարող եր բոլորովին սառել: Արժե՞ր միթե դրա համար կայան կառուցել... Բայց վորպես գեղեցկություն, իրոք վոր գեղեցիկ եր: Միրյանը յեղել եր Ֆինլանդիայում, տեսել եր շատ ջրվեժներ, ինչպես և նշանավոր Իմատրան, բայց այս փոքրիկ ջրվեժն ուներ իր առանձին գրավչությունը, վոր չուներ իր տեսած ջրվեժներից և վոչ մեկը: Սա փոքր եր, փրփրալից, հավաք ու ճկուն: Սրան գեղեցկություն եր տալիս մանավանդ անտառը. շրջապատի ծառերը, թվում եր, քարացել են հայեցության մեջ...

Մի առժամանակ մեր եքսկուրսանտները լուռ եյին. խոսք չեյին գտնում ասելու: Յեվ յեթե խոսեյին ել, հազիվ թե իրար լսեյին: Իսկ յերբ կարիք զգացին իրենց հիացմունքը, զարմանքը հայտնելու, ստիպված յեղան իրար ականջի ընկնել...

— Հիանալի յե, այնպես չե՞,—ասաց Միրյանը շուրթերը մոտեցնելով Աննայի ականջին:

Աննան լսեց միայն նրա առաջին բառը, բայց ավելի զգաց նրա ջերմ շունչը, ու այդ ջերմությունը կարծես վողողեց նրա եյությունը. և հանկարծ նա իրեն կորված զգաց ամեն ինչից ու թեթև՛, թեթև՛...

— Մարդ թողնի ամեն ինչ ու գնա թափառի,—բացականչեց Աննան Միրյանին սեղմվելով:

— Գնանք ուր կուզեք,—վրա բերեց Միրյանը:—Գնա՛նք...

Աննան աչքերը խոնարհեց: Ջրի մոտ՝ թև-թևի տված, նրանք ավելի եյին սեղմվում միմյանց, նայում իրար շոգ հայացքներով ու շփոթվում կարծես:

— Ցուրտ ե,—ասաց Ռոզան, վերջապես, և նրանք վերադարձան, շուտ-շուտ յետ նայելով:

Վերադարձի ամբողջ ճանապարհին նրանք խոսում եյին այն մասին, թե ի՛նչ գեղեցկություններ կան բնության մեջ, վորոնց անհաղորդ են քաղաքի բնակիչները: Ռոզան ճամբորդությունից շատ գոհ եր. զարմանում եր միայն, վոր Աննան այսքան ժամանակ չեր տեսել այդ գեղեցկությունը: Աննան դժվարանում եր արդարանալ. ասեր՝ յերեխաները, հոգսերը չեն թողել—անհարմար եր. բայց և դրա մեջ ել տեսնում եր այն, վոր ինքն այս քաղաքը գալով՝ իսպառ կտրվել ե կյանքից: Ու հանաքի յեր տալիս Ռոզայի դիտողությունները, հիշեցնելով, թե յեթե սիրում ե այդ ահավոր բնությունը—ինչո՛ւ եր հապա ճչում շարունակ:

— Ուրախությունից, милая, վոչ թե վախից,—պաշտպանվում եր Ռոզան, նայելով մերթ ընկերուհուն, վոր կերպարանափոխվել եր կարծես, մերթ ճարտարապետին, վոր առանձին մի հայացքով եր նայում Աննային:

Այդ նկատելով՝ Ռոզան շուրթերը սեղմեց ու լռեց:

Նրա գլխով ինչ-վոր մտքեր անցան:

Կառապան Մանասը, կարմիր բլուզը անգոտի, գլխարկը թեք դրած՝ ձիերի յերասանները թողած, ականջ եր դնում նրանց զրույցին ու ժպտում բեղի տակ: Այն հանգամանքը, վոր զույգ-զույգ գնացին անտառ—դա արդեն կասկածելի յեր թվում նրան... Ու յերբեմն աչքի մեկը կուչ ածելով, խորամանկ ժպտում եր ինքն իրեն ու աչքով եր անում հեռու լեռներին, անտառներին, թե ինքը գաղտնիքներ գիտի...

VIII

Այդ օրվանից Աննան, ինքն էլ չէր կարողանում բացատրել ինչո՛ւ, անորոշ անհանգստություն էր զգում և տանը նստել չէր կարողանում. հաճախ յերեխաներին յերկար ժամերով թողնում էր պառավ Բուրաստանի հույսով, գնում հյուրանոց՝ Ռոզայի մոտ. յերբեմն օրը յերկու անգամ: Ներս էր մտնում դանդաղորեն, կանգ առնելով, ապա համրաքայլ բարձրանում աստիճաններով: Ցրված նստում էր Ռոզայի սենյակում ու խոսում անցյալից, ներկայից. և Ռոզան նկատում էր միշտ, որ նա սովորականի պես ուշադիր չի լսում իրեն, որ Աննայի ուշն ու միտքը ուրիշ տեղ է, զգում էր, որ նա չի ապրում, չի շահագրգռվում զրույցով. մտատար էր ու անհանգիստ. Թվում էր նրան զբաղեցնում են բոլորովին այլ նյութեր, այլ խնդիրներ: Զգում էր, որ ինչ-որ բան կա Աննայի սրտում, որ նա փոխված է, մանավանդ զգայուն դարձած: Որպես ուշիմ ու փորձ կին՝ Ռոզան զգում էր, որ ընկերուհին տագնապած է: Ի վերջո, նա գլխի ընկավ, որ Աննայի «սրտին մի բան է պատահել», ինչպես հայտնեց մի անգամ Իլիասին: Ու մի օր էլ չհամբերեց և առանց այլևայլի հարցրեց.

— Դու, ինչպես տեսնում եմ, Աննա, այնքան էլ գոհ չես կյանքից: Թեև աշխատում ես թաքցնել, милая, բայց что-то есть у тебя... Հասկանում եմ՝ ձանձրալի է կոմունիստի կին լինել — ժողո՛վ, մոբիլիզացիա՛, կամանդիրովկա՛...Յես օրինակ չեյի կարող այդպես ապրել...

Աննան կարմրեց. զգաց, որ Ռոզան իրեն հասկանում է մի քիչ. բայց դժվարանում էր խոստովանել. ինչ վոր մի բան արգելում էր նրան այդ անելու: Յեվ ինչպես խոստովաներ իր ապրումները:— Ասե՞լ, որ Տիգրանն իրեն գրավել է, ջահելությունից ու գեղեցկությունից բացի, նաև կոմունիստ լինելու հանգամանքով...վորովհետև նրան թվացել էր և մինչև վերջերս էլ թվում էր, թե կոմունիստները վայելում են կյանքի բոլոր հաճույքները... Բայց հենց սկզբից տեսավ, որ կոմունիստները, գոնե իր ամուսինը, աշխատանքից աչք չի թարթում վո՛չ միայն վայելքի, այլև ընտանիքի համար... Աննան ծնվել—հասակ էր առել Բաքվում. առաջին տարին այս քաղաքը գալով—նա իրեն տարօրինակ էր զգում.—նոր պայմանները, անծանոթ միջավայրը, անծով բնությունը՝ նրան շփոթում եյին և սրտում զարթեցնում ծովի և մեծ քաղաքի յեռ ու զեռի կարոտ. հաճախ հիշում էր ընկերուհիներին ու տխրում: Յերբ Տիգրանը գնում էր աշխատանքի—նա անձնատուր էր լինում մենակության ու մոռացվածության տխուր զգացումին, և ձեռը բան չէր բռնում. սպասում էր, թե յերբ կգա Տիգրանը... Հետո—իրար յետևից յերեխաներ...Նրանցով զբաղված՝ Աննան մոռացավ վայելքները. մայրությունը կլանում էր նրա բոլոր զգացումներն ու մտքերը. էլ տխրելու ժամանակ չուներ... Յերեխաների կերակուրը, շորերը, ստամոքսը, հիվանդությունները...Ու տարիներն անփույթ դարձրին նրան դեպի իր արտաքինը, թեև այնքան էլ անճաշակ չէր հագնվում գավառական քաղաքի կանանց հետ համեմատած... Բայց այժմ, Ռոզայի գալուց հետո, զգում էր, թե վորքան

յնա է մնացել ինքը, իսկ ընկերուհինե՛րը... Առաջ նույն իսկ կարծում էր, թե ուրիշ կյանքն էլ լինել չի կարող, այդպես էլ միօրինակ պիտի շարունակվի... Այժմ սակայն, ուրիշ զգացմունքներ էին անցնում նրա սրտով:

Յեվ պատճառն այդ չէր, իհարկե, վոր նա դարձել էր ցրված, այլ մի ուրիշ բան: Բայց մինչ նա կանդրադառնար դրան—Ռուզան շարունակեց խորամանկ ժպտալով, կատակով.

— Չլինի մեկին սիրո՞ւմ ես, Աննա ջան...

Աննան նորից կարմրեց ու ժպտաց փշրված ժպիտով, ընկերուհու խորամանկ տոնից յենթադրելով, թե նա, յերևի, մի բան գիտի կամ նկատել է մի ինչ: Յեվ այդ միտքը տագնապով լցրեց Աննայի սիրտը:

— Էլ մի թաքցնի, Աննա ջան: Աչքերիցդ տեսնում եմ,—շարունակեց Ռուզան, դարձյալ խորամանկորեն ժպտալով:

Աննան իրեն հանցանքի մեջ բռնվածի պես զգաց: Դեմքին լրջություն տալով՝ աշխատեց թաքցնել ինչ-վոր, բայց չկարողացավ ու ժպտաց հանկարծ խոստովանություն արտահայտող այն առանձնահատուկ ժպիտով, վոր ավելի պերճախոս է լինում, քան մի հատոր գիրքը:

— Յեվ ո՞վ է սրտիդ ընտրյալը,—շարունակեց Ռուզան իր անողոք հարցաքննությունը նույն ժպիտով, բազմոցի վրա կռանալով, բարձրանալով, ընկերուհու աչքերին նայելով, ձեռը նրա ուսերին դիպցնելով, կարծես առջևը նստած էր յերեխա կամ աշխարհի բարդ գործերին անծանոթ մի աղջիկ:—Հը՛, милая, ո՞վ է,—ինչպես ռուսները կասեյին, սրտիդ ասպետը...

Աննան իսկույն չպատասխանեց. նորից շառագունեց ու աչքերը խոնարհեց:

— Լա՛վ, լա՛վ: Դու մի անհանգստանա: Ուզո՞ւմ ես յես քո տեղը պատասխանեմ...

Աննան վախեցած, հարցական նայեց Ռուզային:

Յեվ Ռուզան իսկույն վրա բերեց.

— Ինժենե՛րը...

Ռուզան այդ նկատել էր ջրվեժից դարձին. նա զգացել էր, վոր Միրյանն անտարբեր չի դեպի Աննան, և Աննան էլ, թվում էր, դեմ չէր նրա վերաբերմունքին: Նրանց առանձնացումը անտառում, նրանց թևանցուկ քայլվածքը, փախուկները և բովանդակալի նայվածքները... Այն ժամանակ Ռուզայի սրտում խանդի պես մի բան զարթնեց. նա իրեն այնքան էլ լավ չզգաց, ինչպես ամեն մի կին, յերբ տեսնում է, վոր այս կամ այն տղամարդու ուշադրության առարկան ինքը չի, այլ մի ուրիշը: Կանայք կան, վոր այդպիսի դեպքերում, խանդից կորցնում են հարաբերությունները ընկերուհիների հետ ու վատաբանում նրանց: Այդպես չէր Ռուզան: Ճիշտ է, նրան էլ դուր չեկավ այդ, բայց իրեն զսպեց և, չնայած իրեն էլ դուր էր գալիս ճարտարապետը, լռեց ու վորոշեց հետևել Աննայի ու Միրյանի միջև զարգացող հարաբերության. դա նրան նույնիսկ զվարճություն էր պատճառում:

— Душка человек,—կրկնեց Ռուզան իր մըշտական խոսքերը Միրյանի հասցեյին:—Հասա՛կը, ձևերը, կի՛րթ, նո՛ւրբ... Գովում եմ ճաշակդ....

Աննան մտածեց, թե չլինի՞ Ռուզան անտարբեր չէ դեպի ինժեները, ու շփոթված, խուսափուկ հայացքով նայեց ընկերուհուն: Բայց Ռուզան, Աննայի շփոթությունը, վարանքը տեսնելով՝ սիրտ տվեց նրան.

— Ինչ կա որ, милая, աշխարհով է, մենակ քեզանով չի: Ի՞նչ սիրտդ թելադրում է՝ ա՛յն էլ արա: Մարդ սրտի ուզածի պես պիտի ապրի, թե չէ կյանքը կդառնա տանջանք, բանտ, դժոխք, ի՞նչ անուն ուզում ես տուր: Փորձով գիտեմ, որ յեթե հակառակ ես գնում սրտիդ ուզածին—ինչքա՞ն գզվում ու ափսոսում ես հետո...

Այդ օրվանից Աննան սկսեց ավելի շուտ-շուտ ու ավելի համարձակ գնալ Ռոզայի մոտ՝ Միրյանին հանդիպելու—հյուրանոցի դռանը, աստիճանների վրա... Ինքն էլ զարմանում էր, թե ինչպես է հյուրանոցատյացությունը չքացել սրտից. հիմա այնքան էլ վանող չէր թվում այդ հյուրանոցը. այլ, ընդհակառակը, թվում էր դարձել է դյութական մի բան. ու նա վո՛չ միայն ցերեկով, յերեկոները նույնպես գնում էր այն կողմը... Քայլերն ակամա տանում եյին նրան այնտեղ... Սակայն, վորքան ձգտում էր դեպի Միրյանը, նույնքան էլ զսպում էր իրեն:

— Ո՞ւր, Աննա Անտոնովնա,—հարցնում է ճարտարապետը նրան հանդիպելիս:

— Ոչինչ, այնպես,—պատասխանում է Աննան,—ընկերուհուս... Ռոզայի մոտ...

Ու ցույց է տալիս, թե շտապում է, բայց նայում է, թե էլ ի՞նչ կասի Միրյանը:

Միրյանը հասկանում է ամեն ինչ, ու Աննայի այդ վարմունքը համարում է նախապաշարումների կամ գավառում ապրած լինելու հետևանք:

— Ինչպես յերևում է ձեր ընկերուհուն շատ եք սիրում, Աննա Անտոնովնա...

— Այո՛, ինչու չէ,—ժպտում է Աննան:

— Յեվ այդպես շուտ-շուտ գալիս եք նրան տես:

— Այո:

— Յես կուզեյի ձեր ընկերուհու տեղը լինել,—գլուխը խոնարհում է Միրյանը:

Աննան նորից ժպտում է անխոս ու թեթև քայլերով բարձրանում Ռոզայի մոտ: Այսենք այլևս կարիք չկա Ռոզայի մոտ գնալու... Բայց ի՞նչ հաճելի մարդ է այս Միրյանը: Յեվ ի՞նչպես էլ խոսում է...

Սակայն Միրյանն իզուր է ասում, թե Աննան մենակ Ռոզայի մոտ է գնում: Մի՞թե Աննան հաճախ չի հանդիպում և իրեն՝ Միրյանին, Ռոզայի ընկերակցությամբ կամ առանց նրան... Մի՞թե Աննան յերբեմն չի գնում նրա հետ զբոսանքի—քաղաքային այգին, կայարան կամ մի՞թե Ռոզայի հետ մի յերկու անգամ չի մտել գծագրանոց... Գալիս եյին ընկերուհիները գծագրիների սեղանների արանքով—մտնում իր աշխատանոցը—խոսում, ծիծաղում և ոդըկոլոնի հոտ թողնելով՝ հեռանում...

Միրյանը մի առժամանակ միտքը նրանց յետևից հաշիվներ էր տեսնում, հետո նկատում էր մեկ էլ, որ գործը թողած՝ Աննայի վրա յե մտածում... Միրյանը հանդիպել էր տարբեր կանանց, յեղել էր շատերի հետ, բայց վոչ-վոք նրան այնքան գրավիչ ու անառիկ չէր թվացել, ինչպես Աննան...

Յեվ ահա մի օր ուշ յերեկոյան, զբոսանքից դառնալիս՝ Միրյանն առաջարկեց Աննային գնալ իր սենյակը հանգստանալու:

Աննան հրաժարվեց:

— Շնորհակալ եմ, Հայկ Մինայիչ: Կարիք չկա: Արդեն ուշ է...

Ասում էր Աննան և միևնույն ժամանակ զգում, որ

անդիմադրելի մի բան մղում ե իրեն դեպի Միրյանը. թե՛ ցանկանում եր գնալ, և թե՛ կռվում եր ինքն իր դեմ: Վաղուց արդեն յերկու ներհակ մտքեր կռվում եյին նրա սրտում մինչ այն աստիճան, վոր իրեն զգում եր ուժաթափ: Այժմ ել այդ յերկընտրանքը թուլացնում եր նրա կամքը:

Յերկար խնդրանքից հետո՝ Միրյանն ասաց վերջապես.

— Գիտե՛ք ինչ, Աննա Անտոնովնա, դուք ինձ ղըրկել եք հանգստից: Չեմ կարողանում կարգին աշխատել: Այսոր, որինակ, շատ քիչ բան եմ արել: Ձեզ հիշեցի—շարունակել չկարողացա: Ապագա քաղաքի հատակագիծն ի՞նչ ե ձեզ մոտ,—շարունակեց Միրյանը, և անմիջապես ել նկատեց, վոր ճոռոմ դուրս յեկավ: Նա այդ չեր ուզում, այլ կամենում եր ընդգծել Աննայի գրավչությունը:—Իսկ յերբ ձեզ մոտ եմ լինում—հանգիստ եմ: Թվում ե նույնն ել դուք պիտի զգաք, Աննա... Այդպես չե՞...

Աննա՞... Աննայի դեմքը տաքացավ, զգաց, վոր կարմրում ե, կամքը թուլանում... ու ել չիմացավ ինչպես Միրյանն իր ձեռը բռնած, հետո գրեթե գրկած, տարավ իրեն վեր—իր սենյակը...

. . . .

Այնուհետև Աննան հյուրանոց գնում եր ավելի համարձակ, ավելի շուտ-շուտ: Առաջ, վոր գծագրանոցում յեղել եր մի յերկու անգամ, այն ել Ռոզայի հետ, հիմա գնում եր և մենակ... Գծագրանոցում աշխատում եյին չորս-հինգ գծագիրներ ու տեխնիկներ՝ իրար քով դըրած սեղանների վրա կռացած—բոլորն ել յերիտասարդ մարդիկ... Յերբեմն դրանց խանգարելով ու նրանց ուշադրությունը գրավելով՝ բարձրաձայն խոսում, ծիծաղում եյին Միրյանի հետ: Միրյանը՝ յերբեմն միայն յերեսի շապիկով՝ ցույց եր տալիս նրանց քաղաքի հին քարտեզը, վորը պետք ե բոլորովին փոխվեր, ու դրա հետ վոչ միայն քաղաքի ամբողջ տեսքը, այլև մանրամասները—փողոցներ, բուլվարներ, հրապարակներ: Պիտի ավելանային նոր քաղաքամասեր:

— Յեվ այս բոլորը պիտի ավարտեմ ոգոստոսի կեսերին, վոր կարողանամ մեկնել:

Ոգոստոսի կեսերի՛ն. մի՞թե այդքան շուտ... Աննան այդ չեր սպասում. նրան թվում եր, թե դեռ յերկար պիտի մնա:

— Բայց մի՞թե մինչև ոգոստոսի կեսը կավարտեք:

— Պիտի աշխատեմ: Ձեր ամուսինը շատ ե շտապեցնում: Նախահաշվի, վարկի և այլ խնդիրներ կան, ասում ե...

Խոսում, ծիծաղում եյին կանայք և ոդեկոլոնի սուր բուրմունք թողնելով՝ դուրս գալիս: Միրյանը դարձյալ, միաժամանակ միտքը նրանց յետևից, հաշիվներ եր տեսնում, կոմբինացիաներ անում. վորոշում եր թաղերը և քաղաքի ընդարձակվելու հնարավորությունները:

Վերջերս նրա համար խնդիր եր, թե անտառից մի փոքր մաս չգցի՞ արդյոք քաղաքի հատակագծի մեջ, վորպես հանգստի տների թաղ—քաղաքի փոշուց, աղմուկից հեռու, բայց նրա հետ կապված տրամվայի գծով: Այս խնդիրը կոմունալ տնտեսության վարիչի իդեան եր: Տիգրանն առհասարակ շուտ-շուտ գալիս եր գծագրանոց—աշխատանքների ընթացքը տեսնելու կամ նորանոր դիտողություններ անելու: Յեվ Միրյանը, այդ հանգամանքից ոգտվելով, վորոշ խնդիրներ պարզում

եր նրա հետ՝ հենց իր աշխատանոցում: Իսկ Տիգրանը գալիս էր միշտ հետը վորևէ խղճա բերելով. «Գիտեք, ընկեր Միրյան, մենք պիտի նկատի ունենանք մթերակենտրոն, վորտեղից մթերքը պիտի բաժանվի տները»... Կամ՝ «Լավ չի լինի, յեթե պոստը չլինենք նույնպես կենտրոնում» և այլն, և այլն:

Միրյանը լսում էր և իր դիտողությունները անում: Իր հերթին՝ Տիգրանն էլ իր ցանկությունն ու կարծիքն էր հայտնում, մինչև համաձայնության եյին գալիս: Հաճախ Տիգրանին այնպես էր թվում, թե քաղաքի «բախտը», ապագան վճռվելու յե այդ գծագրանոցում, բավական է մի սխալ, ավելորդ մի չտրիխ—կարող է «ճակատագրական» նշանակություն ունենալ, ու աշխատում էր վորքան կարելի յե շուտ-շուտ լինել այնտեղ՝ խորհուրդներ տալ, բացատրություններ լսել... Յեվ նա այդ անում էր մենակ կամ յերբեմն քաղխորհրդի նախագահի հետ, վոր միշտ զգուշացնում էր Տիգրանին.

— Տե՛ս, եդ ինժեներն եդտեղ Փինտի-մինտի բաներ չանի...

Մի անգամ, յերբ Աննան մենակ, առանց Ռոզայի, գծագրանոցումն էր՝ ներս մտավ Տիգրանը, ինչպես միշտ սև պորտֆելը ձեռին: Կնոջը տեսնելով՝ ուրախ զարմանքով բացականչեց.

— Դու էլ այստե՞ղ ես, Աննա...

Աննայի՛ն թվաց սիրտը սեղմվեց. զգաց իրեն հանցանքի մեջ բռնված, բայց կանացի յոթերորդ զգայարանքը նրան ոգնության հասավ:

— Գնում եյի Ռոզայի մոտ, Հայկ Մինասիչը պատահեց... հետաքրքրեց պլանի աշխատանքներով,—ա-

սաց Աննան, զգալով վոր կարմրում է, վոր Տիգրանը հիմա կնկատի իր հուզումն ու այլայլումը:

Տիգրանը նույնպես մի ոտարոտի բան զգաց, վորը անցեց, սակայն, մի վայրկյան, և նա, առիթից ոգտվելով, վոր կինն այստեղ է, ցույց տվեց հատակագծի փորձնական նախագիծը:

— Մի տես վորքան պիտի տարածվի քաղաքը, հասարյա մինչև անտառ... Տե՛ս ի՛նչ ընդարձակ փողոցներ ենք ունենալու... Սա քաղաքի կենտրոնն է, սա հրապարակը, սա յերկաթուղու նոր կայարանը... Այստեղ, կարծեմ, գործարան է լինելու, այնպես չէ, ընկեր Միրյան... Իսկ այստեղ...

Աննան ուշադիր զարմանքով հետևում էր Տիգրանի մատի ուղղություններին:

Կնոջ ուշադրությունը վոգևորեց Տիգրանին, և նա անցավ մանրամասների, վոր քանի՛ անգամ լսել էր Աննան:

— Ընկեր Միրյանը յեթե ուզենա, յերևի, մի ամսից կվերջացնի, չէ՞:

— Դա իմ ցանկությունն է,—ասում է Միրյանը մի տեսակ ցրված:—Վորքան շուտ, այնքան լավ թե ձեզ համար, թե՛ ինձ համար...

— Այո, ընկեր Միրյան, շո՛ւտ, շո՛ւտ, վորպեսզի յեկող տարվանից սկսենք նոր հատակագծով:

— Ապահով յեղեք. յեկող տարվանից կարող եք ձեր սպիտակ քաղաքը սկսել ձեր ուզածի պես,—ասում է ճարտարապետը թեթև հանաքով:

Տիգրանը հասկացավ հանաքը:

— Այո, այո, մեծ մասամբ սպիտակ,—վրա բերեց նա,—սպիտակ տներ, և վո՛չ մի սև կամ գորշ: Հերիք է:

— Բայց մենք էլի կմնանք, իհարկե, մեր խարխուլ տանը,—կատակեց Աննան, ներքին մի ճիգով։

Նա շարունակում էր դեռ շփոթված մնալ, ու շփոթությունը ծածկելու համար, խոսում էր և ուրախ տոնով։ Վերջին խոսքը նա ասաց ժպտով, բայց Տիգրանն ընդունեց այն լուրջ։

— Իզուր ես այդպես կարծում. նույն հերթը մեզ էլ կգա... Հա, լավ հիշեցի։ Ձեր հեռագրի պատասխանն ստացա՞ք, ընկեր Միրյան։

— Այո, ինձ թույլատրում են ևս մի ամիս, հարգելով և ձեր միջնորդությունը։

— Այդ լավ է։ Շատ ուրախ եմ...

Այստեղ Տիգրանը նկատեց, վոր Միրյանն իրեն պատասխանում է ցրված. սովորականի պես աշխույժ չէ և նայվածքի մեջ կա ինչ-վոր մեղավոր թե խոնարհ բան։

— Ուրեմն, ձեր հաշվով մի քանի շաբթից հատակագծի նախագիծը պատրաստ կլինի, չէ՞....

— Յես կարծում եմ, իհարկե,—նորից ցրված, բայց աշխույժի ճիգով պատասխանեց Միրյանը։

— Հա, աշխատե՛նք, աշխատե՛նք,—ասավ Տիգրանը, ձեռը խփելով Միրյանի ուսին, վորով ուզում էր խրախուսել թե՛ ճարտարապետին թե՛ իրեն։—Այնպես լինի, ընկեր Միրյան, ժամանակից յետ չմնանք և պատվով դուրս գանք։

— Հանգիստ յեղեք...

Վերադարձին Տիգրանը Աննային կառքով բերեց տուն, ճամբին ցույց տալով կառուցվող և նորավարտ տները։

— Սա նոր տեխնիկումի շենքն է։ Վեց հարյուր աշակերտի համար։ Այս յերեք հարկանի բնակելի տուն

է հիսուն սենյակից արևոտ, լուսավոր, բոլոր հարմարություններով։

Աննան լսում էր նրան անուշադիր, անտարբեր։

— Տունը գեղեցիկ է դուրս յեկել, և կարելի յե ասել՝ հատակագծից լավ։ Մնում է մի քիչ աշխատանք։ Իսկ ծախսը, գիտե՞ս, նախահաշվից պակաս է նըստել...

— Ե՛, ուրիշների աչքը լուս,—ասավ Աննան անտարբեր, մի բան ասած լինելու համար։

— Ի՞նչպես թե,—զարմացավ Տիգրանը կնոջ անտարբեր յեղանակից։—Մեզ համար վոչի՞նչ...

— Ցերեկ մեր յերեխաները միայն կապրեն այդ նոր տներում,—շարունակեց Աննան նույն անտարբերությամբ։

— Յե՛վ մենք, Աննա, և՛ մենք։ Այդքան հոռետես մի լինի,—դրկեց Տիգրանն Աննայի ուսերը քնքշանքով։ —Շուտո՛վ, շուտո՛վ...

Այդ մտերմական գրկանքը, քնքշանքը հուզեց Աննային. Նրան թվաց ինքը գողություն է անում մարդուց, յերեխաներից ծածուկ։ Յեղավ մի րոպե՝ մտածեց չհայտնե՞լ արդյոք Տիգրանին ամեն ինչ, չխոստովանել... Վայե՞լ բան է արդյոք թագցնելը։ Լավ չե՞ պարզ ասել ամենը, ինչ կա սրտում... Տիգրանը կոմունիստ է—կհասկանա...Բայց այդ թվաց իր ուժերից վեր, գերմարդկային մի բան...

Սակայն վաղ թե ուշ—բոլորը պիտի բացվի—ավելի լավ չէ ասել հիմա, կառքի մեջ ու ներողություն խնդրել... Աննային թվում էր Տիգրանը հասկացել է ամեն ինչ, բայց ձևանում է... Անկարելի բան է, վոր հասկացած չլինի, կամ յեթե չի հասկացել—արդեն կասկածում է, յերևի...

Չե, ավելի լավ է գնան տուն, այն ժամանակ, բոլորը կասի...

Բայց Տիգրանը տուն չմտավ: Նա կնոջը, ձեռից բռնած, իջեցրեց կառքից ու ինքը շարունակեց ճամբան դեպի գրասենյակ, ուրախանալով, վոր Աննան ևս սկսել է հետաքրքրվել քաղաքի գործերով...

IX

Այո, ժամանակը հարաբերական հասկացողություն է: Պարապ մարդու համար նա ծանր բեռ է, աշխատողի համար—գործ, սիրահարի համար—վայելք... Յերկու ամիսը թե Տիգրանի, թե Միրյանի համար անցան համարյա աննկատելի և մի որ էլ Միրյանը հայտարարեց.

— Կարող եք շնորհավորել ինձ, Տիգրան Պետրովիչ... Նախագիծը պատրաստ է:

Տիգրանն, ըստ սովորության, ուրախությունից խոսքը չգտնելով, ձեռը խփեց նրա մեջքին:

— Մալադե՛ց, ընկեր Միրյան, մալադե՛ց... Դե վոր այդպես է՝ բերեք ձեզ մի լավ քննադատենք քաղխորհրդում,—կատակեց նա:—Համաձա՞յն եք:

— Խնդրե՛մ:

— Խիստ կլինենք, բայց չվախենաք:

— Խնդրեմ, խնդրեմ...

Յեվ յերկու որ հետո՝ յերեկոյան, յերբ այդ քաղաքում հազվադեպ տոթից մարդ չեր ուզում տանը նստել, յերբ ժողովուրդը խմբերով զբոսնում եր փողոցներում և փողոցները դժժում ու մրմռում եյին նրանց ձայներից, քաղխորհրդի նիստերի դահլիճը լուսավորված եր առատորեն. վառվում եյին վոչ միայն առաստաղից կախված զույգ ջահերը, այլև պատերի շուջանաձև փունջ լամպերը: Կաթնագույն լույսին միախառնվել է ծխախոտի ծուխը. թվում է բաց լուսամուտ-

ներից մշուշ է յեկել—ցրել սենյակը, և լույսերն աղոտացրել... Դահլիճը լեցուն է.—այստեղ են քաղխորհրդի նախագահության ամբողջ կազմը և գրեթե բոլոր անդամները, և՛ նրանք, վոր մասնակցում են բոլոր նիստերին, և՛ նրանք, ովքեր գալիս են միայն արտակարգ դեպքերում. Ներկա յեն և շատ աշխատակիցներ, դրանց թվում և դիվանապետ Դավիթը՝ ուսի մեկը բարձր, մյուսը ցածր. նստած տեղն էլ այդ մարդն այնպես է, կարծես ձախ ձեռին յերեք փթանոց է բռնել: Այստեղ է և քաղխորհրդի ծեր ինժեներ Սամսոն Սիմոնիչը՝ իր կրկնակի ակնոցով (մեկը քթին, մյուսը չեսուչայի կրծքին): Այստեղ են բջիջի քարտուղար Բաբեղամը, տեղկոմ Գեղամը և հետաքրքիր քաղաքացիներ: Այնքան մարդ կա, վոր տեղ չլինելու պատճառով, մի քանի հոգի մնացել են պատերի տակ՝ կանգնած, իսկ վոմանք աթոռներին նստել են յերկ-յերկու, իրար գրկած: Վերը՝ ահագին, գյուղացու ամբարի չափ գրասեղանի առաջ նստել է ինքը՝ նախագահ ընկ. Մարութը՝ ամառվա բլուզով՝ օձիքի կոճակները բաց. սիրում է նա այսպես թեթև հագնվել ու պարզ, մանավանդ ամառը. բացված օձիքը յերևան է հանել նրա ծառի բնի պես հիմնավոր վիզն ու մազոտ կրծքի մի մասը, և նա իր այդ հաստ վզով, ածիլած գլխով ու դեմքով ավելի յե հիշեցնում ռուս պոետ Դեմյան Բեդնուն: Վանդակավոր թաշկինակով շուտ-շուտ սրբում է վիզն ու ճակատը,—ներսը տոթ է և ընկեր Մարութն առհասարակ չի դիմանում շոգին, մանավանդ յերբ դրան խառնվում է ծխախոտի ծուխը... Նախագահի գրասեղանից քիչ հեռու նստել է Տիգրանը՝ նույնպես բլուզ հագած, դեմքին մտահոգ մի ժպիտ, վոր ունենում են հաջողության ու գովքի սպասող մարդիկ: Ժողովը հրավիրվել է նրա

առաջարկով, վոր քաղխորհուրդը ծանոթանա հատակագծին՝ ու իր դիտողություններն անի:

Յեվ Միրյանն այժմ տալիս է իր բացատրությունները. մի կարճ քանոն ձեռին նա՝ մերթ պատին փակցրած հատակագծին, մերթ ժողովականներին դառնալով՝ բացատրում է, թե ինչ սկզբունքներով է առաջնորդվել է նախագիծը կազմելիս: Նա էլ պիջակը հանել գցել է աթոռի թիկունքին, ու մենակ յերեսի շապիկով է. հեռվից նայողն այնպես կարող է կարծել, թե դասախոսություն է կարդում մարմնամարզության մասին: Մտիրած դեմքը կարմրել է, ճակատին յերևում են քրտինքի կաթիլներ: Շոգից թե մեծ բազմության առաջ խոսելու անվարժությունից՝ նրա շուրթերը չորանում են, և այդ է պատճառը, վոր հաճախ ջուր է խմում փոքրիկ կումերով: Խոսում է դանդաղ, աշխատելով լինել պարզ ու հասկանալի: Յեվ թե նրա ասածից, թե պատին փակցրած հատակագծից պարզվում է, վոր քաղաքի տարածությունն ընդարձակվում է կրկնակի և ավելի չափով. փողոցները փոխվում են և, լայնանալով, ծառապատվում: Նոր փողոցներ գցելու և նոր տներ չլինելու համար—քանդվում են վոչ միայն հին տների շարքեր, այլև ամբողջ թաղամասեր: Նոր քաղաքը բաժանվում է մի քանի գոտիների, կամ, ինչպես Միրյանն էր ասում, «զոնաների»—յերկաթուղային, արտադրական ու կոմունալ ձեռնարկությունների, բնակելի շենքերի: Այս վերջին գոտու մեջ, Միրյանի ասելով, պիտի լինեյին հասարակական շենքեր—ակումբներ, սեղանատներ, դիսպանսերներ, թատրոն, քաղխորհուրդ... Հետո գալիս եյին բնակելի տները, հրապարակներն՝ իրենց շատրվաններով:

— Եդ հիանալի յե,—բացականչեց վերջում նստող-

ներից մեկը, մի այնպիսի ուրախ, հյութալի ձայնով, վոր շատերը յետ նայեցին ժպիտով։

Քիչ հետո նույն մարդն ավելի վոգևորվեց, յերբ Միրյանը հայտնեց, թե հարկավոր է համարել բնակելի շենքերի և կոմունալ ձեռնարկությունների միջև կանաչի զոնա—ծառեր, ծաղկանոցներ, սավերներ... Դա ողջի մաքրության համար... Միևնույն ժամանակ նա աշխատել է քաղաքը լինի պարզ, առանց խճճված փողոցների. գերադասել է ուղիղ գծերը, այսինքն ուղիղ փողոցները, վորովհետև դրանք տրանսպորտի և յերթևեկության համար ամենակարճն են, հետևաբար կտան մեծ տնտեսում...

— Ճիշտ է,—բացականչում է նորից նույն մարդը։

— Յես էլ ճիշտ համարելով՝ այդպես եմ արել,—պատասխանում է Միրյանը, դառնալով բացականչողին, և անցնում այնուհետև կոմունա—տներին...

Ո՛, այդ Միրյանը. դիտմամբ տեխնիկական տերմիններ չի գործածում, վոր իրեն ավելի լավ հասկանան, և ասածը մատչելի լինի...

Յեվ դահլիճը նրան լսում է լարված, հետաքրքրությամբ, յերբեմն զարմանալով, յերբեմն տարակուսած կամ հիացած, բայց մեծ մասամբ քննադատաբար ու զուսպ, զգուշանալով ծափերից ու բացականչերից, վոր վոչինչ չվրիպի ուշադրությունից... Յեվ Միրյանը շարունակում է բացատրությունները ձեռների ու քանոնի ոգնությամբ։

Վերջացնում է նրանով, թե հատակագիծն, անշուշտ, ունի և կունենա բացեր, սխալներ, նկատի ունենալով կարճ ժամանակամիջոցը, և մանավանդ այն, վոր նա փորձել է մշակել քաղաքի նոր տիպ։ Սակայն

նա վստահ է, վոր այս եսքիզային նախագծով էլ քաղաքը կդառնա գեղեցիկ քաղաք...

Ասում է նա ընդհանուր մի հայացք գցելով դահլիճին և նստում նախագահության սեղանի մոտ։

Տիգրանն ուրախ, բայց վոքր ինչ մտահոգ ժպտով, հերթով նայում է քաղխորհրդի անդամներին, նախագահին, սպասելով ինչ կասեն։ Բայց դեռ վոչինչ չլսած, նրանց դեմքից ու հայացքից նկատում է, վոր դժգոհ չեն։

— Ինչպե՞ս է,—չի համբերում նա ու թեքվում է կողքին նստած նախագահության անդամ բանվոր Գասպարին, վորը հայտնի յեր, ի միջի այլոց, նրանով, վոր սիրում եր ամեն բան քննադատել և մինչև կատակածով վերաբերվել այն բոլոր ծրագիրներին, վոր ներկայացնում եյին ինժեներներն ու տեխնիկները, և դրա համար քաղխորհրդի շրջանում նրան անվանում են Թերահավատ Գասպար

— Վերջն ա գովելի,—ասաց նա։—Բանը պլանը չի, չինելն ա...

Տիգրանն ուզում է հարցնել, թե ինչ է ուզում ասել Գասպարը դրանով, բայց նախագահ ընկեր Մարութը հաստ միջամատով թխթխկացնում է սեղանը։

— Ո՞վ հարցեր ունի։ Նա՛խ հարցեր, հետո բանություն։

Առաջինը ձեռ բարձրացրեց Գասպարը։

— Եդ բոլորը լավ, ընկերներ,—սկսեց նա փոքր ինչ խզված ձայնով։—Մենք ուզում ենք մեր քաղաքը մեծացնենք, դարձնենք սոցիալիստական. շա՛տ լավ... Բայց չե՞ վոր եդ բոլորը գլուխ բերելու համար, փող է հարկավոր, իսկ մեր քաղաքն ունի՞ եդ հնարավորությունը։ Նապոլեոնն ասել է՝ «Պատերազմի համար հար-

կամո՛ր է՝ առաջինը փող, յերկրորդը փող, յերրորդը փող...»: Յեթե, ընկերներ, սպանելու, ջարդելու համար հարկավոր է շատ փող, հապա քաղաք շինելու համար վորքա՜ն պիտի հարկավորվի, հարցնում եմ...

— Գասպար, դու բոլ ելույթյան ես խոսում,—ընդհատում է նախագահը, ձեռը բարձրացնելով:

— Չե, ես ենպես. սա հլա փողի մասին: Հմի յերկու հարց. ընկեր Ճարտարապետն ասում է, թե նոր պլանը շատ հին տներ պիտի քանդի: Հարցնում եմ—ենքա՛ն, ինչ քանդել ա ընկեր Տիգրանը—հերիք չի՞: Առանց են էլ քաղաքացիները դժգոհ են:

— Ինչի՞ց,—էլի չի համբերում Տիգրանը:

— Վոր քանդում ես մարդկանց տները:

Տիգրանը ժպտաց:

— Չքանդենք, չենք կարող շինել:

— Ինչո՞ւ չի կարելի: Կարելի՛ յե:

— Դու ուզում ես կարկատաններով ապրե՞նք: Բայց մենք չենք կամենում հին տկի մեջ նոր գինի լցնել:

— Դե ուրեմն քանդիր և քաղաքի փողերը վատնիր իզուր:

— Ի՞՛նչ վատնում,—չհամբերեց Տիգրանը:

— Եդ դու լավ գիտես: Ամբողջ քաղաքը գիտի, վոր քու հաճույքի համար քանդում ես, քու ուզածի պլան ես քաշում ու մեր ես աղքատ քաղաքին ահագին վնաս հասցնում: Ասել եմ, էլի կրկնում եմ, վոր մենք առանց հատակագծի յոլա կերթանք:

— Ճիշտ է,—բացականչեց մեկը միջին շարքերից: Նրան ձայնակցեց յերկրորդը, յերրորդը, և Գասպարն այդ ձայներից ավելի վոգի առավ:

— Այո, մենք յոլա կերթանք առանց հատակագծի:

Կարիք չկա նոր ծախսերի, նոր տնաքանդության, նոր վատնումների, թե ինչ է—նո՛ր, նոր պլանով էք շինում: Յես ասում եմ—դա վնասարարություն է:

— Ճի՛շտ է,—բացականչեցին էլի մի յերկու հոգի այնպես չարախինդ, կարծես Գասպարը նրանց սրտից եր ջուր խմում:—Ճի՛շտ է, ճիշտ...

— Սխալ է... Զրպարտություն...

— Սը՛սս... Լռեցեք,—լսվեց տարբեր տեղերից:

Մի վայրկյանում հանդիսատ դահլիճն ալեկոծվեց. առաջին շարքերը գլուխները շրջեցին, յետին շարքերը կանգնեցին՝ առաջ նայելու, նախագահ ընկեր Մարութը, տեղից բարձրանալով, զանգահարեց, իսկ Տիգրանն, առանց ձայն խնդրելու յելավ հուզված, գունատված:

— Յես պահանջում եմ, վոր ընկեր Գասպարն ապացուցի իմ կատարած վատնումները և վնասարարությունը: Փաստերով...

— Յես իմ փաստերը բերի, և...

Վեճն սպառնում էր ընդարձակվել, բայց նախագահը խոսքը տվեց քաղաքի ծեր ինժեներին: Սամսոն Սիմոնիչը ծոցագրպանի բլոկ-նոտում նշանակել էր ինչ-վոր, և յերբ սկսեց՝ կրծքին կախած պենսնեն զգուշությամբ վերցրեց-դրեց մյուս պենսնեյի վրայից ու խոսեց շուտ-շուտ բլոկ-նոտին նայելով: Նա ընդհանրապես գոհ է նախագծից, կարծում է, վոր յերկու ամսվա ընթացքում ավելին չէր կարելի անել, ինչ արել է «իմ հարգելի կոլլեգա» Միրյանը: Նրա դիտողությունները վերաբերում էին լայն փողոցներին, վոր շատ տարածություն են խլում քաղաքից, և հրապարակներին, վորոնք շատ են 40,000 բնակիչ ունեցող քաղաքի

համար: Նա կարծում է բավական են յերեք փոքր և մի մեծ հրապարակ:

— Այսքանս,— ասաց նա, նստելով և նույն խնամքով ու զգուշությամբ, ինչպես վերցրել էր, յերկրորդ ակնոցը կախեց պիջակի ձախ կրծքից, իբրև մի թանգագին շքանշան, իսկ բլոկ-նոտը հանդարտ դրեց ծոցագրպանը:

Նրանից հետո խոսեց բժիշկ քարտուղար Բաբեղամը: Նախ հանդիմանեց Գասպարին ու համախոհներին, վոր չեն հասկանում քաղաքի հասունացած պահանջները և մնում են պապենական հայացքների կողմնակից: Դառնալով Տիգրանին՝ հիշեց, վոր ճիշտ է, նա մի քանի տուն քանդել է ժամանակից շուտ, կենվորներին ուշ բավարարելով, բայց դա չի նշանակում, թե առհասարակ քանդելը—նոր կառուցումների համար—վնասարարություն է: Ինչ վերաբերում է նոր հատակագծին—դա ավելի քան կարևոր է. սոցիալիստական քաղաքը—հրամայական պահանջ է, և առաջինը քաղխորհուրդը պիտի նպաստի նրա իրագործումին, հետևաբար և կոմունալ տնտեսության վարիչին: (Այստեղ ճառախոսն ամբողջ իրանով դարձավ դեպի Տիգրանը):

— Սակայն հատակագծում սոցիալիստական կենցաղի, ասենք, կազմակերպումը, ինձ համար պարզ չեղավ: Այստեղ կարծես չկա այն բոլորը, ինչ, թվում է, հարկավոր է...

Այնուհետև խոսեցին հինգ հոգի յել, դրանց թվում և տեղկոմ Գեղամը: Բոլորն էլ նախագիծը հավանում էին, բայց կանգ էին առնում նյութական հնարավորությունների վրա, փողոցների վրա...Նրանք էլ ասին համարյա այն, ինչ ասաց Սամսոն Սիմոնիչը: Ինչ վերաբերում է ամբողջին՝ գոհ էին, վոր ընկեր Միր-

յանը իրենց համար «գծել» է մի հիմնական հատակագիծ: Խոսողներից մի յերկուսը գիտեն ավելին, թե քննադատել չեն ուզում առանձնապես, վորովհետև նախ քիչ են հասկանում, յերկրորդ, վոր իրենց ընդունելով կամ քննադատությամբ խնդիրը չի ապավելու, քանի վոր կան վերադաս մարմիններ: Իսկ Գասպարն ելի իրենն էր պնդում.

— Մարութ,— ասում էր նա, դիմելով նախագահին,— եդ հատակագիծը մեր ուժերից վեր ա. փող չունենք է՛, փո՛ղ...

— Ծախսից մի վախի,— մի տարում չենք շինելու,— հանգստացրեց Տիգրանը:

— Հասկանում եմ, շատ լավ եմ հասկանում,— շուռ յեկավ Գասպարը դեպի Տիգրանը:— Կարծո՞ւմ ես այդքան խելք չունեմ: Ունե՛մ: Բայց ասում եմ, վոր մեր վոտը մեր յորղանի չափով մեկնենք: Ա՛յ ինչ եմ ասում:

— Ելի՞ ոպորտունիզմդ բռնեց, Գասպար,— գլուխը թեքեց նախագահ ընկեր Մարութը:— Ի՞նչ է նշանակում յորղանի չափ: Մենք եստեղ սոցիալիզմի մասին ենք խոսում, ուզում ենք սոցիալիստական քաղաք շինենք—դու յորղանի պատմություն ես անում... Բոլշևիկ մարդ ես ու եղպես խոսքեր ես ասում: Դու գիտես, վոր մենք վո՛չ մի դժվարության առաջ կանգնել չգիտենք, միայն թե մեր շարքերում ոպորտունիստներ և աշխատակիցների մեջ սիմուլյանտներ, սաբոտաժնիկներ չլինեն:

Այստեղ նախագահը չկարողացավ իրեն զսպել և հիշեց, իբրև «ի միջի այլոց», թե ինչպես աշխատակիցները, մեկ էլ տեսար յեկան, թե՝ «ընկեր Մարութ, արձակուրդ տվեք գնամ սանատորիա, թոքերս թույլ

են. մյուսը՝ թե կողքս. մի ուրիշը—ջղային եմ. չորրորդը—ռեմատիզմ ունեմ: Էսպես, որ ամառը բացվում ա՝ բոլորի ցավերն էլ բացվում են»...

Նախագահը աշխատակիցների կեսի մասին այն կարծիքն ուներ, թե մտածում են միայն արձակուրդների և սանատորիաների մասին: Հենց որ ամառը մոտենում էր—նա իր մոտ գնացող ամեն մի աշխատակցի հարցնում էր կես-հումոր, կես-լուրջ. «Հը, թոքերի թուլությո՞ւնն է, սրտի լայնացո՞ւմ, թե մալարիա»...

— Հիմի նորից գամ Գասպարին: Դու ինքդ ախր պարտիզան ես եղել քաղաքացիական կռիվներում. լավ գիտես, որ կազմակերպված ուժը սարեր է վերցնում: Էսենց էլ էդպես: Թե՞ չես ուզում մեր քաղաքը սոցիալիստական հիմքով շինվի...

— Յես եդ չեմ ասում,—վեր թռավ Գասպարը:

— Դե որ չես ասում, վիճաբանությունը փակենք ու շնորհակալություն հայտնենք ընկեր Միրյանին իր լավ աշխատանքի համար:

— Այ, Մարութ դու էլ ինքնաքննադատությունը ճնշո՛ւմ ես: Չե՛ս թողնում արտահայտվենք,—դժգոհեց Գասպարը:

Մարութը զարմացավ:

— Յե՞ս եմ ճնշում: Դե որ եդպես ա—արտահայտվի, ախպեր: Խոսքը պատկանում ա քեզ:

— Ի՞նչ արտահայտվեմ. բոլորն ասի ելի,—ձեռք թափ տվեց Գասպարը:

Ծիծաղեցին:

Երբ ծիծաղը դադարեց—նախագահն իր կողմից հայտնեց, թե ինքն էս գոհ է հատակագծից, այսինքն հատակագծի նախագծից, մանավանդ, որ քաղաքը ծառուղով միանում է անտառին, ուր շինվում են հան-

գստի տներ, որոնց մեջ, վերջապես, լավ կհանգստանան աշխատակիցները «սրտի լայնացումից, թոքերի թուլությունից ու մալարիայից»: Բայց վերջում կասկած հայտնեց, թե կարող է պատահել վերադաս մարմինները որոշ բաներ չանկալի ու նպատակահարմար գտնեն փոփոխել, այդ դեպքում ընկեր Միրյանն, իհարկե, իրենց մենակ չի թողնի:

— Իհարկե, իհարկե,—գլխով է անում Միրյանը ժպտալով, ուրախ, որ իր հատակագծով ու բացատրություններով գոհացրեց քաղխորհրդին: Սակայն նրա սրտում մի փոքր կասկած կար կենտրոնական հիմնարկների նկատմամբ: Հետաքրքրական է ի՛նչ կասեն—կհաստատե՞ն ամբողջությամբ, կմերժե՞ն, թե կառաջարկեն փոփոխություններ: Համենայն դեպս նա վստահ էր, որ իր գործը տեխնիկական գիտության հակառակ աշխատանք չի, որ ինքը պատվերը կատարել է բարեխղճորեն:

Իսկ Տիգրանն ավելի քան ուրախ էր. ուրախ նրա համար, որ նախագիծ վերջացել էր ժամանակին, յերկրորդ նրա համար, որ այն հավանության արժանացավ: Յեվ նա գիտմամբ չխոսեց այդ յերեկո, որ չկարծեն, թե պաշտպանում է ճարտարապետին: Նա տուն յեկավ բարձր տրամադրությամբ և դեռ շեմքից Աննային հայտնեց, թե ինչ լավ ընդունելություն գտավ Միրյանի հատակագիծը:

— Ճի՛շտ,—բացականչեց Աննան, և նրա դեմքը զարմանալի պայծառացավ:—Այդ լա՛վ է:

Բայց իսկույն էլ անդրադարձավ իր ուրախությանը. չէ՞ որ դրանով կարող է մատնել իրեն... Բայց Տիգրանը նրա ուրախությունը բացատրեց նրանով, որ-

ձյալ, որ Աննան սկսել է հետաքրքրվել քաղաքի գործերով, իր աշխատանքով:

— Հետո՞,— հարցրեց Աննան, այս անգամ անտարբեր և փոխված ձայնով: Նա ուզում էր իմանալ, թե ուրեմն Միրյանի գործը դրանով վերջացավ և նա պիտի գնա՞:

— Հետո էլ այն, որ վաղն ուղարկում եմ Յերեվան քննեն-հաստատեն: Յեվ դրանից հետո արդեն մեր շինարարությունը կկատարվի պլանով, կանոնավոր: Կիմանանք, որ ինչ անում ենք հիմնական է, հաստատուն...

Մինչ Տիգրանը խոսում էր հատակագծի առավելությունների մասին, Աննան մտածում էր, որ Միրյանը կարող է ուրեմն շուտով մեկնել: Մեկնե՜լ... Աննան գիտեր, որ նա, գործը վերջացնելուց հետո, իհարկե, պիտի մեկնի. բայց այնպես էր կարծում, թե դա շուտ չի լինի. թվում էր, թե դեռ ուղղումներ կառաջարկեն, և նա կմնա դրանք կատարելու... Մի կողմից նա ուրախ յեղավ, անգիտակցաբար ուրախ, որ Միրյանը հաջողություն է ունեցել, մյուս կողմից— տխրեց. այն հանգամանքը, որ հատակագիծն ընդունել են և նա կարող է շուտով մեկնել— միանգամից պարզեց նրա առաջ իր դրությունը... Ուրեմն Միրյանը կարող է մեկնել, իսկ ինքը... Ի՞նչ պիտի անի ինքը. կարո՞ղ է մնալ այս քաղաքում, Տիգրանի մոտ... Յեվ ինչպես միշտ այս անգամ էլ մտքում ակամա համեմատում էր Տիգրանին Միրյանի հետ և զգում էր, որ սիրտը հակվում է ելի դեպի Միրյանը, ու, ինչպես միշտ, այս անգամ էլ հարց էր տալիս ինքն իրեն, թե նրա մեջ ինչն է գրավում իրեն. ա՛յն, որ հետաքրքրական խոսո՞ղ է, գրավիչ պատմո՞ղ, ավելի կիրթ ձևերի տեր— վարոչել

չէր կարողանում. զգում էր միայն, որ խենթությունն է՝ յերկու յերեխայի մայր լինելով՝ տարվել ոտար մարդով, որն այսօր այստեղ է, վաղը չկա... և այդ խենթությունը կարող է սարսափելի հետևանքներ ունենալ և՛ իրեն համար, և՛ դուցե շատերի համար... «Շատեր» ասելով՝ նա հիշում էր յերեխաներին ու ամուսնուն, և Միրյանին: «Լավ, ի՞նչն է, ի՞նչը, որ ձգում-քաշում է ինձ դեպի այդ մարդը»,— կրկնում էր Աննան հաճախ կամ յերբեմն գլուխը հայելու առաջ հարդարելիս ասում. «խենթացել եմ, խենթացել»,... «Բայց ի՞նչն է խենթացրել ինձ, ի՞նչը»... «Կի՛րքը»,— ասում էր մի ներքին ձայն: «Մի՞թե կիրքը»,— հարց էր տալիս նա ինքն իրեն:— Իսկ Միրյանը, որ գրավվել է ինձնով մի՞թե նույնպես կիրք է»... «Տղամարդիկ միայն կիրք են»,— պատասխանում էր ու ելի հարցնում.— «Իսկ կանայք մի՞թե նույնպես այդպես են. մի՞թե իդեալական սեր չկա»... Աննան հիշում էր կարդացած վեպերը— այնքա՜ն իդեալական, մաքուր սերեր... Աղջիկ ժամանակ յերազել էր այդպիսի սեր— ասպետական ու մաքուր... Բայց յերբեք չէր կարծում, թե ամուսնացած ժամանակ այսպիսի բան կպատահի իրեն: Նրան միշտ թվացել էր, թե ամուսնության հետ անցնում է և սերը՝ այսինքն՝ ուրիշին սիրահարվելու ցանկությունն ու հնարավորությունը: Յերբ վեպերում կարդում էր, թե ինչպես ամուսնացած կինը սիրում է մի ուրիշի— դա համարում էր հեղինակների ֆանտազիայի արդյունք, հնարովի բան, գրածը գրավիչ դարձնելու միջոց: Իսկ յերբ լսում էր, թե կյանքում էլ նման բաներ են լինում— դա վերագրում էր պատահականության, համարում էր բացառություն,— յերբեմն և հիմարություն կամ կնոջ կողմից վրեժխնդրություն դեպի ամուսինը, որ դուցե կո–

պետք է լինել, դավաճան ու ու անսիրտ: Այժմ, երբ նման բան իրեն էր պատահել—նա խճճվում էր մտքերի ցանցում, ու բացատրություն չէր գտնում իր դրության համար, իր բռնկած սիրո համար: Թեև ութ տարվա ամուսնացած, երկու երեխայի մայր, բայց նրան թվում էր թե ինքն աղջիկ է նորից՝ թեթև ու երազուն... Մինչև այս երեկո նրան թվացել էր, թե իր ու Միրզոյանի հարաբերությունը պիտի տևի երկար, պիտի շարունակվի...

Եվ մինչև Տիգրանը խոսում էր հատակագծի առավելությունների մասին, Աննան մտածում էր, որ Միրզոյանն ուրեմն շուտով կարող է մեկնել: Մեկնե՛լ... Իսկ ի՞նչ պիտի անի ինքը, եթե նա գնա. կարո՞ղ է շարունակել իր կյանքը Տիգրանի հետ և այսուհետև մնալ այս քաղաքում, երբ մարդիկ գիտեն իր հարաբերությունը, կապը Միրզոյանի հետ:

Մտածում էր Աննան ու իրեն զգում էր փակուղու մեջ և միաժամանակ մեքենայորեն հարց էր տալիս ինքն իրեն.

— Ի՞նչ պիտի անեմ...

Իսկ երբ Բուրաստանի ընթրիքի սեղանը պատրաստվեց՝ Աննան հրաժարվեց ընթրիքից և անցավ իր սենյակը:

— Ի՞նչ է պատահել,—հարցրեց Տիգրանը:

— Ոչինչ, գլուխս ցավում է մի քիչ...

X

Երկու օր հետո նախագիծն ուղարկվեց Երևան: Ժամանակ չունենալով հիմնական հատակագիծ կամ մակետ պատրաստելու—Միրզոյանն ուղարկեց էսքիզային նախագիծ՝ ընդարձակ մի բացատրականով, թե ինչ սկզբունքներով է առաջնորդվել, թե նախագծում ինչ տեղ են կազմում տները, փողոցները, կանաչը և այլն: Լավ իմանալով, որ քննարկումը կարող է շուտ չլինել կամ երկարել Պետպլանում—ոչ Տիգրանը, ոչ Միրզոյանը չգնացին, այլ ուղարկեցին մի աշխատակցի միջոցով: Սակայն երկու շաբաթ հետո հեռագիր եկավ, թե նախագծի քննությունը նշանակված է օգոստոսի 20-ին, և թե ցանկալի է, որ մեկը ներկա լինի:

Ինչպես բոլոր հիմնարկներում, այնպես էլ Կոմունալ տնտեսության մեջ օրվա գրությունները բացում էր դիվանապետ Դավիթը և գալիս զեկուցում բովանդակությունը Տիգրանին, թղթերը հերթով նրան մեկնելով, թե՝ ահա՛, կուզեք տեսեք: Իսկ հեռագրերն ուղղակի տալիս էր Տիգրանին կարդալու: Ըստ սովորության ակնոցի վերևից նայելով, որ թվում էր պատրաստվում է հարու տալ՝ դիվանապետ Դավիթն ընթացիկ գրությունների և այդ հեռագրի հետ բերեց մի փոքր նամակ էլ ու դրեց Տիգրանի առաջ, որովհետև այն հասցեագրված էր անձամբ Տիգրանին. կապույտ ծրարի անկյունում այդպես էլ գրված էր «անձամբ»:

Այդպիսի անձամբ նամակներ Տիգրանը հաճախ էր ստանում ընկերներից, ծանոթներից կամ աշխատակիցներից: Սովորականի պես նա նամակը չբացեց, մինչև փոխդիվանապետը՝ ուսի մեկը հետզհետե բարձրացնելով, մյուսն իջեցնելով՝ վերջացներ զեկուցումը: Իսկ Դավիթը զեկուցում էր հանգամանորեն, մանրամասն, հարցեր տալով, հիշեցնելով ինչ-ինչ դեպքեր, դրություններ, մեջնմեջ բերելով իր նախկին կարծիքները կամ այժմյան յենթադրությունները: Յեվ ինչպես միշտ, այդ օրն էլ Տիգրանի աջակողմը կախված հեռախոսը զնգզնգում էր հաճախ, և Տիգրանն ատկված ընդհատում էր դիվանապետին ու լսափողը դնում ականջին: Կամ Սամսոն Սիմոնիչն էր խոսում կիսավարտ շենքից. կամ աշխեկներից մեկը. մի տեղից տախտակ էին խնդրում, մի այլ տեղից քար, յերրորդ տեղից հայտնում էին, թե բանվորների ռոճիկն ուշանում է: Տիգրանը պատասխանում էր և կրկին, աչքերն էլի առջևի նամակին, լսում դիվանապետին, վոր կոկորդն իսկույն բան էր գցում միս մանրող մեքենայի պես: Նրա զեկուցումից պարզվում էր, վոր մի տեղից պատվիրած տախտակը գալիս էր, մի այլ տեղից իրենց գործուղած աշխատակիցը գրում էր խնդրում՝ յերկաթեղեն գնելու, մի ուրիշ տեղից առաջարկում էին աղյուսներ ու ցեմենտ:

Յերբ դիվանապետը վերջացրեց ու դուրս յեկավ— Տիգրանը հոգնած ձգվեց բազկաթոռին, ձեռները բարձրացրեց գլխից վեր—մկանները տրաքտրաքեցին—ապա նոր միայն վերցրեց նամակը, զննեց —տեղական նամակ էր. դրոշմանիշի վրա միայն տեղական կնիքն էր: Դա այնքան էլ տարօրինակ չթվաց նրան,—նա նամակներ ստանում էր և տեղական պոստով: Նամակը բանա-

լով և հազիվ յերկու տող կարդացած՝ Տիգրանը հանկարծ շուրթերը կծոտեց ու մի վայրկյան նամակը հեռացրեց իրենից, կապույտ աչքերը հառելով սենյակի անկյունը. ապա նորից վոչ թե շարունակեց ընթերցումը, այլ հետաքրքրությամբ հարձակվեց նամակի վրա ու մի շնչում կարդաց մինչև վերջը, հետո խոթեց գրպանը և ներքին շուրթը դրավ ատամի տակ: —

Անանուն նամակներ Տիգրանը շատ էր ստացել կոմունալ տնտեսության վարիչ դառնալու օրից, և միշտ էլ դրել էր մի կողմ կամ տվել դիվանապետին: Դրանք մեծ մասամբ վրեժխնդիր նամակներ էին լինում՝ հայհոյանքով լի, առանց առիթը հիշատակելու: Յեվ սահնալիս Տիգրանը յենթադրում էր, վոչ միայն յենթադրում, այլ համոզված էր, վոր դրանք, ի հարկե, գրվում են այն մարդկանց կողմից, վորոնց տունը, այգին կամ հողամասը վերցրել է կոմունալ տնտեսությունը: Այդ նամակներում նրանք սովորաբար շարում էին հայհոյանքներ, վոր կարելի յե գրել թղթի վրա, և՛ հայհոյանքներ, վոր չի կարելի գրել... կամ սպառնում էին, թե ցույց կտան նրան: Իսկ մեկը,—անշուշտ այգին առնված այգետեր, կամ գուցե տունը վերցված տնատեր—ընտրել էր վրեժխնդրության հետևյալ միջոցը.—մի անգամից ուղարկել էր յոթը «доплатной« նամակ՝ հատկապես Տիգրանի անունով: Զարմացան դրասենյակում այդ առատության վրա, բայց պահանջվող գումարը տվին ցրիչին—գուցե թե կարևոր բաներ են—ու դրին Տիգրանի առաջ: Յոթը նամակն էլ դատարկ էին—յուրաքանչյուրի մեջ լրագրի մի-մի փոքրիկ կտոր, և ուրիշ վոչինչ... Մի ուրիշ անգամ, թերևս նույն մարդը, ուղարկել էր դարձյալ յոթ նամակ,—այս անգամ յուրաքանչյուրի մեջ մի-մի բառ գրած՝

«սրինգ» և «ա»-ի վրա գրչածայրի չափ չեղա: Պարզ եր—գրում եյին դաղված մարդիկ, գրում եյին թերևս սրտները հովացնելու կամ Տիգրանի տրամադրությունը դառնացնելու:

Բայց այս անգամ նամակն այլ բովանդակություն ուներ: Թերևս հեղինակը լիներ նույն կարգի մարդ, սակայն հիմա ուրիշ բան եր գրում և ուրիշ ակնարկություն անում: Գուցե և թշնամի չեր—այդ էլ դժվար եր պարզել, քանի վոր նա ստորագրում եր «Բարեկամ»: Նամակի բովանդակությունը և այս հանգամանքը կասկածի մեջ եր գցում Տիգրանին... Մի՞թե չեր կարող «բարեկամ» բառի տակ թաքնվել թշնամին: Վորովհետև այդ «բարեկամի» գրածն ավելի քան կասկածելի յեր... Այդ «բարեկամն» զգուշացնում եր Տիգրանին, վոր նա հետևի կնոջը, վորովհետև «նա (կինը) դավաճանում ե իրեն (Տիգրանին) նորեկ ինժեների հետ»... Գուցե և դա ընկեր եր,—իսկապես, բայց գուցե և թշնամու մեկը, սրտացավ ձևանալով, ուզում ե դառնություն պատճառել իրեն: Այնպես թե այնպես նախկին անանուն նամակներն իրավունք եյին տալիս նրան կասկածելու:

«Ահա մարդիկ ի՜նչ միջոցների յեն դիմում,—ասում եր Տիգրանը մտքում, մտածելով, վոր անպայման ուզում են գրգռել իրեն կնոջ դեմ և ընտանեկան դրամա ստեղծել: Պարզ ե... Այստեղ Տիգրանը հիշեց, թե ինչպես եր Միրյանը կիրթ վերաբերվում Աննային, ինչպես Աննային տեսավ նրա աշխատանոցում, վորտեղից Աննային կառքով բերեց տուն, ու նրան թվաց թե Աննան չփոթված եր մի տեսակ... Այո, այդտեղ անպայման մի բան կար... Յեվ դա շատ հավանական ե: Ինչո՞ւ մինչև հիմա չեյին գրում: Ուրեմն մի հիմք, մի առիթ

կա: Ի՞նչով բացատրել, վոր Աննան և աշխուժացել ե, և դարձել ցրված, չփոթված: Յեվ հետո—Աննան Միրյանի աշխատանոցում: Ի՞նչ գործ ուներ... Մի՞թե կասկածելի չե դա... Յեվ Տիգրանն ակամա ատելություն զգաց դեպի Միրյանը, դեպի նրա կիրթ ձևերը, դեպի նրա ձայնի տեմբրը, վոր դուր եր գալիս շատերին:

«Չե, այս բոլորը դատարկ բան ե, թշնամություն»,—ասաց Տիգրանն ելի մտքում, մտածելով, վոր առաջ այդ մասին չեյին գրում, վորովհետև առիթ չկար, իսկ հիմա մի յերկու անգամ, յերևի, Աննային տեսել են Միրյանի հետ միասին գալիս—ահա՛ և առիթ: Մեր գավառական քաղաքին էլ հենց այդպիսի բան ե հարկավոր: Բավական ե տղա ու աղջիկ յերկու անգամ հանդիպեն, իսկույն—սիրո՜ւմ են, սիրահարվա՜ծ են, անառա՛կ են.. Հերիք ե մի կին ամուսնուց ջոկ ման գա ուրիշ տղամարդու հետ, արդեն—դավաճանում ե մարդուն... Այդպես էլ տեսել են Աննային Միրյանի հետ—էլ վերջացա՜վ... Փակ, նահապետական կյանքի կասկածամտություն...

«Հիմա սրիկայի մեկը կամեցել ե կասկած գցել սիրտս,—մտածում եր Տիգրանը,—իր կարծիքով՝ թունավորել ինձ և իր խելքով՝ վրեժը գործել տալ... Թըշ-վա՛ռ... Յեվ վերջապես»... Նա ուզում եր ասել՝ «կինն ազատ ե, կնոջ վրա ինչ բռնություն»... Բայց հետո, ասես այդ մտքերն իրենից վանելու համար, արտասանեց գրեթե լսելի.

— Թշնամությո՛ւն, ուրիշ վոչինչ...

Ու վորոշեց տուն գնալով՝ նամակը տալ Աննային, թող տեսնի ինչ հիմար բաներ են գրել:

Բայց յերբ տուն յեկավ—Աննան տանը չեր:

Գիշերվա ժամը 12-ն եր—նա չկար:

— Գնացել ա մառն զալու՝ դեռ չի յեկել ա,—ասաց Բուրաստանը նեղացած:

Տիգրանը նայեց պառավի խորը նստած աչքերին և՝ նրա ձայնից ու պատասխանելու ձևից զգաց, վոր նա դժգոհ է. թվում եր ինչ-վոր բան ունի, բայց քաշվում է ասել:

Դա հետաքրքրեց Տիգրանին:

— Ի՞նչպես յերևում է՝ յերեխաները քեզ հոգնեցնում են, Բուրաստան:

— Ինչի՞. իմ պարտքն ա, պետք կատարեմ,—ասաց նա, և նրա ձայնի մեջ դարձյալ դժգոհություն կար և վիրավորանքի պես մի բան:

— Դու կարծես դժգո՞հ ես մի բանից, Բուրաստան— հը՞:

— Չե՛. ինչու վոր... յես քեզնից շատ շնորհակալ եմ, ախպեր...

Պառավը չեշտեց հատկապես «քեզնից» բառը:

— Ուրեմն Աննայի՞ց ես դժգոհ:

Պառավը չպատասխանեց:

Դա Տիգրանին ավելի հետաքրքրեց.

— Չլինի՞ վիրավորել է քեզ:

Բուրաստանը դարձյալ չպատասխանեց:

Յեվ Տիգրանն այս անգամ յենթադրեց, վոր Աննան, յերևի, խոսքով կամ վարմունքով նեղացրել է պառավին, ու անցավ կից սենյակը, ուր յերեխաները քնած եյին իրենց ցանցապատ մահճակալներում. նայեց նրանց հանգիստ քնած դեմքերին. ուղղեց մեծի գլուխը, վոր թեքվել եր բարձից, համբուրեց փոքրիկի ձեռը, վոր մեկնել եր վերմակի վրա:

Մինչ այդ յեկավ Աննան:

Տիգրանն ուրախ-ուրախ դիմավորեց նրան և ուզեց իմանալ ո՛ւր լինելը:

— Դու վոր գալիս ես մեկի՛ն, յերկուսի՛ն,—յես քեզ հարցնո՞ւմ եմ ուր լինելուդ մասին,—յեղավ Աննայի դժգոհ պատասխանը:—Թե՞ ուզում ես միշտ տանը նստեմ...

Տիգրանը զարմացավ:

— Չեմ ուզում. այլ հարցնում եմ:

— Իսկ յես քեզ հարցնո՞ւմ եմ,—զրգռվեց Աննան հանկարծ:—Թե ուզում ես տանը նստեմ ու աղախնի պաշտոն կատարեմ...

Ու խոսեց անսպասելի հուզված, վրդով, դանդաղավոր.—Ուրիշներն ամեն բան կանեն, ամեն տեղ կերթան, լավ կհագնվեն, լավ կզբոսնեն, իսկ յեթե ինքը մի քիչ ուշացավ՝ իսկույն.—«վորտե՞ղ եյիր»: Վո՛չ կարգին կյանք, վո՛չ զվարճություն...

Կնոջ տոնից և խոսելու ձևից Տիգրանը յենթադրեց, վոր Աննան լուրջ դժգոհ է իրենից և կամ նրա ու աղախնի միջև ինչ-վոր բան է կատարվել, ու չուզեց հարցնել՝ ավելի չզրգռելու համար:

— Այդ թողնենք, Աննա. յես առավոտը գնում եմ Յերևան:

Յեվ վորովհետև Աննան հետաքրքրություն չցուցահանեց՝ Տիգրանը շարունակեց նույն հաշտարար յեղանակով.

— Քաղաքի հատակագիծը պետք տանեմ հաստատելու: Յեթե բան ունես...

Սովորաբար Աննան այդպիսի դեպքերում հիշեցնում եր, վոր աշխատի շուտ գալ, մենակ է: Այս անգամ, սակայն, Աննան հենց ինքը նկատեց ու զարմացավ, վոր վոչինչ չի ասում, ու մտածեց, թե չլինի

Տիգրանն էլ նկատի այդ անտարբերությունը, վրա բերեց ակամա.

— Յերեխաների համար խաղալիք բեր...

— Լավ, կաշխատեմ...

Աննան ուզում եր ավելացնել, թե «աշխատելն» էլ խոսք է. ինձ ուշադիր չես, գոնե դեպի յերեխաները ուշադիր յեղիր»,— բայց դարձյալ լռեց: Նրան ուրիշ մտքեր եյին հուզում: Յեղավ մի րոպե, յերբ ուզեց ասել այն, ինչ զգում է, բայց զսպեց իրեն, թե չկարողացավ...

Վերջերս քանի-քանի անգամ վորոշել եր հայտնել, բայց միշտ էլ դժվարանում եր: Հայտնելու հետևանքն այն պիտի լիներ, վոր թողներ ամեն ինչ ու հեռանար նրանից, բայց... տատանվում եր, խճճվում յերկընտրանքի մեջ.. իր մեջ համարձակություն չեր գտնում այդ ասելու, անելու:

Ահա ինչո՛ւ հուզված, ջղագրգիռ ու բարկացած եր Աննան:

Միրյանն ուզում է գնալ. Միրյանը պատրաստվում է գնալու!... Աննային թվում եր, թե յեթե նա գնա— կյանքը, քաղաքը կդատարկվի իր համար... Չնայած Աննան այն կարծիքը հայտնեց, թե չտապելու կարիք չկա, ամառանոցի լավ օրերը նոր պիտի սկսվեն, բայց Միրյանի առարկությունը գտնում եր ճիշտ, թե հատակագիծն ավարտելուց հետո վոչինչ չունի անելու, մանավանդ արձակուրդը լրանում է: Խոսքի մեջ նա ակնարկել եր, թե Աննան կարող է մեկնելիս ընկերակցել իրեն, յեթե կամենա: Ճիշտ է, նա այդ ասաց մի տեսակ ժպտալով, սիրալիր, վորից դժվար եր վորոշել, սակայն, թե վորքա՛ն լուրջ, անկեղծ եր առաջարկը,— այնուհանդերձ այդ խոսքերը Աննայի վրա այնպիսի տպա-

վորություն արին, կարծես ինքը կտրվում է հողից, ու նրա սիրտը լցվեց մի հուզումով, վոր չեր կարողանում վորոշել—անո՞ւշ է թե դառը...

Միասին գնա՞լ... Աննան այդ հեռանկարի մասին չեր մտածել, քանի վոր Միրյանը յերբեք գնալու մասին չեր խոսել: Բայց հիմա, յերբ նա առաջարկում եր գնալ հետը— Աննայի առջև ծառանում եր մի դժվար խնդիր: Գնալ՝ հապա յերեխանե՞րը... Մինչ այս Աննան նկատել եր մի քանի անգամ, վոր իր մեջ չկա այն խանդոտ ու բուռն սերը դեպի յերեխաները, ինչ կար առաջ: Նա զարմանքով նկատել եր այդ և զարմանքով էլ զգացել, վոր սրտում յերեխաներից ավելի տեղ է բռնել Միրյանը: Յերեխաները նրա դիմաց նսեմացել եյին կարծես: Պատահում եր ժամանակ, վոր Աննան չեր էլ ուզում յերեխաներին տեսնել, յերբ մտածում եր Միրյանի վրա: Բայց այժմ, յերբ Միրյանը պատրաստվում եր գնալու, և իրեն եւ առաջարկում եր գնալ հետը—Աննայի մտքերը շարունակ յերեխաների շուրջն եյին դառնում. և զգում եր, վոր յերեխաները կանգնած են իր ճամբին (առաջ նա այդ մասին չեր մտածել): Ճիշտ է ասում Բողան, վոր յերեխաները «վոտի կապանք են»: Անզավակ կինն ազատ է իր քայլերի մեջ. իսկ յերեխաների մայրը... Յեվ նա մտածում եր, վոր կնոջ ստրկությունն սկսվում է յերեխաներից.—ամենածանր կապը, վոր ստեղծել է բնությունը կնոջ համար: Բայց ինչո՞ւ բնությունը,—ավելացնում եր նա,—ավելի շո՛ւտ մարդիկ...

Մտածելով յերեխաների մասին՝ Աննան չեր կարողանում պատկերացնել, թե ինչպես կարող է թողնել նրանց: Հնարավո՞ր է արդյոք...

Մտածելով՝ նա մեկեն ծուլ յեղավ տեղից, արագ-

արագ անցավ ննջարանն ու ընկավ նախ փոքրի, ապա մեծի մահճակալին ու սկսեց համբուրել նրանց այնպիսի մոլեգին համբույրներով, կարծես խլում էին ձեռից: Այնպես բուռն ու հախուռն էին նրա համբույրները, վոր մեծը՝ Սուրիկը շարժվեց, տնքաց ու շուռ յեկավ, փոքրիկ ձեռն անոգնական ոդի մեջ պարզելով: Այդ շարժումը մորն ավելի հուզեց, և նա համբուրեց նրա ձեռները, գլուխը՝ ավելի շո՛ւտ-շուտ, ավելի բուռն:

Համբուրում էր ու հետո էլ կրկնում.

— Ձեզ չեմ թողնի, չե՛, չե՛մ թողնի...

Հանկարծ ձայնն ականջն ընկավ—իսկույն սթափվեց. ի՞նչ է ասում: Ո՞ւր է գնում, վոր չի թողնի: Մի՞թե կարող է սրանց, այս փոքրիկներին թողնել ու գնալ... Մի՞թե... Նորից սկսեց խելագարի պես համբուրել նրանց ու զգաց, վոր ինչ-վոր բան մրջում է յերեսը.—արցունքները հոսում էին այտերն ի վար—անարգել, առատորեն...

Այդ միջոցին դռան բացվելը լսեց ու յետ նայեց վախեցած:

Տիգրանն էր: Նա զարմացած էր—ի՞նչ է պատահել արդյոք, վոր Աննան համբուրում է յերեխաներին:

Աննան անհարմար զգաց արածի համար և զգաց, թե ինչպես յերեսը տաքանում է:

— Սուրիկն անհանգիստ է,—ասավ, ու էլ խոսք չգտավ շարունակելու:

Իսկ Տիգրանը նորից մտածեց, վոր պետք է Աննայի հետ լուրջ խոսել. վերջերս արդեն շատ տարորինակ է պահում իրեն:

XI

Տիգրանը Յերևան հասավ յերկրորդ որն առավոտյան. նրա առաջին գործն յեղավ նախաճաշել, ապա պորտֆելը—իր միակ իրը—ձեռին գնաց Պետպլան: Բայց այստեղ նրան հայտնեցին, թե նախագիծը կքըննեն յերկու որից, վորովհետև շին-տեխնիքական սեկցիայի այն անդամը, վորին հանձնված է նախագծի ուսումնասիրությունն ու զեկուցումը, քաղաքում չէ, կգա յերկու որից հետո:

Անցավ, սակայն, յերկու որ—նիստն էլի գլուխ չեկավ:

Քննությունը հետաձգվեց ևս յերկու որով: Տիգրանը մտածեց մի րոպե—թողնել-վերադառնալ և ժամանակ չկորցնել իզուր, բայց մեկ էլ մտածեց, վոր առանց հաստատել տալու կամ առանց վորոշում իմանալու—միտք չունի գնալ: Բացի դրանից՝ թերևս կարևոր լիներ իր ներկայությունը բացատրությունների և այլ խնդիրների համար: Իզուր չեն յերևի կանչել: Ու վորպեսզի որերը պարապ չանցնեն՝ աշխատեց շինանյութ գնել: Մի տեղ ապառիկ, մի տեղ խնդրանքով ու համոզելով ձեռք բերեց տախտակ, թիթեղ, յերկաթեղեն և ուղարկեց քաղաք,—մինչև վոր, վեցերորդ որը, նշանակվեց Պետպլանի շինտեխնիքական հանձնաժողովի նիստը: Տիգրանն այնպես էր կարծում, թե այնտեղ կլինեն միայն ինժեներներ ու ճարտարա-

պետներ, բայց զարմանքով իմացավ, վոր նախագծի քննությանը մասնակցում են և վոչ մասնագետներ— Աշխատանքի կոմիսարիատի ներկայացուցիչը, Առողկոմատի սանիտարական բժիշկը, Ֆիզկուլտուրայի Գերագույն Խորհրդի հրահանգիչը և ուրիշներ: Այն հանգամանքը, վոր այդքան տարբեր հիմնարկներ ու մարդիկ են շահագրգռված իր նախագծով և այն քննելու յեն ամենատարբեր տեսակետներով,—նրա մեջ կասկած ու յերկյուղ զարթեց.—հանկարծ չհավանեն, չհաստատեն, այն ժամանակ արի ու պատասխան տուր ընկերներին, քաղխորհրդին, հասարակության...: Վոչ միայն այդ՝ նա վախենում եր անգամ ծաղրեն և՛ նախագիծը և՛ իր առաջադրությունը, համարելով այն, թերևս, ախալ, անընդունելի...

Նա հիշեց, վոր այդպիսի զգացում ունեցել եր աշակերտ և ուսանող ժամանակ՝ քննություն տալիս:

Նրա այդ անհանգստությունն ավելացավ մանավանդ, յերբ նախագահը—ճաղատ գլխով և յերկար սուր քթով մի յերիտասարդ,—նիստը բանալով, ցանկություն հայտնեց, վոր ընկերները բազմակողմանի և ամենայն լրջությամբ մոտենան հատակագծի քննությանը: «Վորովհետև սոցիալիստական քաղաքը, ասաց նա լինելով քաղաքի նոր տիպ, պահանջում է ավելի ուշադիր վերաբերմունք»:

Տիգրանն իրեն փոքր ինչ հանգիստ զգաց այն ժամանակ միայն, յերբ այն ինժեները, վորին նախագիծը տվել եյին «ի յեզրակացություն»,—զեկուցումն սկսեց նպաստավոր կարծիքներով: Իսկ հետո պարզվեց, վոր նա ընդհանրապես հավանում է. վերջում արավ միայն փոքրիկ դիտողություններ՝ փողոցների և հրապարակների մեծության մասին. հայտնեց համարյա այնպիսի

մտքեր, ինչ վոր Սամսոն Սիմոնիչը: Կարծիքների այդ նմանությունը Սամսոն Սիմոնիչին բարձրացրեց նրա աչքում:

«Մալադե՛ց Սամսոն Սիմոնիչ», ասաց Տիգրանը մտքում և գոհ մնաց զեկուցումից:

Ամեն ինչ կարծես լավ եր գնում. հանձնաժողովի անդամները նույնպես ընդհանուր առմամբ հավանում եյին նախագիծը, իսկ մի յերկուսը նույնիսկ համարում եյին թարմ նորություն: Առողկոմատի ներկայացուցիչը—ակնոցով բժիշկ—իր գոհունակությունը հայտնեց, վոր հատակագծի մեջ լիովին նկատի յե առնված քաղաքի առողջապահությունը. նրան դուր յեկավ մանավանդ այն, վոր անտառում կառուցվելու յեն հանգստի տներ և սանատորիաներ: Արին դարձյալ փոքրիկ դիտողություններ՝ վոր եյական նշանակություն չունեյին... Յեվ այսպես ամեն բան կարծես լավ եր գնում. բայց հետո, բոլորովին վերջում, յերբ թվում եր ամեն ինչ ավարտված է գրեթե, խոսք խնդրեց, մինչ այդ անկյունում անխոս նստած պարուսինե բլուզով մի յերիտասարդ, վորին Տիգրանը համարել եր ներքին աշխատակից, վոր հետաքրքրությունից ու պարապությունից յեկել է ներկա լինելու: Պարզվեց, սակայն, վոր նա եւ ճարտարապետ է—նորավարտներից: Խոսք խնդրելով՝ նա, հակառակ մյուսների, վոր նստած եյին խոսում, վոտի կանգնեց, ճակատին թափվող առատ մազերը յետ գցեց և սկսեց հատակագիծը քննադատել այնպիսի խոսքերով ու բառերով, վոր մյուս խոսողները—մասնագետ ճարտարապետներն անգամ չեյին գործածում:

— Քաղաքը պետք է,—ասավ նա,—վերցնել վորպես մի կոմպլեքս: Ճարտարապետությունը մինչև հի-

մա փաստորեն կտրված է յեղել կոմունալ տնտեսության խնդիրներից և դեռ բուրժուական ժառանգությունից չի հրաժարվել. տները շինվում են մեծ մասամբ անհատական առանձնությամբ և չեն կապվում միմյանց հետ: Մինչդեռ բոլոր տների մեջ պիտի լինի միասնականություն,—շարունակում էր յերիտասարդը, մազերը շարունակ յետ գցելով, և Տիգրանին թվում էր, թե նա իր մտքինն է ասում, ա՛յն, ինչ ինքն զգում էր, բայց չէր կարողանում ձևակերպել այդպես պարզ, յերբ իր առաջադրանքն էր գրում կամ յերբ Միրյանին տալիս էր իր պատկերացումները ապագա քաղաքի մասին: «Եվ յեթե Միրյանը սխալներ ունենա՝ մեղքն իմն է»,—մտածում էր նա, բերանի մեջ չորություն զգալով:

— Սոցիալիստական քաղաք կարող է ստեղծել այն ճարտարապետը, վորը տոգորված է սոցիալիզմի գաղափարով, նրա հեռանկարներով,—ասում էր յերիտասարդը հանդարտ, և նրա ձայնի մեջ Տիգրանն զգում էր ինչ-վոր մի ուժ, մի խորին համոզում, ու մտածում էր, վոր ճիշտ է ասում, բայց և միաժամանակ անհանգստանում,—թե չլինի հանկարծ այնպիսի պակասներ գտնի, վոր նախագիծը մերժեն: Ի՞նչ պիտի անի... Ու այս մտքի վրա, չգիտես ինչ զարմանալի ասոցիացիայով, հիշեց ստացած անոնիմ նամակը,—թե կինն ապրում է Միրյանի հետ,—ու մտածեց, թե յեթե նամակում արված ակնարկը ճիշտ լինի և ինքը մերժի՝ պիտի կարծեն «սեռ-կռիվների» հետևանքով է մերժում...

Այս մտքերով տարված՝ Տիգրանը մի քանի վայրկյան ցրված էր լսում յերիտասարդին, իսկ յերբ սթափվեց—նա արդեն ուրիշ խնդրի յեր անցել: Խոսում էր այն մասին, թե յերբ կառուցում ու վերակառուցում ենք մեր քաղաքները սոցիալիստական կենցաղի ու տըն-

տեսության համաձայն՝ ճարտարապետի առաջ կանգնում է «ճարտարապետական հսկայական խոր ստեղծագործական ներգործոն թեման—սոցիալիստական քաղաքի ճարտարապետական կոմպլեքսը»:

— Այս հատակագծից յերևում է մի բան,—ձեռք մեկնեց նա պատին կախված նախագծի կողմը,—վոր ճարտարապետը տակավին չի հրաժարվել քաղաքների հատակագծման բուրժուական ըմբռնումից: Ճիշտ է, վորոշ տեխնիքական խնդիրների լուծումը տրված է, սակայն ներքին կազմությունը չի բխում սոցիալիստական կենցաղի առաջադրանքից: Նկատի չեն առնված նոր կենցաղի կարևոր մոմենտներ—կնոջ ազատագրություն, խոհանոց, մանկապարտեզ, մանկամսուր, կուլտուրայի և հանգստի պարկ: Բաներ, վորոնք պետք է նկատի առնվեյին մի նախագծում, վորը վոչ թե մի տարվա համար է, այլ մի քանի տասնամյակի: Մինչդեռ ճարտարապետն ավելի ուշադիր է յեղել արտաքին տեսքին, քան բովանդակության. քիչ է մտածել այն մասին, վոր քաղաքը մի որգանիզմ է՝ մարդու որգանիզմի նման,—ուր ամեն ինչ պետք է որգանական կապ ունենա և նպատակահարմար լինի ու ֆունկցիոնալ...

Շին-տեխնիքական սեկցիայի անդամները, դրանց հետ և նախագահը, վոր մինչ այդ հավանություն եյին տվել նախագծին, յերիտասարդի ճառից զգաստացան կարծես. վոմանք սկսեցին ուշադիր դիտել նախագիծը, իսկ մի քանիսը քմծիծաղ նայել իրար: Այն ինչ յերիտասարդն անցավ այնուհետև մանրամասներին—առանձին թաղերին, արտադրական, կուլտուրական ու հասարակական հիմնարկների տեղին և նրանց մյուսների հետ ունեցած կապին, ծառազարդումին: Յեվ այս բոլորի

մասին խոսեց բավական յերկար, միշտ գլխի թափահարումով, ճակատին իջնող մազերի փունջը յետ գցելով, և զարմանալի մի հանգստությամբ, վոր թվում եր կարող է ժամեր խոսել: Նա, ի միջի այլոց, նկատեց, վոր նախագիծը մոռացել է միջքաղաքային տնտեսությունը, վոր այնքան կարևոր է սոցիալիստական քաղաքների համար:

Այժմ Տիգրանն ուշադիր հետևում եր նրան և միաժամանակ զգում ու նկատում, վոր շին-տեխնիքական սեկցիայի անդամները նրան լսում են ակամա. մի անգամ նույնիսկ լսեց, թե ինչպես հարևանն ասաց հարևանին. «իդեոլոգիա յե քարոզում», մյուսը պատասխանեց. «ավելի շուտ ուզում է կարիերա անել»...

— Ճարտարապետությունը մնալով արվեստ՝ վոչ մի վայրկյան չպետք է մոռանա գեղարվեստական-իդեոլոգիական մոմենտները...

Նա լռեց և ուզում եր նստել:

Նախագահը, վոր հանգիստ լսում եր, հարցրեց.

— Ուրեմն ձեր կարծի՞քը:

— Ուզում եք ասել իմ յեզրակացությո՞ւնը: Իմ յեզրակացությունը պարզ է: Յես գտնում եմ, վոր սոցիալիստական քաղաքի պրինցիպները այստեղ լավ չեն պահպանված:

Տիգրանն անհանգիստ վեր կացավ:

— Գուցե ընկերը վորոշ ցուցմունքներ կանի՝ փոփոխելու, հավելումներ անելու,—հարցրեց նա մեկ նախագահին, մեկ յերիտասարդին նայելով:

— Այդ հնարավոր է,—ասաց յերիտասարդը,— բայց հազիվ թե այդ կարելի լինի այս ժողովում:

— Ի հարկե, ի հարկե,—ձայնակցեցին հանձնաժո-

ղովի անդամները, ժամացույցներին նայելով:—Արդեն ուշ է...

Մտքերի կարճատև փոխանակությունից հետո՝ վորոշվեց ընդունել նախագիծը, յենթարկելով այն վորոշ փոփոխությունների՝ սոցիալիստական քաղաքի պահանջների համեմատ, նկատի ունենալով նրա զարգացման հեռանկարները. իսկ այդ փոփոխությունները հանձնարարվեց յերկու հոգու, վորից մեկը յերիտասարդն եր:

XII

Միրյանը, հյուրանոցի իր սենյակում, մեկնվել էր մահճակալին և նայում էր լուսամուտից յերևող կապույտ յերկնքին, ուր փրփուրի նման ճերմակ ու թեթև ամպեր եյին լողում: Նա նոր էր վերադարձել առավոտյան զբոսանքից և այժմ հանգստանում էր պիջակը հանած: Նախագիծը Յերևան ուղարկելուց հետո առհասարակ նա հանգստանում էր: «Իմ ամառանոցը նոր է սկսվում»,—ասում էր ծանոթներին: Յեվ, իրոք, շարունակ «Պրոլետար» այգումն էր, դուրսը. գնում էր դաշտ, անտառ կամ կայարան՝ մարդատար գնացքներին դիմավորելու—միշտ ելեգանտ հագնված, անձրևաթափը թևին: Նա վայելում էր այն անհոգ հանգստությունը, վոր ապրում է մարդ մի ծանր գործ կամ պարտականություն կատարելուց հետո: Նրա այդ զբոսանքներին հաճախ միանում էր Աննան կամ Բոգան մարդու հետ, բայց մեծ մասամբ, ի հարկե, Աննան: Քանի վոր շուտով մեկնելու յեր—Միրյանն ուզում էր, ինչպես ինքն էր ասում, «վայելել ամառը». սպասում էր նախագծի վավերացումներին. իմանալ ի՛նչ կասեն Յերևանում, ի՛նչ փոփոխումներ ու հավելումներ կառաջարկեն կամ ի՛նչ դիտողություններ կանեն: Նա իր գործը համարում էր վերջացած, բայց մտածում էր յեթե առաջարկեյին մասնակի փոփոխումներ—դրանք իր ցուցմունքներով կարող էր կատարել վորևե տեխնիկ,

հենց իր աշխատակիցներից մեկը, կամ քաղաքի ծեր ինժեներ Սամսոն Սիմոնիչը, վորին Միրյանը համարում եր իր «լավ բարեկամը»... Թերևս մնար ինքը անելու, բայց մի կողմից լրանում էր արձակուրդը, մյուս կողմից զգում էր, վոր այլևս մնալ չի կարող—արդեն խոսում եյին իր և Աննայի կապի մասին, Տիգրանին հանդիպելիս անհարմար էր զգում: Նրանց կապն այնպիսի բնույթ ուներ արդեն, վոր Միրյանը մի օր, մի ուրախ ժամի ասել էր, թե ուրախ կլինի, յեթե Աննան հետևի իրեն: Նա այդ ասել էր՝ համոզված լինելով, վոր Աննան չի թողնի յերեխաներին և մանավանդ իրենց կապի մասին չի համարձակվի հայտնել մարդուն: Նա ցանկանում էր, վոր ամեն ինչ վերջանա առանց աղմուկի և առանց դրամայի, վոր չվնասի իր անվանն ու համբավին: Յեվ դրա համար ավելացրել էր.

— Ձեր ամուսինն այնպիսի մարդ է, վոր նրանից թաքուն չի կարելի պահել—այսինքն՝ մեր հարաբերությունն այնպիսի ընթացք է ստացել, վոր այլևս պետք է հայտնել...

— Հայտնե՛լ,—ընդհատել էր նրան Աննան ու լռել:

Թերևս նա յել նույն կարծիքի յեր, թե պիտի հայտնել, պե՛տք է վերջ տալ ծածուկ, գաղտնի տեսակցություններին, այս յերկդիմի դրությանը, վորն իր համար շատ անսովոր էր, և այդ պատճառով շատ ծանր: Նա յել տեսնում էր, վոր քաղաքում արդեն նկատել են իրենց հարաբերությունը և խոսում են այդ մասին,—բայց Միրյանի խոսքերից Աննային այնպես թվաց, թե նա իրեն հրում է դեպի դժբախտություն, դեպի մի վիհ, վորից էլ գուցե դուրս գալ չի կարող: Թվաց նաև, վոր Միրյանն այդպիսով ուզում է ազատվել իրենից ու հեռանալ, ուստի սառնություն զգաց սրտում, մի սառնու-

թյուն, վորից դող անցավ ամբողջ մարմնով։ Բայց դա տևեց միայն մի վայրկյան, վորից հետո հաճույքի մի հորդ հոսանք ողողեց Աննայի սիրտը։—Հայտնե՛լ,— կրկնեց նա մտախոհ։—Բայց ... ի՞նչպես...

— Շատ պարզ... վոր յես ահա՛...

Լռություն։

— Յեվ դու կարծում ես դա հե՞շտ է, Մինայիչ...

— Պետք է վճռական լինել,—ավելացրել եր Միրյանը, նրան ճանապարհ գցելով։

Յեվ հիմա, մահճակալին մեկնած՝ սպասում եր Աննային, թե ինչ պատասխան է բերելու։ Նա, ինչպես առաջ, այնպես ել այժմ, համոզված եր, վոր Աննան, իր գավառական անհամարձակությամբ, հազիվ թե կարողանար վորևե բան հայտնել ամուսնուն։ Յեվ դա կլիներ այն, ինչ ինքն եր ցանկանում.—կհեռանար առանց աղմուկի և դրամայի։

Նա այս մտքերի վրա յեր, յերբ դուռը ծեծեցին։

— Մտեք,—վոտի կանգնեց արագ ու հապճեպ ուղղեց փողկապը, վոր պառկելիս չեր արձակել։

Ներս մտավ Աննան՝ արագ, այլայլված, կարծես ինչ-վոր բանից հալածված։ Ու այդպես ել արագ, հապշտապ նստեց առաջին պատահած աթոռին.

— Յես չեմ կարող, Մինայիչ... Չեմ կարող...

Միրյանը մի վայրկյան շփոթվեց նրա արտասովոր տեսքից, ապա հանդարտ հարցրեց.

— Ի՞նչը չես կարող... Ուրեմն չկարողացար վճռական լինել։ Զարմանալի՛ յե... Ասացի, վոր պետք է հայտնել և...

— Յե՞վ,—հարցրեց Աննան արագ, նրա յուրաքանչյուր խոսքին առանձին նշանակություն տալով, գննող հայացքը դողդուն նրա յերեսը գցելով։

— Յեվ, ինչպես ասել եմ, այստեղից հեռանալ,— շարունակեց Միրյանը հանդարտ։

— Հեռանա՛լ...

— Հապա ի՞նչպես,—զարմացավ Միրյանը Աննայի բացականչության վրա, նկատելով նրա անոգնական հայացքը, վոր շփոթություն ու անվճռականություն եր արտահայտում դարձյալ։

— Հեռանա՞՛լ,—կրկնեց Աննան ուղեկուլը ձեռներով տրորելով։—Իսկ... իսկ յերեխանե՞րս...

Վերջին խոսքերն Աննան ասաց մի տեսակ ճիչով, ներքին սարսուռով ու տագնապով, մի տագնապ, վոր թվում եր յերբեք չի զգացել։

— Յերեխանե՛րը... գուցե և յերեխաներին,— յեղավ Միրյանի դանդաղ պատասխանը։

Աննան նախ տարակուսեց մի ակնթարթ, ապա մեկեն վոտի կանգնեց պայծառացող դեմքով։

— Այո՞... Անկե՞ղծ... Ազնիվ խո՞սք...

— Ի հարկե։

— Դու հիանալի յես, Մինայիչ,—ասաց Աննան նրա վզին փաթվելով, խնդագին դողով։

Բայց անմիջապես մռայլվեց դարձյալ։

— Իսկ յեթե... յեթե Տիգրանը նրանց չտա,—շարունակեց Աննան բեկված ձայնով։—Նա առանց նրանց համբուրելու չի քնում...

Միրյանը գլուխը կախեց—դժվար եր իմանալ ինչ է մտածում. բայց Աննան այնպե՛ս կուզեր իմանալ նրա մտքերը, հասկանա՛լ, շոշափե՛լ։ Յեվ Աննային թվաց, թե ժամեր անցան մինչև նա պատասխանեց։

— Այդ դեպքում թողնում եմ քեզ վճռելու,—ասաց Միրյանը հատ-հատ խոսքերով, դժվարությամբ։

Յեվ վորովհետև Աննան լռում եր՝ նա կրկնեց.

— Մտածի՛ր...

. . . .

Միրյանի սենյակից Աննան դուրս յեկավ ծանր խոհերով պաշարված և, փոխանակ տուն գնալու, ինչպես վորոշել եր, ինքնաբերաբար թե ակամա՝ քայլերն ուղղեց դեպի Ռոզայի սենյակը: Տանը պիտի տխրեր, հուզվեր, իսկ Ռոզայի մոտ նա իրեն միշտ թեթև եր զգում. մանավանդ վոր վերջերս Աննան վոչինչ չեր թաքցնում նրանից և միշտ, այս կամ այն դժվարության դեպքում, նրան եր դիմում՝ սիրտը թեթևացնելու և խորհուրդ հարցնելու համար:

Ռոզան, կապոտը հագին, լուսամուտի գոգին նստած, մանիկյուր եր անում՝ մի փոքրիկ մկրատ ձեռին, իսկ Իլյան ինչ-վոր հաշիվներ եր գրում ծոցատետրում:

— Ну, ի՞նչպես յեղավ,—հետաքրքրվեց Ռոզան՝ Աննայի գլուխը տեսնելուն պես. նա գիտեր, վոր Աննան պիտի բացատրվեր ամուսնու հետ, և ուզում եր իմանալ հետևանքը:

Բայց Աննան, Իլյայից քաշվելով, լռեց մի այնպիսի տխրությամբ, վոր Ռոզան, իսկույն դարձավ ամուսնուն.

— Իլյա, милый, թող մեզ մենակ... Այս աթոռը դիր վոտիս տակը հետո: Այդպես: Mersi.

— Պետք է կյանքը վայելել, милая, յերկրորդ անգամ աշխարհ չենք գալու,—ասաց Ռոզան՝ Աննայի կասկածները, տագնապները լսելով:—Յեթե սիրում ես, նա յել քեզ—գնա՛, ասա՛: Կյանքը ի՞նչ է, յեթե վոչ—սիրե՛լ, լավ հագնվել, լավ զբոսնել, ճամբորդել. մնացածը դատարկ բան է. суета сует, վոնց վոր կասեր քեռիս... Մարդուս լավ ապրելն է մնում: Ինչ

վերաբերում է յերեխաներին—դրա համար է ե՞, վոր չեմ ուզում յերեխա ունենամ: Այ, տեսնում ես, վոր յերեխան, մորս ասած, «վոտի կապանք» է... Հա՛, ինչ վերաբերում է յերեխաներին, милая, նրանք դե այնքա՛ն ել փոքր չեն. կանայք կան, վոր ծծկեր են թողնում:

— Իսկ յեթե Տիգրանը չուզենա տալ,—ասաց Աննան,—առանց ընկերուհու խոսքերին հետևելու:

— Յեթե համառակի, тогда թող պահի: Դու ել չուտ-չուտ կգաս տեսնելու: Մարդը կոմունիստ է, չի կարող այդ բանը քեզ արգելել...

Աննան մտախոհ գլուխը կախեց կրծքին և սկսեց ունգիկյուլը ճմռել ձեռների մեջ:

— Թե՞ վախենում ես հեռանալուդ դեմ լինի... Նա կոմունիստ է, պիտի հասկանա ի՛նչ է նշանակում կնոջ ազատությունը: Յես այսպես եմ կարծում, милая...

Աննան ել այդպես է կարծում, բայց դժվարանում է:

— Ի՛նչ դժվարանալու բան կա, милая моя,—շարունակում է Ռոզան:—Մի քիչ ել համարձակ յեղիր: Смелость города берет,—կասեր քեռիս: Գնա ու ասա՛—ել չեմ կարող, սիրում եմ ինժեներին: Նա կոմունիստ է, պետք է հասկանա: Իրավունք ել չունի բան անելու: Խորհրդային օրենքն այդ կողմից հիանալի յե...

Այնուհանդերձ Աննան տատանվում է: Հե՛շտ է ասել...

— Ի՞նչ կա այս փոսում,—շարունակեց Ռոզան, արհամարհանքով:—Հերի՛ք ինչքան մնացիր:—Այստեղից հեռանալով՝ նորից լույս աշխարհ դուրս կգաս, թե չե հավիտյան պիտի մնաս գավառում: Վորքան ել մարդը աշխատի սպիտակ քաղաք դարձնել սրան, ել՛ կմնա սպիտակ գավառ: Ել չեմ ասում, թե յե՞րբ կարող է սա սպիտակ

քաղաք դառնալ։ Մոռացիր, милая, և իմացիր, որ ես քո թշնամին չեմ։ Ավելի ականջ դիր, ի հարկե, սրտիդ...

Բայց Աննայի սրտում կռիվ կար ու պայքար, և նա սրտի ձայնը հեշտ չէր կարող լսել։ Քանի որ էր նա իրեն զգում էր անդունդի ծայրին. թվում էր բավական է մի անզգույշ քայլ—ընկնելու է. զգում էր, որ կյանքն իր առաջ դրել է մի ծանր խնդիր, որի պիտի լուծի ինքը և որը, սակայն, վեր է իր ուժերից։ Պետք էր այնուամենայնիվ մի բան անել, և դրա համար համարձակություն էր պետք։ Բայց ի՞նչպես հայտնել...Որքան էլ Թոզան ու Միրյանը խորհուրդ էյին տալիս համարձակ լինել—նա այդ համարձակությունը ասես չէր զգում իր մեջ...

. . . .

Բայց Տիգրանի վերջնական բացակայությունը բավական ժամանակ էր, որ նա վորոշեր իր առելիքն ու անելիքը։ Ու անհամբեր սպասում էր նրա վերադարձին։

XIII

Մարդատար գնացքը սլանում էր առավոտյան աղջամուղջը պատռելով և, չնայած գնում էր, հալածական կենդանու նման, սրընթաց, կայարանները մեկը մյուսի յետևից թողնելով, բայց Տիգրանին թվում էր, թե դանդաղ է գնում, թե, յերևի, չի հասնի առավոտյան աշխատանքի ժամին, յերբ աշչեկներն ու Սամսոն Սիմոնիչը գալիս են հրահանգներ ստանալու։ Այդ էր պատճառը, դուցե, վոր վեր էր կենում տեղից և չուտ-չուտ նայում դուրս, տեսնելու վո՛րտեղ են։ Ու պատկերը կարծես միշտ միևնույնն էր։—Միգապատ դաշտերն ու բլուրները պտտվում էյին ջաղացքարի պես, ներքևում փրփրում էր ծանոթ գետակը, սարերը դանդաղ գլորվում էյին խճուղով, ա՛յնքան դանդաղ, ասես չէյին շարժվում, կամ հեռվում բզեզի նման վազվզում էր մի ավտո։ Տեսնում էր ելի ջրերի վրա կախված ուռիներ, նահապետական անգործ ջրաղացներ, վորոնք մի ժամանակ, ով գիտի, հրաշք գյուտ են յեղել աշխարհում, վոր խանդավառել են մարդկանց և մարդիկ յերգել-պարել են նրանց շուրջը... Ելի ուռիներ, ելի ջրաղացներ... Բլուրներ ու պուրակներ...

Յեվ գնացքը հանկարծ չխչխկում է կամուրջի վրա։—Մոտենում են, մոտենո՛ւմ են...—Ահա՛ իրենց լեռները։—Ահա՛ անտառը։—Ահա՛ իրենց դաշտի ակիգ–րը։—Ահա՛ ուղեպահի տնակը։—Ահա՛ սեմաֆորը...

Ահա և կայարանը...

Կառամատույցը, ինչպես միշտ, լիքն է ուղևորներով.—ճամպրուկներ, կապոցներ, կանչեր, համբույրներ, հրոց, հրմշտոց:

Տիգրանը, պորտֆելը թևի տակ, իջնում է. ծանոթներին գլուխ տալով՝ ճեղքում բազմությունը և գնում դեպի կառքերը...

Ահա՛ և իրենց կառքը, ահա՛ և կառապան Մանասը, ինչպես միշտ, անգոտի կարմիր բլուզը հագին, յերեսը չսափրած, մազերի փունջը ճակատին կախ:

— Բարո՛վ, ընկեր վարիչ,—բարևում է առաջինը Մանասը, լայն ժպտով:—Տո՞ւն, թե՞ գրասենյակ...

Մանասը միշտ այսպես է. թեև լավ գիտի, որ յեթե վարիչը գալիս է առավոտյան գնացքով—գնում է ուղիղ գրասենյակ, բայց և այնպես հարցնում է քաղաքավարության համար.— ով է իմանում, ընտանիքով մարդ է, գուցե և տուն ուզեց գնալ: Բայց Տիգրանը, վեց օրվա բացակայությունից հետո, ուզում է իմանալ ի՛նչ է կատարվել, ի՛նչ նորություն կա, գործերն ի՛նչ ընթացքի մեջ են. իր կարգադրությունները կատարվա՞ծ են արդյոք բաղնիսի, մանկամսուրի, հիգրոկայանի մասին: Կամ ստացե՞լ են արդյոք հիվանդանոցի համար պատվիրած ապակիները: Սակայն մինչև գրասենյակ չի համբերում:

— Մանաս, ապակիներն ստացա՞ն:

Մանասի գործը թեև կառքն է, բայց գիտի ի՛նչ է անցնում-դառնում գրասենյակում. բացի այն, որ կառքը միջոց է լինում շատ բան իմանալու,—նա, չէ՞ որ կոլեկտիվի անդամ է, այն էլ, ինչպես տեղկոմ Գեղամն է ասում, «ակտիվ և բոլոր ժողովներին հաճախող անդամ», ուստի թե՛ ժողովներում, թե՛ դրանցից

դուրս՝ Մանասը շատ բան է լսում. աշխատակիցները, պետք է ասած, մտերմաբար են վերաբերվում նրան,—պատահած ժամանակ Մանասը կառքով հյուրասիրում է նրանց և նրանք այնքան բան են պատմում գրասենյակից... Իսկ յերկաթուղով յեկած ապրանքն առանալու համար հո—միշտ Մանասի կառքով են գնում կայարան:

— Ապակինե՞րը ասում ես, ընկեր վարիչ,—կիսով չափ շուռ է գալիս Մանասը նստած տեղը:—Չէ՛, դեռ չկա: Են օրն էլ հընգեր Դավիթն էր զարմանում, թե ինչո՛ւ եսքան վախտ չուշեն ուշացավ:

— Իսկ բաղնիսը բանո՞ւմ է:

— Բաղնի՞սը,—նորից շուռ է գալիս Մանասը:—Հա՛: Յերկու օր ա, ինչ բանում ա: Են օրը, տեսա, կարմիր բանակցիները լողանում եյին:

— Այդ լավ է,—ասում է Տիգրանը ինքն իրեն, գոհ, որ բաղնիսի նորոգումն ավարտվել է:—Իսկ դերանները բե՞րել են:

— Չէ՛, ընկեր վարիչ: Չեն բերել: Յերկու օր առաջ Սամսոն Սիմոնիչը բարկացել եր, որ սայլեր չկան: Գեղացիք կալ են անում, չեն ուզում բանել: Ասում են...

— Թող ֆուրգոններով բերեյին:

— Ֆուրգոնները քար են կրում:

— Այդ չեղավ,—գլուխն օրորում է Տիգրանը:

— Եղպես ա,—ասում է Մանասը մի տեսակ մեղավոր ձայնով, կարծես հանցանքի մի մասն իրենն է, որ գեղացիք կալ են անում և չեն գալիս դերանները կրելու:

Առաջին անգամը չէ, որ Տիգրանին մտահոգություն ու գլխացավանք է պատճառում բանուժի և փո-

խադրական միջոցների պակասը․ քանի անգամ մարդ էր ուղարկել մոտակա գյուղերը՝ աշխատողներ հավաքելու, բայց հնձին ու կալին գնացել էին նորից, կառուցվող շենքերը թողնելով առանց աշխատող ձեռքերի․ և դա պատճառ էր եղել, վոր աշխատանքները դանդաղեն։ Այժմ էլ նույն պատմությունը, ինչ անցյալ, նախանցյալ տարի․․․ Յեվ մի՞թե չեն կարողանալու շինարարության այս տարվա պլանը ժամանակին ավարտել։

— Լավ բան չասիր, Մանաս,—շարունակում է Տիգրանը, մտքի յետևից ընկած։—Ուրեմն ստիպված պիտի լինենք կայարանին ավելորդ փող տալ․․․

Նա խոսքը չավարտեց։ Կառքն այդ ժամանակ անցնում էր մի փողոցով, ուր սպիտակ կրծքագոգնոց կապած քարտաշ վարպետներ ու բանվորներ մայթ էին շինում։ Տիգրանը նայեց նրանց և գլուխն օրորեց դարձյալ․

— Կանգնի՛ր, Մանաս։

Մանասը ձիերը կանգնեցնում է։ Տիգրանը, պորտֆելը թևի տակ, իջնում է և մոտենում վարպետներին։

— Գործն ի՞նչպես է գնում,—հարցնում է նա, ընդհանուր բարև տալուց հետո, մոտեցող տեխնիկին, վոր յերկար, նիհար և առաջ թեքված վզով յերիտասարդ է մի այնպիսի ծաղկատար դեմքով, վոր թվում է վառոդ են կրակել յերեսին։—Շատ դանդաղ եք առաջ գնում,—գլուխն օրորում է Տիգրանը։—Տաս օրվա մեջ պետք է հասած լինեյիք մինչև անկյունը, ընկեր Վարոսյան․․․

Տեխնիկն այդ դիտողությունից վորքան անհարմար, նույնքան և շոյված զգաց, վոր կոմունալ տնտեսության վարիչը գիտի իր ազգանունը, վորովհետև ինքը մի

ամիս էր ինչ ընդունվել էր պաշտոնի։ Սակայն Տիգրանին ճանաչողների համար դա զարմանալի չէր․—նա գիտեր իր բոլոր—հին թե նոր աշխատակիցների անունազգանունը։ Այդ կողմից նրա հիշողությունը զարմացնում էր ընկերներին։

— Այո, ձեր տեմպը պիտի արագացնեք։ Սրանք ի՞նչ ճեղքեր են,—վոտով ցույց տվեց նա մայթի քարերի լայն արանքները։—Չի՞ կարելի սալերն այնպես տաշեն, վոր իրար բռնեն։ Այնպես արեք, վոր հանձնաժողովը բրակ չանի․․․ Յեվ հետո—մինչև օգոստոսի վերջը պիտի պատրաստ լինի․ լավ հիշեք,—ասաց Տիգրանը, դառնալով միաժամանակ և՛ վարպետներին և՛ բանվորներին, վոր հետաքրքրությունից մոտեցել ականջ էին դնում զրույցին։—Մինչև օգոստոսի վերջը, ընկերնե՛ր․․․

Յերկու րոպե անց Մանասը սրընթաց քշում էր կառքը դեպի գրասենյակ, և Տիգրանը նայում էր դարձյալ, թե շինվող տները վորքան են բարձրացել։ Մի տան յերրորդ հարկը վերջացրել էին, մի ուրիշի ներքնահարկը ավարտել, սկսել էին առաջինը։ Իսկ ամենից ուրախալին այդտեղ ա՛յն էր, վոր շատ քար էր կիտված։ Ուրեմն իր բացակայության բավական քար էին կրել։ Բայց նա ավելի ուրախացավ, յերբ քիչ առաջ գնալով, տեսավ մի շարք սայլեր տախտակ են տանում։

— Ո՞ւմ տախտակն է,—հարցրեց կառքից թեքվելով։

— Կոմխոզինը։

Վերջին հանգամանքն այնքան ուրախացրեց Տիգրանին, վոր նա գրասենյակ հասավ բարձր տրամադրությամբ։ Անմիջապես դիվանապետ Դավիթը՝ ուսի մեկը բարձր, մյուսը ցածր, ակնոցի վերևից նայելով,

գրությունների մի կույտ բերեց զեկուցելու: Նա ակնոցը գործ էր ածում կարդալիս, բայց վարիչի հետ խոսելիս՝ իջեցնում էր այն քիթն ի վար և նայում ակնոցի վերից. այն տպավորությունն էր թողնում, թե ուզում է հարու տալ: Դիվանապետի ասածների մի մասը Տիգրանն արդեն լսել էր Մանասից, մի մասը տեսավ ճանապարհին: Յերբ Դավիթը զեկուցելով՝ գրությունները ջոկ-ջոկում էր—Տիգրանը հիշեց «Բարեկամի» նամակը՝ կնոջ և Միրզայի կապի մասին, հիշեց նրա ոտարոտի վարմունքը վերջին անգամ և մտածեց, որ այսօր արդեն, առանց հետաձգելու, պետք է հիմնավորապես խոսել Աննայի հետ: Միաժամանակ մտաբերեց որ յերեխաների համար բան չեր առել.—բայց, ոչինչ, տուն գնալիս խաղալիքներ կառնի... Դիվանապետից հետո յեկավ Սամսոն Սիմոնիչը, ելի հին չեսուչա պիջակը հագին, յերկրորդ պենսնեն կրծքին, կծղած, չորացած մազերը դեմքին. տարօրինակ է—կան մարդիկ, որոնց միրուքը բուսնող, աճող տպավորություն է անում. Սամսոն Սիմոնիչինն ընդհակառակը. նրա միրուքն այնպիսի յեր, թվում եր դրանք անկենդան մազեր են—բուսել են և անսնունդ չորացել: Նա պատմեց, թե ինչ դրության մեջ է քաղաքի շինարարությունը, խոսեց հատկապես այն մասին, որ գյուղերից յեկած աշխատավորները շարունակում են գնալ իրենց դաշտային աշխատանքներին, և գործերը մնում են... Իր հերթին Տիգրանը թե՛ դիվանապետին, թե՛ գլխավոր ինժեներին հայտնեց հատակագծի շուրջն յեղած զրույցները:

Սամսոն Սիմոնիչն ուրախացավ:

— Գո՛հ եմ, շատ գո՛հ եմ,—ասավ նա:—Հատակագիծը լավն էր. ի հարկե, չեյին կարող չընդունել:

Ապա Տիգրանը գնաց քաղխորհրդի նախագահի մոտ

զեկուցելու իր գործուղման արդյունքի և ուշանալու պատճառների մասին:

Ընկեր Մարութը քաթանե սպիտակ բլուզը հագին, յեղջերյա սև շրջանակով ակնոցը դրած ինչ-որ թղթեր եր կարդում: Այդ մարդը, որ առաջ խառատ եր յեղել մեխանիքական գործարանում և մի քանի տարի յեր ինչ «առաջ եր քաշվել» հասարակական աշխատանքի և յերկու տարի յեր ինչ քաղխորհրդի նախագահ եր ընտրված,—առաջ ակնոցի հետ գործ չեր ունեցել,—հիմա՝ ակնոցի ապակերն ականջներին անցրած՝ շարունակ կարդում եր՝ տանը քաղաքական գրքեր, հիմնարկում՝ ամենատարբեր գրություններ: Նա այն կարծիքի յեր, որ թեև կարդալը «ծանր բան ա», բայց ինտելիգենտներից յետ չմնալու համար պետք եր կարդալ: «Փոխանակ ուրիշից լսելու, ինքս կկարդամ, կսովորեմ»,—ասում եր հաճախ: Յեվ նրան ճանաչողների կարծիքով՝ այժմ ընկեր Մարութի վոչ միայն մտքերն եյին հարստացել, ճոխացել, այլև բառապաշարը: Այդ նկատում եր ինքն ել. հիշում եր, որ առաջ մտքերը վորոշ արտահայտելու համար դժվարանում եր բառեր գտնել, նախադասություններ կապակցել, բայց հիմա խոսքերը դասավորվում եյին հեշտությամբ կամ, ինչպես ինքն եր ասում և «իրենց-իրենց», թեև խոսում եր դարձյալ մեծ մասամբ բարբառով, որը, վոմանց ասելով, առանձին «համ» եր տալիս նրա խոսքին:

Տիգրանին տեսնելով՝ նա ակնոցը վերցրեց.

— Հա, բալամ, տղա՞ յես թա՞ աղջիկ,—ասաց նա չեչոտված ակցենտով:— Դեմքիցդ յերևում ա տղա յես:

— Բայց քիչ եր մնում աղջիկ դարձնեյին,—պատասխանեց Տիգրանը նստելով:

— Վա՛հ, վա՛հ… Եդ վո՞նց: Պատմի տեսնանք:

Երբ Տիգրանը պատմեց հատակագծի գլխով անցածը՝ նախագահը հանգստացած շունչ քաշեց:

— Եդ վոչի՛նչ… Լավ ա ծախսներս չի կորել: Եդ բոլորը թող անեն, համաձայն ենք. միայն թե բրակովատ չանեն… Հիմի լսիր, ես բոլեյքս գավկոմից կանչեցին—գնանք տեսնանք հինչ են ասում: Լավա յեկար, թե չէ մենակ պիտի մնայի…

Գավկոմը խորհրդակցություն էր հրավիրել քաղաքի գործերի մասին, ավելի շատ ուզում էր զեկուցում լսել, թե ինչպես է ընթանում քաղաքի շինարարությունը: Տիգրանը զեկուցեց, պրոֆիլից հանելով թվական տվյալներ կոմունալ տնտեսության արածների և անելիքների մասին: Չմոռացավ, ի հարկե, քաղաքի համար մի այնպիսի նշանավոր հանգամանք, ինչպիսին հատակագիծն էր: Լսելով՝ հատակագիծը քննադատվել է «վորոշ չափով»—նրան դիտողություն արին, թե ինչու կոնկուրս չեն հայտարարել հատակագծի համար, թերևս ավելի լավն ունենայինք… Իմիջի այլոց՝ պարզվեց այստեղ, վոր Գասպարը (յերկու ընկերոջ հետ) իր կուսակցական պարտքն էր համարել գավկոմին հայտնել, թե կոմունալ տնտեսությունը վատնումներ է կատարում, ֆանտաստիկ ծրագրեր է կազմում և քաղաքը քանդում առանց հաշվի: Ընկերներից մեկը հիշեց այս իր ճառում, բայց վոչ-մեկը չանդրադարձավ դրան: Զեկուցումից հետո ել՝ ընկերները տարան Տիգրանին 2-րդ խորհրդային ճաշարանը, վորովհետև ճաշից հետո լսելու եյին արտակարգ զեկուցում կուսդծով, ուր նրա ներկայությունը ևս անհրաժեշտ էր:

Այդ էր պատճառը, վոր Տիգրանը այդ որն էլ տուն յեկավ շատ ուշ: Յեվ յերբ հոգնած մտենում եր տա-

նը—հիշեց, վոր յերեխաների համար խաղալիք պիտի առներ, հիշեց և ձեռը խփեց ճակատին:

— Չեղա՛վ, ելի չեղա՛վ…

Հիշեց կրկին և «Բարեկամի» նամակը, և Աննայի նյարդային զրույցը մեկնելու որը: Չէ, այսոր պիտի անպատճառ խոսել—մտերմաբար, ընկերաբար: Պետք է իմանալ նրա ջղայնության պատճառը, ցանկությունները և առաջարկել, խորհուրդ տալ, վոր դուրս գա հասարակական աշխատանքի… Այն ժամանակ չի ձանձրանա. թե չէ տանը նստած—մարդ վո՛չ կզարգանա, վո՛չ էլ կարող է կտրվել անցյալի տրադիցիաներից:

Այնուամենայնիվ ուրախ-ուրախ մտավ ներս, բայց պառավ Բուրաստանից բացի ուրիշի չտեսավ—յերեխաները քնած եյին, Աննան տանը չեր:

— Են ներկածի հետ գնաց, դեռ չի յեկել,—ասավ Բուրաստանը դժգոհ ու փոքր ինչ ասես բարկացած, և Տիգրանը չիմացավ «ներկածի՞» վրա յե բարկացած, թե՞ Աննայի:

— Իսկ «ներկածը» ո՞վ է,—հետաքրքրվեց Տիգրանը:

— Են մազերը կտրածը,—շարունակեց Բուրաստանը նույն բարկացած, դժգոհ յեղանակով:—Բոզա ա, ինչ ա…

Տիգրանը ծիծաղեց:

Բայց նրա այդ ծիծաղը Բուրաստանին դուր չեկավ: «Կնիկը տանից դուրս ա ընկել, ինք ծիծաղում ա»,—ասաց պառավը մտքում ու յերեսը շրջեց:

Յեվ նրա յեփած խնձորի նման կնճռոտ դեմքը մթնեց բարկությունից:

XIV

Նոր էր Տիգրանն անցել իր առանձնասենյակը և նստած ինչ-որ թուղթ էր կարդում լուսամփոփի տակ, յերբ քայլերի ձայն լսեց կից սենյակից.—ճանաչեց. Աննայի քայլերն էին, բայց տարօրինակ փութկոտ: Ապա լսեց, թե ինչպես նա ինչ-որ բան հարցրեց Բուրաստանից, և Բուրաստանը պատասխանեց դժգոհ. «Հա. քիչ առաջ յեկել ա»... Տիգրանը յեզրակացրեց, որ խոսքն իր մասին է, և սպասեց, թե արդյոք Աննան առաջվա պես կգա՞ ներս, կհետաքրքրվի՞ իր ճամբորդությամբ, գործերով: Յեվ նրան այնպես էր թվում, թե յերևի չի գա, վերջին անգամ թույլ տված խոսքերի ամոթից. բայց գուցե՞ և դա այդ անախորժությունը մոռացնել տալու համար: «Չե, յերևի, չի գա»—մտածում էր Տիգրանը և զարմանում, թե ինչպես յերբեմն մարդիկ սեփական անտեղի խոսքերով կաշկանդում են իրենց: Սրա հետ միասին Տիգրանը մտածում էր և այն մասին, թե յեթե գա ի՛նչպես սկսի ասելիքը, ի՛նչ խոսքերով, որ Աննան չվիրավորվի:

Այս մտքերով էր զբաղված Տիգրանը, յերբ առանձնասենյակի դուռը բացվեց հանկարծ: Ներս մտավ Աննան տարօրինակ, անսովոր փութկոտ, շփոթ քայլերով:

— Կարե՞լի յե,—ասավ նա դռան մոտից:

Այդ հարցը և այն արտասանելու յեղանակը նույնպես տարօրինակ թվաց Տիգրանին: Յե՞րբ է թույլ-

տվություն խնդրել, որ հիմա խնդրում է և ինչո՞ւ այդ յեղանակով,—մտածեց նա, ասելով.

— Ի հարկե, կարելի յե:

— Կարևոր բան ունեմ: Ժամանակ ունե՞ս:

— Դա ի՞նչ խոսք է,—զարմացավ Տիգրանը:

— Դե առհասարակ դու ժամանակ չես ունենում,—շարունակեց Աննան նույն յեղանակով, դեմքն ու ձայնը փոքր ինչ ծամածռելով:

Տիգրանն զգաց հանդիմանությունը և Աննայի արտասովոր խռոխտ, կարելի յե ասել, ռազմական տոնը:

— Ամենից առաջ նստիր,—ու Տիգրանը պատրաստակամ մի կողմ հրեց առջևի թղթերը, աչքը գցելով Աննայի այլայլված դեմքին, որի վրա ինչ-որ վճռականություն և անհաշտություն նկատեց միաժամանակ:

Յեվ մինչ Աննան ամառային շրջազգեստի փեշերը ծնկների վրա ուղղելով, կնստեր—Տիգրանը մտածեց, որ այս լավ յեղավ, ինքն էլ, վերջապես իրենը կասի:

— Հիմա ասա տեսնեմ,— սկսեց Տիգրանը հանաքի տալով:

Նա ուզեց հեղնել կնոջ ռազմական տոնը և զգացնել տալ, որ դա նրան չի սազում:

Բայց Աննան ուշ չդարձրեց դրան:

— Յես ուզում եմ առանց յերկարացնելու,—ասավ նա լուրջ, առանց մարդու յերեսին նայելու:

— Ասա՛:

— Ինչպես տեսնում եմ, յես այլևս... Ուզում եմ պարզ ասել, որ յես այլևս...

«Յերևի ուզում է հանդիմանել վորևէ բանի համար»,—մտածեց Տիգրանը տարակուսանքով: Բայց բոլոր ժամանակ մի արտասովոր զգացում կար ներսը, թե Աննան ինչ-որ ուրիշ տեսակ է.—բերանի անկյուննե-

րում արհամարհոտ սառը ծալքեր, նայվածքը խուսափուկ ու տարօրինակ: Տիգրանին թվում էր, թե նա տակավին շարունակում է այն օրվա դժգոհությունը: Յեվ վորովհետև Աննան առաջին խոսքերն ասելով՝ կանգ առավ, Տիգրանը նկատեց դարձյալ հեգնանքով.

— Շարունակի՛ր, Աննա, շարունակի՛ր տեսնենք:

— Շարունակե՞մ: Լավ: Յես ուզում եմ ասել, վոր յես այսպես... այս պայմաններում այլևս... ապրել...

Նա նորից կանգ առավ: Նա ամեն ինչ մտածել-ձևակերպել էր մի քանի օր առաջ. վորոշել էր Տիգրանին ասել բոլո՛րը, ի՛նչ կա սրտում, ի՛նչ հիշում է, ի՛նչ վճռել է, բայց հարկավոր խոսքերը կարծես մոռացվում էին:

Տեսնելով Աննան դժվարանում է, Տիգրանն ինքն սկսեց.

— Գիտես, Աննա, յես նույնպես քեզ հետ խոսելու բան ունեմ,—և Տիգրանը հոնքերի տակից նայեց կնոջը:—Յես նույնպես զգում եմ, վոր դու այսպես, այսպիսի պայմաններում չպիտի ապրես... Զգում եմ, այո, վոր յես վորոշ չափով մեղավոր եմ քո առաջ... Մեղավոր եմ, վոր թողել եմ տանը և դու, այսպես ասած, հեռու յես մնացել հասարակական կյանքից. ու դրա հետևանքը յեղել է ա՛յն, վոր դու այդպես... ձանձրույթ և այլն, հասկանո՞ւմ ես... Բայց հիմա, կարծում եմ, ժամանակն է, վոր ապրես դրսի, այսինքն հասարակական կյանքով, աշխատանքով: Դա քեզ համար, կարծում եմ...

— Արդեն ուշ է,—ընդհատեց Աննան գլխի արագ շարժումով:

— Ինչո՞ւ:

— Վորովհետև յես այլևս այս տանն ապրելու չեմ:

— Ինչո՞ւ:—Տիգրանն աչքերը գցեց նորից նրա չեկնած յերեսը:

— Վորովհետև... վորովհետև չե՛մ կարող և... չե՛մ ուզում,—շարունակեց Աննան, զգալով միաժամանակ, վոր չի կարողանում կապակցված խոսել, վոր նախապատրաստած ասելիքը չքացել է մտքից և ինքը տարվում է տարերային զգացումների հոսանքով:—Չե՛մ ուզում: Հերի՛ք է...

— Այսի՞նքն, հարցրեց Տիգրանը հանդարտ, դանդաղորեն, զգալով, վոր կինն արդեն ավելի լուրջ բան ունի ասելու, քան յենթադրում էր:

— Այսի՞՛նքն... Ել չեմ ուզում քեզանից թաքցնել... չեմ ուզում քեզ խաբած լինել: Դա իմ կողմից կլիներ գողություն, ստորություն...

Աննան լռեց մի վայրկյան, աչքերն իր ծնկանը հառած, ապա շարունակեց ավելի վճռական:

— Յես այս վորոշել եյի վաղուց, բայց հայտնում եմ հիմա, վոր իմանաս...

— Ի՞նչը:

— Այն, վոր յես այլևս չեմ կարող ապրել քեզ հետ,—ասավ մի տեսակ ճիգով, վորից հետո իրեն ասես կապանքից ազատ զգաց:—Այո, չեմ ուզում թաքցնեմ. սիրում եմ Միրյանին և... կապված եմ նրա հետ...

«Ուրեմն նամակը ճիշտ էր»,—ասաց Տիգրանը մտքում, գլուխը կախելով և ձեռը գլխի մազերի մեջ խրելով:

Աննան, սակայն, իր վերջին խոսքերն ասելուց հետո, կարծես նոր համարձակություն զգաց մեջը և նայեց, թե ինչ տպավորություն արին նրանք: Նա սպասում էր, վոր իր հայտնությունը զարմանք ու զայրույթ կպատճառի Տիգրանին, վոր նա կբռնկի, ծանր խոսքեր

կասի: Բայց Տիգրանի դեմքը հանդարտ էր, շուրթերն էին միայն իրար հպած:

— Յես այդ բոլորը գիտեմ, Աննա,—գլուխը բարձրացրեց Տիգրանը:—Այդ յես գիտեյի:

Աննայի գլուխը դողաց:

— Գիտեյի՞ր,—հարցրեց մեքենայորեն ու գրեթե վախով:

— Այո... Բայց դու շարունակիր:

Աննան լուռ է:

— Ուրեմն այդպես,—նրա փոխարեն շարունակեց Տիգրանը,—վորոշել ես գնալ... Что-ж... Յեթե դա հաստատ վորոշում է—հակառակել չեմ կարող.... Ազատ ես, ի հարկե, անելու, ինչ ուզում ես... Կաշկանդել չեմ կարող...

Ու գլուխը կախեց իր թղթերի վրա:

Տիգրանի այդ հանգիստ վերաբերմունքը տարորինակ թվաց Աննային: Նրա համար կարծես միևնույն էր—ինքը կերթա, թե կմնա: Այդ անտարբերությունը Աննան այնպես բացատրեց, վոր մարդն իրեն անպետք է համարում այլևս և ուզում է, յերևի, իրենից ազատվել: Նա հոնքի տակից նայեց նրա կիսով չափ լուսավորված, կիսով չափ ստվերոտ դեմքին: Բայց Տիգրանն էլ գլուխը չբարձրացրեց—այնպես խորասուզված էր թվում թղթերի մեջ: Այնինչ Աննան ուզում էր, վոր նա խոսի—դատապարտի իր քայլը կամ հանդիմանի: Նա իրենց բացատրությունը համարում էր չվերջացած: Նա սպասում էր վերաբերմունքի: Ուզում էր, վոր Տիգրանը մի խոսքով, մի շարժումով զգացնել տա, վոր զայրացած է կամ... կամ... չի դատապարտում... Մի խոսքով՝ Տիգրանի լռությունը, նրա հանգիստ խոսքերն ու մեղմ շարժումները—Աննային թվացին արհամարհանք դեպի

իրեն, դեպի իր դրությունը: Նա կուզեր, վոր Տիգրանը հակառակեր, հանդիմաներ իրեն, բացատրություն պահանջեր: Ու չհամբերեց:

— Ի՞նչ կասես ուրեմն,—հարցրեց նա, առժամ լռությունից հետո, և նրա մատները խաղացին ծնկան վրա:

— Ի՞նչ,—գլուխը բարձրացրեց Տիգրանը:—Կարծում եմ քո վորոշումից հետո յես առանձին ասելիք չեմ կարող ունենալ: Իսկ յեթե ցանկանում ես մի բան ասեմ իբրև վերջին խոսք, այսքանը կարող եմ ասել:—Կուզեյի միայն, վոր դժբախտ չլինես...

Այս անգամ Աննան նրա ձայնի մեջ զգաց հոգատարություն և ուրիշ մեղմ մի բան, վոր իրեն բացատրել չկարողացավ, բայց հիշեց, վոր դա նման էր առաջին որերի Տիգրանին, ուստի չփոթվեց ու չիմացավ ինչ ասել:

— Բացի դրանից,—փոքր լռելուց հետո ասավ Տիգրանը նույն մեղմ, հանդարտ ձայնով,—կուզեյի իմանալ ինչո՛ւմն է իմ հանցանքը, վորպես մեղադրյալ:

— Վորպես մեղադրյա՞լ...

— Այո:

— Վորպես մեղադրյա՛լ... վորպես մեղադրյալ...—կրկնեց Աննան և հանկարծ ձայնը բարձրացրեց:—Բայց ինչո՞ւ յես ինձ հետ այդպես խոսում:

— Ինչպե՞ս:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ...

Աննան ուզում էր ինչ-վոր խիստ բան ասել, բայց դարձյալ չկարողացավ:

— Շարունակի՛ր, Աննա, շարունակի՛ր: Յես լսում եմ: Ի՛նչ ունես ասա,—ասաց Տիգրանը հանդարտ, արդեն հաշտված, վոր կնոջ վորոշումն անդարձ է:

— Բայց ինչո՞ւ ես ինձ տանջում,—բռնկեց հանկարծ Աննան, վոտի կանգնելով, արտասուքները հազիվ զսպելով:

— Ի՞նչպես, յե՞րբ...

Աննան այլայլված, հանգիստ գլուխը ուղղեց ծնկների վրա:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ ինձ հետ այդպես... այդպես մեղմ ես խոսում...

— Հապա ինչպե՞ս: Ուզո՞ւմ ես բարկանամ... Ի՞նչ իրավունքով... հը՞...

Պատասխանի փոխարեն՝ Աննան հանկարծ բռունցքը խփեց ծնկանը, ծուլ յեղավ տեղից և—անսպասելի—դուրս վազեց մի այնպիսի արագությամբ, վորից Տիգրանը յենթադրեց, թե գնաց ինչ-վոր բան բերելու. բայց վորքան մեծ յեղավ զարմանքը, վոր նա էլ չվերադարձավ:

Պառավ Բուրաստանը, վոր այդ ժամանակ թեյ եր պատրաստում ամուսինների համար տեսավ, թե ինչպես Աննան դուրս յեկավ մարդու մոտից, կանգնեց սեղանատանը, մի վայրկյան հենվեց սեղանին ու ապա նետվեց ննջարան:

Տիգրանն սպասեց նրան մի ժամ, յերկու ժամ—Աննան չվերադարձավ:

Ուրեմն վորոշումն անդարձ է: Այլես կարիք չկա խոսելու: Ու ընկավ մտածումների մեջ:

XV

Իր սենյակը գնալով՝ Աննան անվերջ կրկնում եր մտքում.

— Պե՛տք է գնալ, պե՛տք է գնալ: Հերի՛ք է....

Յեվ առաջին օրն իսկ—հենց մյուս առավոտյան սկսեց ինչ-վոր պատրաստություն տեսնել: Բուրաստանը յերեխաներին հագցնելիս նկատեց, վոր նա հագուստներ, իրեր է հավաքում ու դարսում պայուսակներում: Յեվ այդ մի տեսակ անհանգիստ, բարկացած: Հետո կարծես թողեց ու սկսեց ջղային քայլերով յերթևեկել սենյակում: Այդ օրը—վո՛չ թեյին, վո՛չ ճաշին—դուրս չեկավ մարդու յերեսը: Յերկրորդ օրը նույնպես: Բուրաստանը նկատեց, վոր նա ասես խուսափում է յերեխաներից էլ և իր հետ նույնպես չի ուզում խոսել: «Ով գիտի մարդու հետ կռվել ա»,—մտածում եր պառավը, հիշելով իրիկվա նրա տարօրինակ տեսքը»· «Բայց ինչո՞ւ յե շորերը հավաքում դարսում»,—տարակուսում եր նա ու բան չեր հասկանում: Առավոտը Տիգրանը ժամանակ չունեցավ, գուցե և անհարմար համարեց հետաքրքրվել նրանով. իսկ ճաշին նրա այն հարցին՝ «ո՞ւր է տիկինը», Բուրաստանը պատասխանեց.

— Քեփ չունի:

— Պառկա՞ծ է:

— Չե:

— Ի՞նչն է ցավում:

— Ձիտեմ։

— Բժշկի կարիք կա՞։

Բուրաստանը բացատրեց, որ բժշկի կարիք չկա, փորովհետև պառկած չի, այլ «ուրիշ թավուր ա»։ Տիգրանը մեկ մտածեց՝ անցնել մոտը, մե՛կ էլ վորոշեց, թե քանի վոր պառկած չէ—նշանակում է լուրջ բան կա։ Մյուս կողմից յենթադրեց, թե հավանաբար հուզված է, ուրեմն, իրեն տեսնելով, ավելի պիտի դրդըռվի... Ու չգնաց։ Նույնը յերկրորդ որը։ Հետաքրքրվեց միայն ինչպես է, և իմանալով նույն դրության մեջ, մտածեց, վոր ամեն ինչ վերջացած է, յերևի, և չի ուզում այլևս իր յերեսը տեսնել։ Բուրաստանը զարմացել զարմանում ու չէր հասկանում, թե ինչո՛ւ չի ուզում մարդու յերեսը դուրս գալ, ինչո՛ւ է ասում, վոր մարդ չթողնի մոտը։ Հետո տարօրինակ էր թվում, վոր օրը մի քանի անգամ կարգադրում էր. «յերեխաներին տար ման ածա»... Ուզում էր մենակ լինել... Մի յերկու անգամ էլ Բուրաստանը նկատեց, վոր «տիկինը» լաց է լինում։ «Սրանց բանը մարդ չի հասկանում»,—մտածում էր պառավը և յենթադրում, վոր այստեղ մի փառ բան կա։ Չէր կարծում, թե Տիգրանը նրան վիրավորեր,—մինչև հիմա այդպես դեպք չէր պատահած,—բայց յենթադրում էր, թե գուցե հանդիմանել է,—ինչու տանը չի նստում, յերեխաներին նայում... Մյուս կողմից յենթադրում էր, թե չլինի Ռոզան մեղք ունի այս բոլորի մեջ։ «Ախ, էն մաղը կտրածը»— գլուխը թափ էր տալիս պառավը, ու խոսք չէր գտնում իր զայրույթն արտահայտելու, բացի իր սովորական անեծքից. «հողեմ ներկած գլուխդ»...

Յերկրորդ թե յերրորդ օրը յեկավ Ռոզան։ Բուրաստանը հանդիպեց նրան դռների մոտ, աստիճանների

ներքևը, ա՛յն ժամանակ, յերբ ինքը դույլերը ձեռին ջուր էր տանում վեր։

— Աննան տա՞նն է,—հարցրեց Ռոզան արագ-արագ։

Բուրաստանը, նախքան պատասխանելը, դույլերը դրեց ցած՝ սանդուխի փայտի աստիճանին, և ձեռը կանթեց մեջքին։

— Ի՞նչ կա վոր,—հարցրեց դժկամ։

Ռոզան զարմացած լոռնետն ուղղեց նրա կողմը։

— Այդ քո բանը չէ՛։ Դու հարցիս պատասխանիր, տա՞նն է թե վոչ։

— Վո՛նց իմ բանը չի։ Տանն ա, բայց ժամանակ չունի...

— Այդ քո բանը չի—ունի՞ թե չունի։

Յեվ Ռոզան, շորերը խշխշացնելով, ուզեց բարձրանալ վեր։ Բայց Բուրաստանը, փոխանակ ճանապարհ տալու, մյուս ձեռն էլ կանթեց մեջքին, կանգնեց դույլերի առաջ և մարմնովը դրեթե փակեց ճանապարհը։

— Ասել ա՝ մարդ չթողնես...

Ռոզան չլսեց. բարկացած հրեց նրան դեպի պատն ու անցավ առաջ։

— Кухарка несчастная!

«Կուխարկա» «բառից Բուրաստանը պայթեց, և նա սրտումը կուտակած ատելությունը, վիրավորանքն ու զայրույթը դրեց մի յերկու բառի մեջ.

— Կուխարկեն էլ ես, մի բան էլ ավել։ Անամո՛թ...

Ռոզան յետ դարձավ զայրացած, ուզեց ինչ-վոր բան ասել, բայց զսպեց իրեն. վրդով ու կարմրած մտավ Աննայի մոտ և դեռ շեմքից.

— Սա ի՞նչ խայտառակություն է,—բացականչեց։
—Սա ի՞նչ անամոթ աղախին ունես։ Вообрази, չէր ուզում ներս թողնի, ու խոսում է ավել-պակաս։ Это

возмутительно, милая! Վո՞նց ես դրան պահում։ Мерзавка!

Նա ռեդիկյուլը նետեց մի կողմ, լոռնետը ձեռն առավ ու սկսեց ջղայնորեն բաց ու խուփ անել։ Դեռ չէր կարողանում հանգստանալ։

— Իսկ դու, милая, սա մի տեսնեմ, ինչո՞ւ չես յերևում։ Հը՞։ Ի՞նչ է պատահել... Տխուր ես կարծես և դեմքդ էլ бледноватый է։ Հիվանդ հո չե՞ս։ Հը՞.... Ինչո՞ւ յես լռում...

...... Աննան ասեմ...

— Վոչինչ... Այնպես,— ...

— Այսի՞նքն։ Հիվանդ ե՞ս, ինչ։

— Վոչ հիվանդ, վոչ առողջ...

Ռոզան ուսերը թոթվեց և լոռնետով նայեց նրան վոտից-գլուխ։

— Հապա ինչո՞ւ չես յերևում... Իսկ այդ ի՞նչ է։ Ելի նախկին կերպարանքդ. կարծես փոխել են քեզ... Նո՛ւ... Բայց այդ մի կողմ։ Միրյանը շատ անհանգիստ է։ Այսօր յեկել է, թե իմացեք, խնդրեմ, ի՞նչ է պատահել Աննա Անտոնովնային։ Յերեք օր է ասում է, չի յերևում։ Զլինի, ասում է, հիվանդ է կամ վորևե բան է պատահել... Նա ինքն անհարմար համարեց գալ։ Понятно. խնդրեց բարևել և իմանալ ի՞նչ կա... Դու ինչո՞ւ այդպես լուռ ես, տարօրինակ։ Բացատրվեցի՞ր մարդուդ հետ։ Հը՞։

— Ռոզա, խնդրում եմ, թող այդ,— գլուխը բարձրացրեց Աննան։

Ռոզան ուսերը վեր քաշեց դարձյալ։

— Ուրեմն ыт еще не решилась։ Հը՞... Ну, какая ты, еи богу, трусиха! Թե՞ յերեխաների հարցն է դժվարանում։ Հը՞.... Յերեխաներիդ չի տալիս գույե։ Հը՞... Յեթե այդպես բան կա—նա իրավունք չունի։

Մեկը по крайней мере քեզ կհասնի... Թե՞ չես ուզում կավով լինի։ Այդ դեպքում թող ու գնա։ Ավելի լավ, ազատ կլինես...

— Ռոզա, դարձյալ խնդրում եմ, այդ մասին մի՛...

— Ինչո՞ւ։ Զլինի՞ կոպիտ վերաբերվեց կամ վիրա-

վորեց քեզ։

— Վոչ։ Ընդհակառակը...

— Ուրե՞մն,— տարակուսած հարցրեց Ռոզան, ըն-

կերուհու ասածի մեջ տրամաբանություն չտեսնելով։

Յեթե Աննան բացատրվել է և Տիգրանը նրան չի վիրա-

վորել, այլ «ընդհակառակը»․ուրեմն էլ ի՞նչ կա։—Բայց

դու նրան, այսինքն Միրյանին պետք է, վերջապես, մի

պատասխան տա՞ս, милая, թե՞ վոչ։ Մի մոռանար,

վոր նա քեզ սպասում է...

— Ռոզա, խնդրում եմ,— ասավ Աննան դժվարու-

թյամբ։—Մի հիշիր... Յես ուզում եմ մոռանալ բո-

լորը...

— Յես քեզ չեմ հասկանում,— յերրորդ թե չոր-

րորդ անգամը ուսերը թոթվեց, ավելի շուտ ուսերն

ականջներին մոտեցրեց Ռոզան։—Ты просто не поня-

тна!... Բարի յեղիր հասկացրու, թե ինչո՛ւ մոռանամ,

ինչո՛ւ չհիշեմ...

Իմ հարցերին կարգին պատասխան չստանալով՝ Ռոզան դուրս յեկավ ընկերուհու մոտից, մտածելով, վոր Աննան «մարդ չի դառնա», այնպես է խրվել գավառական ճահիճը, վոր չի համարձակվում ինքնուրույն մի քայլ անել։ Թե՞ մարդն սպառնացել է... ու այդ սպառնալիքի վախից իրեն կորցրել է... Զե՞ վոր կան ամուսիններ, մտածում եր նա, վոր տարճանակ են քաշում կնոջ վրա... Մի խոսքով. ինչ ասես կարող է պատահել...

Այն ինչ Աննան, նրա գնալուց հետո, իրեն այնպես զգաց, ինչպես համառ քննչից ազատված մեղադրյալ: Մարդկանց ներկայությունը վրդովում էր նրան. չէր կարողանում ամփոփել մտքերը և թափանցել կատարվածի խորության մեջ. իսկ նրան թվում էր, թե կատարվել է ահավոր մի բան իր կյանքում... Մյուս կողմից իրեն սաստիկ ճնշված էր զգում այն վերաբերումից, որ ցույց տվեց Տիգրանը... Նա սպասում էր բռնկում, զայրույթ, հայհոյանք... Բայց Տիգրանը ո՛չ միայն դեմ չեղավ իր ցանկության, կամքին, այլև.... այլև հայտնեց, որ այդ իրեն հայտնի յե յեղել... Հայտնի՛ յե յեղել... Ուրեմն հայտնի յե յեղել ու վոչինչ չի արել... չի հեռացե՞լ... չի՞ խանդել... Այս հանգամանքը ճնշում էր նրան... Ցեվ այդ բոլորը թվում էր մեծահոգությունից վեր մի բան... Աննային ճնշում եյին նաև նրա հոգատար խոսքերը և նրա այն հարցը, թե վո՞րն էր իր՝ Տիգրանի հանցանքը, ինչո՞վ է մեղադրվում և ինչո՞ւ...

Աննան պատասխան չգտավ այդ հարցերին: Պատասխան չէր գտնում և հիմա: Առաջ, որ կարծում էր, թե յեթե ինքն այսքան տարի զուրկ է յեղել հաճույքներից, վայելքներից կամ չի ապրել հետաքրքրական կյանքով—պատճառը Տիգրանն է,—հիմա սակայն, մի քանի որ մտածելով, հարց էր տալիս ինքն իրեն, թե մի՞թե Տիգրանն ինքը վայելքների, հաճույքների մեջ է յեղել: Չե՞ որ շատ որ, գործի մեջ, չի՛ ճաշել, չի՛ ընթրել... Ինքն իրավացի կլիներ, մտածում էր Աննան, յեթե Տիգրանն ինքն ապրեր լավ, իրեն պահեր վատ... Ցեթե ընկներ ուրիշ կանանց յետևից, որերն անցներ քեֆերի և որգիաների մեջ—ա՛յ այն ժամանակ, ինքն իրավացի կլիներ... Բայց Տիգրանը, գործի մեջ,

ժամանակ չի ունեցել և չունի վոչ միայն ընտանիքով, յերեխաներով, այլև հենց ինքն իրենով զբաղվելու:—Մի՞թե սա հանցանք է,—հարց էր տալիս Աննան:—Մեզ նվիրվելով գործը չէր տուժի արդյոք... Ցեվ դա մի՞թե լավ կլիներ հենց իր Աննայի համար, յեթե ասեյին, թե Տիգրանը պարտաճա՛նչ է, անպարտաճանա՛չ... Ցեվ մի՞թե դա պատիվ կբերեր...

«Ի հարկե, վոչ»—պատասխանում էր Աննան և դարձյալ հարց էր տալիս ինքն իրեն, թե մի՞թե չկան մարդիկ, վորոնք և՛ իրենց գործն են կատարում լրիվ, պարտաճանաչ են աշխատանքի մեջ, և՛ միաժամանակ նվիրված են ընտանիքին... Բայց արդյոք նրանք այսպես կվերաբերվեյին իրենց դավաճան կնոջը...

Մտածելով այս բոլորի մասին՝ Աննայի մեջ ցանկություն էր զարթնում նորից խոսել Տիգրանի հետ: Բայց ի՞նչ ասել և ի՞նչպես ասել... Ու չէր կարողանում վորոշել վոչ ասելիքը, վոչ էլ մեջը համարձակություն էր տեսնում այդ անելու: Նորից, ինչպես առաջ, քաշվում էր յերես առ յերես խոսել: Բայց, իր սենյակում փակված, լսում էր, թե ի՛նչպես է Տիգրանը գնում գործի, վերադառնում, ի՛նչպես է խոսում Բուրաստանի հետ.—հետաքրքրվում է յերեխաների ախորժակով, խաղով, հետաքրքրվում է իրենով: Բուրաստանն իր մասին ասում էր այն, ինչ ինքը պատվիրել էր.—քիչ տկար է զգում:

— Հիմա ինչի՞ց է գանգատվում,—հարցնում է Տիգրանը:

— Չիտեմ:

— Պառկա՞ծ է:

Բուրաստանի փոխարեն պատասխանում է փոքրիկը—Կարլենը:

— Չե, պապա, մաման պառկած չի. բայց լաց ա ըլլում... Տարելի ա գլուխը ցավում ա՞...

Աննան կեղծ դրության մեջ եր զգում իրեն: Այսպես շարունակել չի կարելի, մտածում եր նա, պետք ե մի բան անել... Այս բոլորից հետո Տիգրանը, գուցե, չի ել ուզում, վոր ինքը մնա տանը: Գուցե նա հետաքրքրվում ու հարցեր ե տալիս ձևի համար միայն, Բուրաստանին առիթ չտալու ինչ-վոր յենթադրություններ անելու:

«Վոչ, այսպես չի կարելի,—ասում եր նա ինքն իրեն,—յես շատ անվճռական եմ: Պետք ե մի բան անել»...

Յերկրորդ թե յերրորդ որը նա Բուրաստանից խնդրեց՝ Տիգրանի թանաքն ու գրիչը բերել իր սենյակը:

Պառավը կատարեց նրա խնդիրը, և այնուհետև քանի դռան արանքից նայում եր ներս, տեսնում եր միայն, վոր Աննան իր գրքի սեղանի վրա կռացած՝ գրում ե-ջնջում, գրում ե-պատռում... Պառավը զարմանում եր, ինչո՞ւ յե գրում, ինչո՞ւ յե պատռում: Նա առաջին անգամն եր այդպես բան տեսնում...

Գրեց Աննան այդպես մինչև յերեկո, և յերեկոյան ծրարած մի նամակ տվեց Բուրաստանին:

— Տար Տիգրանի սեղանի վրա դիր...

Բուրաստանը կատարեց նրա այս խնդիրն ել, և ավելի շփոթված ու տարակուսած մնաց, քան առաջ:

— Սա ի՞նչ բան ե, աման... մարդ ու կնիկ հիմա ել իրար հետ նամակո՞վ են գրվելու,—մտածում եր Բուրաստանը, զգալով, վոր ինչ-վոր վատ բան ե պատահել կամ, ինչպես ինքն եր ասում հետո, «սև կատու յե» անցել ամուսինների արանքով: Ու զարմանալի հետաքրքրվում եր, թե տեսնես Աննան ի՞նչ ե գրել այդ նամակում: Նրա հետաքրքրությունը բորբոքված եր այն աստիճան, վոր յեթե գրագետ լիներ—կբանար՝ կկարդար...

Յերեկոյան Տիգրանն յեկավ սովորականի պես ուշ, այն ժամանակ, յերբ յերեխաներն ու Բուրաստանը քնել եյին արդեն: Գրասեղանի վրա նամակ տեսնելով՝ անմիջապես բացեց ու սկսեց կարդալ:

«Տիգրան.

«Օ...

—..., այս բոլորից հետո, վորքան իրավունք ունեմ քեզ նամակ գրելու, բայց այնքա՛ն անհարմար եմ զգում ինձ, այնքան վատ, վոր չեմ կարող իմ ապրումների մասին քեզ հետ խոսել մի այլ կերպ, քան նամակով:

«Չեմ յերկարի: Ինձ հետաքրքրում ե միայն մի բան, մի խնդիր—թե այս բոլորից հետո կարո՞ղ ես ներել ինձ և կարո՞ղ եմ յես այսուհետև մնալ այս տանը, թե վոչ: Կուզեյի ինձ պատասխանես միայն մի բառով—«այո» կամ «վոչ»:

ԱՆՆԱ»:

Տիգրանը նամակը դրեց սեղանին ու սկսեց գնալ-գալ սենյակի յերկայնքով. ապա մոտեցավ լուսամուտին և բաց արավ փեղկերը: Դուրսը թեթև քամի կար և լրիվ լուսին: Համատարած կաթնագույն լույսերի մեջ եյին թե դեղնոտ անտառը հեռվում, թե՛ մերկ դաշտը և թե նիրհող քաղաքը, վորի ընդհանուր դորշության մեջ, նրա գաճաճ, կիսակույր տների արանքում բարձրանում եյին նոր սպիտակ տների կորպուսները՝ լուսավառ լուսամուտներով: Քամուց ծառերը տարուբերվում եյին, ասես յերազում, իսկ բարձր սպիտակ տները, թվում եր, լողում են լուսնի պաղպաջուն լույսերի մեջ...

Տիգրանը նայում էր քաղաքին, նայում էր իր կառուցած տներին, նայում էր ինքնամփոփ մի նայվածքով ու հանկերգի պես կրկնում մտքում.—«այո» թե «ոչ»...

Կրկնեց նա այդ խոսքերը մի քանի անգամ, կրկնեց տարբեր ձևերով և ապա՝ շուռ յեկավ հանկարծ ու քայ- [illegible] ու Աննայի սենյակը: [illegible] մոնեւով. ասաց [illegible] լերն ուղղեց դ[illegible]

— Այո, Աննա,—ասավ նա, [illegible] հաստ և վորոշ:

Բայց խեղույն էլ այդ մի հատիկ բառը նրան թվաց չափազանց չոր, չափազանց պաշտոնական. ուստի, քիչ հետո, ավելացրեց ավելի հանդարտ.

— Յես քեզ համարում եմ առաջվա Աննան...

Աննան, վոր այդ ժամանակ նստած էր յերեխաների մահճակալների արանքում, լսեց նրան աչքերը հառած, կին և ապա, յերբ Տիգրանն ավարտել էր ասելիքը, գլուխը բարձրացրեց ու ձեռը մեկնեց նրան:

— Ուրեմն... ներո՞ւմ ես և... խոստանում մոռանա՞լ...

— Ավելի լավ է մոռանաս ինքդ...

Լռություն:

— Բայց մոռանալու համար ինձ գործ է հարկավոր, աշխատանք...

— Այդ կլինի ուղածդ որը...

Տաս որ հետո, յերբ քաղաքի ամառողները, դրանց թվում և Միրյանը, և Ռոզան ամուսնու հետ, մեկնել եյին արդեն, Աննան դասեր վերցրեց քաղաքի լիկկայաններից մեկում և սկսեց պարապել հասակավոր բանվորների ու ծառայողների հետ:

Նույն այդ ժամանակ Յերևանից յեկավ այն յերիտասարդ ճարտարապետը, վոր այնպես խիստ քննադատեց քաղաքի նախագիծը ու փոփոխություն պահանջեց: Նա տեղում, Տիգրանի հետ միասին կատարեց հարկավոր փոփոխությունը և յերբ վերջացրեց, ի միջի այլոց, ասաց.

— Հիմա արդեն կարող եք ձեր սպիտակ քաղաքը կառուցել... Յեվ նա կլինի ա՛յն, ինչ ուզում եք դուք և մենք բոլորս...

1929 թ. աշուն.
Յերևան

Սրբագրեց Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հանձնված է արտադրության 7 հուլիսի 1932 թ.
Ստորագրված է տպելու 29 հուլիսի 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0335619

ԳԻՆԸ 1 Ռ. 80 ԿՈՊ.

30139

СТ. ЗОРЯН

БЕЛЫЙ ГОРОД

Госиздат ССР Армении
Эривань—1932